

809

003

G-25

# ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՎԲ

ԵՒ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՍԿԷԴԱՐՆ

ԳՐԱՍԻՐԱԿԱՆ ՓՈՐՁ ՇՈՒՐՋ ՆՈՐԱ ՎԱՐՈՒՅ ԵՒ

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐՈՅ ԳԻՒՏԻՆ



Դարք բոլորին գլխատակամ,  
Յաստուածութիւն խառնի համբան.  
Հովամաման մըմա երկինք,  
Իմքն հովանի երկրին իւրոյ.  
Եւ գերեզմանքը սուրբ բագինք  
Հայրենական ստեղանց սիրոյ.

Աւել. — Հայրենի էջ 7



ՎԵՆԵՏԻԿ — ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐ

1914

003  
-25

ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՎԲ

ԵՒ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՍԿԷԴԱՐՆ

03  
25

BRIS JUL 0

14 JUN 2005

# ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՎԲ

ԵՒ


## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՍԿԷԴԱՐՆ

ԳՐԱՍԻՐԱԿԱՆ ՓՈՐՁ ՇՈՒՐՋ ՆՈՐԱ ՎԱՐՈՒՅ ԵՒ

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐՈՑ ԳԻՒՏԻՆ

*Գր. Կ. Քաբրեյի վրա - Չափազանց*

Դարը բոլորին գլխատակամ,  
Յաստուածութիւն խառնի համբաւն.  
Հովանանան նրմա երկիմք,  
Ինքն հովանի երկրին իւրոյ.  
Եւ գերեզմանքն սուրբ ըագիմք  
Հայրենական ստեղանց սիրոյ.  
Աւել. — Հայրունի էջ 7




ՎԵՆԵՏԻԿ — ՍՈՒՐԲ ԳԱԶԱՐ

1914

003 | 168-40  
 2-26 Սուրբ Մեսրոպ  
 և հայապատանի  
 ուղեգրայն

Մ Ս 11-5774	2011-8		



168  
40

Ա Ջ Դ

Ս. Մեսրոպյան վարույց պատմությունն մենք գրած էինք 1904 թվականին, երբ մեր յարգելի հանգուցեալ բարեկամն Քր. Խալաթեանց այդ մասին մրցանակի յայտարարութիւնն արաւ: Նկատելով դորձս թերի փափաքելի կատարելութենէն, զանց արինք տպագրութեան տարւ: Պատեհաւ մի երկու տարի առաջ կարգացուեցաւ փանացս ձեմարանական համախմբութեան մէջ, և հետաքրքրական գատուեցաւ. սակայն գոհ չլինելով ինքնին մեր շարագրածէն, սակաւին մուացութեան մէջ պիտի մնար, եթէ Քրոց գիւտի Յոբելեանն չզարթուցանէր ամեն հայի սրտի մէջ նիրհեալ գաղափարներն, որով գնահատել և դրուատել կամեցաւ համայն ազգն իւր Մեծ Զաւակը: Այս գրասիրական փորձն գրելու համար մենք այլ իւր կենսագրի հետ միայնացանք մեր խորհրդանոցի մէջ, իբր մուացութեան տարով այդ մասին ցարգ եղած հրատարակութիւնը, պահելով միայն այն յիշողութիւններ զոր ամբարած էինք Հ. Զարբանալեանի «Հին Մատենագրութիւն Հայոց» գատակիրքն ուսած ժամանակէն: Փորձեցինք անկախ յայլոց ուսումնասիրել մի միայն Ե. դարու ժամանակակից հաւնարուած երեք պատմագիրներու ասածներն, և պատկերացնել իրերն որպէս թէ բնականապէս պատահած լինէին: Մեզ թուի որ նոր բան արած չենք. այլ ամեն հայ բանասէր այնպէս արած է կամ պիտի անէ, եթէ կամենայ ամփոփուել հայ կեանքի և հայ մթնոլորտի մէջ: Ուստի զարմանալի թող չթուի որ մենք փոքր մի տարբեր շաւիղով գնացեր ենք սփորական եղանակէն, յորում երբեմն երևակայութեան թուիչքն աւելի ծաւալ աւեր է:

Այբուբենի ուսումնասիրութիւնն առանձին գլխով պէտք էր զբաղուել, որ աւելի լեզուագիտութեան կը վերաբերի. մենք չկարողացանք մեզէն անկախ պատճառներու համար հին ձեռագիրներու նմուշներ նմանահանութեամբ պատկերացնել, այլ ընդհանուր գաղափար տարու համար գրուած են գրերու մէկ երկու օրինակներ, այլ և այլ գպրութիւններէ բաղուած և յերիւրած

գրերու տարբերութիւնն զանազաներու համար: Եւ որովհետև լատինական աղբիւր մի մատնանշած ենք, և Հռուփանոսի լատին գրչութեան հրաշնայի արուեստով կերպածևած գրերն՝ բնական է որ լատին նկարագիրն պահելով և անոնց ընտրութիւնն անելով, աւելի շուտ լատին այբուբենի կարգաւ կը դասաւորէին գրերն քան թէ կլասիկ յունարէնի, որուն պաշտպաններն շատ եղած են: Մեսրոփը և Հռուփանոս ձիգ թափեր են հայկական հնչումներն լրացնել, ինչ որ չէր կարողացել անել Պլատոս ճարտասանն, որով ոչ Գանիէլեան անյայտ և ոչ յայտնի յունարէն այբուբեն աշակերտն հիմք կազմեր են Մեսրոփեան այբուբենին, որոյ համար ասուած է նորոգ և սրանկելի. որոյ կցեր են նաև բարեփոխած Փ և Ք լատին գաղութներու յունարէնէ առնուած տառերն: Եթէ պատեհ համարուի առնել երկրորդ ապագրութիւն, մեր գիտեցած և գիտուելք թերութիւնք ըստ կարի կը լրացուին հանդերձ ժամանակագրութեամբ:

Հ. Գ. Վ. Ն.

# ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՎԲ

Ե Ի

## Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Ո Ս Կ Է Դ Ա Ր Ն

Ա Յ Ն մեծ մարդու վարքը, որուն ճակատագրուած էր մտքի և գրչի աշխարհակալութեամբ՝ կերպարանափոխել Սաքանագեան ազգին և Հայաստան աշխարհի ոգին և սիրտն, և ապահովել նորա կեանքն ժամանակի հարուածներու դէմ, պահպանել նորա գոյութիւնն ապագայ դարերում, գրած է Կորին, Մեծ Ուսուցչի կրտսերագոյն աշակերտն էր ինչ մին, զոր Ղազար կոչէ «այր ցանկալի»: Կորեան հակիրճ պատմութեան մէջ ամփոփուած է ութսուն և թերևս աւելի ձիգ տարիներու բեղմնաւոր և ստեղծագործ կեանք մի: Այդ կենսագրականն յոյժ համոռու կ'անցնի Սրբոյն ծննդէնէն՝ մինչև աշխարհէ հրաժարիլն. նորա քաղաքական պատկերն ուրուագծուած է մի քանի բառերու մէջ<sup>1</sup>: Իսկ համեմատաբար աւելի երկար կը զբաղի նորա հոգևոր և առանձնական կեանքի, զրոյց գիւտի և անոր տարածման գործողութեանց նկարագրութիւններով:

Թէպէտ և այս մասամբ ևս, կարելի է ասել, որ շատ փափաքելու բաներ անտեսուած են. վաթսունէն աւելի երկարողի, ուշիմ և փափկաձայն աշակերտներէն դեռ աւելին կարելի էր յուսալ. բայց ի զոր, տակաւին երկար դարերու մթութեան ըօղն կու ծածկէ սքանչելի մարդուն վառարանն, ուստի ծագեցաւ մեզի «Նորոգատուր աստուածեղէն շնորհ և լուսաւոր վարգապետութիւն և հրեշտակարար կրօնիցն առաքինութիւն»<sup>2</sup>: Մեր առաջադրած ուսումնասիրութեան մէջ չենք ծրարած Կորեան ամբողջական պատմութիւնն ըննութեան ենթարկել, այլ մեր բանախօսութեան նիւթ վերցուցեր ենք միայն սկզբի հինգ կամ վեց տողերն, յորում յիշատակուին Մաշտոցի գաւառն՝ Տարօն, գիւղն՝ Հացեկաց, և հօր անունն՝ Վարդան<sup>3</sup>:

1. Իր որդի առն երանելոյ վարդան կոչեցելոյ... Կոր. էջ 6.  
 2. Տեղեկացեալ և հմուտ եղեալ աշխարհական կարգաց, ցանկալի եղեալ զինուորական արուեստին իւրոց զօրականացն... Անդ.  
 3. Կորին... Անդ.  
 4. Ան զոր ի նախակարգ բանիս նշանակեմք վասն որոյ փոյթ արարեալ մեր պատմելոյ, էր Մաշտոց անուն, ի Տարօնական գաւառէն ի Հացեկաց գեղջէ, որդի առն երանելոյ վարդան կոչեցելոյ: Անդ.

Այս թանկագին բառերու առաջնորդութեամբ, տալով մի նոր լուսարանութիւն, պիտի փորձենք նշոյլ մի սփռել թանձրամած խաւարի մէջ, և ցուցանել եթէ հնար լինի, պատմական աղբերաց օգնութեամբ Ս. Մեսրոպբայ տոհմի ծագումն և Տանուտէրական պատին: Ուստի մեզ նպատակ դրած եմք ապացուցանել թէ Ս. Մեսրոպբայ պատկանում է Հայկեան շրջանի մեծ նախարարական ցեղի, թէ նորա տոհմը ազգակից էր Արշակունի թագաւորաց, և մերձաւոր արեւակից Ս. Սահակայ, թէ Հացեկաց գիւղն սեփականութիւն էր Վահակունեաց տոհմին, ուստի էր հարձն՝ որ ըստ Բուզանդայ՝ ծնաւ որդի մի Վրիկ անուն, մօր կողմէն թոռն Տիրան թագաւորին, և թէ այս Վրիկ նոյն է Վարդանայ հետ, որ սեփականատէր էր կարճագատաց (կամ Հարճագատաց) գիւղին և հայր Ս. Մեսրոպբայ:

Արդարև գործ դժուարին և անհաւատալի, քան սաւանակի մը կամ ջրասուզակի գիւտն, և չենք տածեր անքան յանդգնութիւն ոչ յանչափս յօդ բարձրանալու և ոչ ի խորս մխրճելու, այլ հաստատուն գետնի վրայ նստած պիտի փորձենք երկու ամուլ քարեր իրարու շփել, գուցէ կայծ մի ցայտէ և նշոյլ արձակէ այն բազմադարեան խաւարի մէջ, որ կը ծածկէ այդ գաղափարական հորիզոնն<sup>1</sup>:

Իբրև աղբիւր վարուց Մեսրոպբայ, յիշուած է նաև Սուրբ Երեմիայի «Պատմութիւն վասն սրբոյն Սահակայ Հայրապետին և Մեսրոպբայ Վարդապետին»: Սակայն հարևանցի մի ազնարկ բաւական է հասկանալու այդ ճառագրութեան արժէքն առաջարկեալ հարցի մէջ: Համաձայնեալով այլ բանասիրաց կարծեաց, նաև ըստ մեր տկար տեսութեան, ոչ մի պատմական կարեորութիւն չունի և ոչ համեմատելի կորեան պատմութեան հետ, թող թէ նորան վերագրել: Յետին դարերու գործ է, մի ներթողեան յերկրուած մեր չորս պատմիչներու գործերուց:

Միջին դարերու գրիչ լինելն՝ երեմիական ոճէն յայտնի է, աւել բանաց և արշաւանքներու դարու մարդ է, ինչպէս են մեր Էթ-Պարբերու ողբերգակ պատմիչներն: Սա ևս անկախ իշխանութեան և ինքնազուլի Աթուոյ գաղափարն կորուսած, սրտառուչ յիշատակաւ Միածնաէջ կաթողիկէին, աչքերն դէպ ի Սիոնն կը դարձունէ, այն Սիոնն զոր ողբային Սաղիմայ որդիքն բարեւաջուց գետեգերքներու վրայ:

Եթեմներորդ դարուն մէջ Հայոց Սիոնն եղաւ Քարուղաշտի Զուարթնոց Եկեղեցին<sup>2</sup>, որ հայ մտքի մէջ հաւասար էր Սողոմոնեան Տաճարին, մանաւանդ աւելի իմն գերազանց:

Հուսկ ուրեմն ամեն տարակոյս կը փարատի, ի նկատի առնելով որ կորեան «Մաշտոց» կոչումն չունի, այլ իւր յատուկ «Մեսրոպբայ»:

1. Կանխեմ ասել որ մի զոհացուցիչ եղբակացութեան զուլու համար, ուշ գարձուցիցն նաև մեր երկու նոյն ժամանակի պատմիչներու զրածններու վերայ, Վազար Փարպեցույն և Մովսէսի Խորենացույն, որք զօրագործար այնքան բան կ'ասեն, ինչ որ զրած է կորիւն: Երկուքի տարբերութիւնն յայտն է որ, Փարպեցին հետեւած է կորիւնին պահելով Մաշտոց անունն, ի բաց առեալ Սահակին վերագրածն և Խորենացու ներմուծուած զլինն, իսկ Խորենացին մանրամասնութեանց մէջ թեթև շեղումներ ունի, և որ դիտելին է, անտես արած Մաշտոց կոչումն, անոր տեղ գործածուած է Մեսրոպ (կամ Մեսրոպբայ): մենք այս վերջին ձևն նախընտիր կը համարինք: Անշուշտ սա ունենալու է իւր իրաւացի պատճառք, զոր յետոյ պիտի տեսնենք:

2. Հաւանորէն կառուցուած էր Անախոբայ մէջ Կոստանդիանոսի շինել տուած կաթողիկէին կամ մի այլ Հռոմէական շիրմի (Mausolee) հետեւողութեամբ:

և ապա նոյն ինքն կ'ուղարկէ զընթերցողն առ կորիւն<sup>1</sup>, « Կատարեալ պատմութիւնն » զայն կոչելով:

Ուզած ենք օգտուել նաև Զենոբ Գլակէն: Որքան և մեր ողբացեալ վաղեմի բարեկամն Գր. Խալաթեան զայս յետին դարերու գործ ցոյց տուաւ, սակայն մեզ համար խմբագրութիւնն չէ կարեւոր, այլ խմբագրուածն, որոյ հում նիւթերն կանուխէն կային ցիր և ցան Գլակայ Վանքի և այլ վանորէից Ծովոց և այլն, փոշոտ դիւաններու մէջ և իններորդ դարու կամ աւելի ուշ խմբագրողն, չմտաբերելով Ի. դարու քննադատները, համեմբ է իւր խմբագրութիւնն նաև յետին դարու յիշատակարաններով, որով հեղինակութիւնն նուագած:

Ենք հետաքրքրողն նախապէս ժամանակագրական կարգն չէ, այլ ժամանակագրուածն, իրն և պատմութիւնն, որ կայ և խօսի. անձանութիւն ոչ ոք ցանկայ, եղած է մի պատմութիւն որ և գրուած է. սակայն պէտք չէ փիլիսոփայէ մեզի եթէ իւր տեղը չգտնենք. ինչպէս մի հոյակապ շինութեան բեկորներ որոնք ազուցուած են մի յետագայ շինութեան մէջ, որոց ուսումնասիրութեամբ կարելի է վերականգնել հինն, առանց խախտելու կամ արհամարհելու նոր շինուածքն:

Այսչափ են մեր անդրանիկ պատմագիրքը, որք չափազանց աղքատ են Մեսրոպբայ կենսագրականին նկատմամբ. և եթէ աւանդաբար տրուած շրջանակի մէջ մնանք, ոչ մի նորութիւն, ոչ մի լուսարանութիւն չենք կարող տալ ընթերցասիրաց, վասն զի անլուծանելի կը մնան այն հարցերն որք Ս. Մեսրոպբայ անձնաւորութեան շուրջն կը բոլորին, թէ ուստի էր ծագումն, ինչ ազգից և որպիսի շրջանի մէջ ապրած ի մանկութենէն, մինչև նորա երևալը Հայաստանի բեմի վրայ իբրև Ուսուցող Հայոց ազգին:

Ս. Մեսրոպբայ նախնիքն գտնելու համար, հարկ համարիմ շօշափել փոքու իւրք Հայ ազգի ծագումն:

Արևելասիրաց պատմական հետազոտութիւնը ապացուցած են որ նախապատմական ժամանակներ Արևելքէն մի գաղթականութեան հոսանք անցաւ տարածուեցաւ, մինչև Եւրոպայի արևմտեան սահմաններն<sup>2</sup>:

Սոյն գաղթականութեանց միջոց առանձին ընտանիքներ հաստատուեցան նաև Հայաստանի մէջ: Այս արիական գաղութն, իւր թողած երկրի նմանը գտնելով նոր գաղթավայրում, վերջնոյս սարերն և գետերն տարբեր անունով չպիտի կոչէր, այլ այն ինչ որ սիրելի էր իւր սրտին՝ Մասիսն, Արարատն, Արագածն, Երասիսն, Արածանին և Տիգրիսն և զաւանդներն, Տոսրն, Տուրուբերան, Տարօնն և Այրարատեան աշխարհն: Եւ բերէին իրենց հետ նաև պաշտած աստուածն, Արևն և նորա պաշտամունքն. Վահագն՝ կեանք և լոյս, Դեմետր՝ երկրագործութիւն և ոյժ, Գիսանէս բժշկութիւն և բնագիտութիւն, միով բանիւ Մոզաց գիտութիւնն, վարդապետութիւնն և կրօնքն, հաստատելով յԱրմաւիր, յԱշտի-

1. Այսպիսիք էին վարք երանելիացն, Ս. Սահակայ և Մեծին Մեսրոպբայ, և այսպիսի քաղաքավարութիւն նոցա, մանաւանդ թէ և առաւել քան զսոյն զոր գրեալ է (կորիւն) ի Կատարեալ պատմութեան նորա (Սոփ. հտ. Ա. 37):

2. Կայ միւս ևս կարծիք ոչ անհաւանական, արևմտեան կողմէն մի գաղթականութիւն մտեր է Հայաստան այլևայլ անուն տակ, Թրակեան, Փոբուգեան կամ Հաթիան կոչուած:

շատ, Բագարան և յԱնի ևն: Ս. Գիրքն իբրև հնագոյն պատմական յիշատակարան, Եգիպտական ամենայն գիտաբանաց վարժուած Մովսէսի գրչէն ելած, կը հաւաստէ այս արեւելից եկած գաղթականութեանց որք հաստատուեցան Հայաստանի մէջ<sup>1</sup>: Համաձայն արտաքին և Ս. Գրոց պատմածներուն, ունի նաև մեր Պատմահայրն Խորենացի գրած արեւելքէն եկած գաղթականութեանց մասին, յառաջ քան Հայկայ գալուստն<sup>2</sup>: Ուստի՞ գտեր է մեր ձերունին 15 դար առաջ իւր պատմութեան աղբիւրն, յեղեօխ<sup>3</sup> թէ յԱղեքսանդրիա՝ Բազմավիպէն իբր Համայնագիտական մի մասեանէ, և որոյ պատմուածքն ինքն կը հաստատէ իւր ժամանակի անգիր զրոյցներով, որ աւանդաբար անցեր էին բերնէ բերան, սերունդէ սերունդ, ամեն մի նախարարական ցեղի, տոհմի և տան մէջ:

Խորենացու յարգն ըստ ինքեան պէտք էր արժանապէս գնահատուիլ, երբ մեր օրեր բեկուազրոց ընթերցումն ամբողջական պատմութեան ձևով սկսաւ նկարագրել հարաւէն նախապատմական ժողովրդեան մը յառաջ խաղացումն Հայաստանի հողի վրայ, գրեթէ բառացի նոյնութեամբ, ինչ որ արդէն գրած է Խորենացի, որով Հայկ և իւր սերունդն մեկնելով Բարեւոնէ, Տիգրիսի ուղղութեամբ, Մղերդի գետափէն և ձորերէն բարձրանալով՝ Բաղիշու մօտով կ'իջնէ Տարօն և անտի ի Հարբ՝ թողով ի հարաւ զՏարօն: Հայկ և իւր յաջորդներն խաղաղ տիրապետութեամբ բնիկներու վերայ կը տարածուին հաւասարապէս ղէպ ի վան, մինչև ի Կապադովկիա և Կովկասու սարերու ստորոտներն: Բայ ի թագաւորաց անուններէ, որոշ կերպով կը տեսնուի որ բեկուագէտը միշտ աչքերնին Խորենացու վրայ պահեր են աշխարհագրական տեղերու անուններ ընթերցած ժամանակ, և քայլ առ քայլ հետևում են Խորենացու գծած շաւղին: Որքան և փոքր լինի Խորենացու սփռած լոյսն, սակայն չի կորցնէր իւր նշանակութիւնն:

Այսպէս ուրեմն նախապատմական շրջանին պատկանող բնիկներն, որոնք կարող էին պարծիլ իբր անմիջական սերունդ և պայագատներ Նոյի կամ Քսիսութրայ, գրեթէ ամբողջովին զրուեցին զԲուն Հայաստանը: Այդ բնիկներն երեք զլիսաւոր կեդրոն բռնած էին. Այրարատեան, Բարձր Հայք և Տուրուբերան աշխարհներն: Նախապատիւ էր Այրարատեան Տունն, Երկրորդ տեղին ունէր Բարձր Հայոց Անգեղ Տունն, Երրորդն Տուրուբերանի՝ Աշտիշատու տան ցեղապետն, և երեքն ի միասին Մեծ Հայք կոչուեցան<sup>4</sup>: Նոյ եղաւ առաջին քրմապետն և զոհագործողն, որով իւր որդիք ժառանգեցին այդ պաշտօնն և մի քանի կեդրոններում հաստատած էին իրանց մեհենատեղիքն յԱրմաւիր, ի Բագարան, յԱնի և ի Տարօն՝ յԱշտիշատ:

1. Ամենեքեան սոքա որդիք յԵկտանայ և եղև բնակութիւնն նոցա ի Մասեաց մինչև ի գալ Մովսէսի լեռան Արեւելեայց (Մենդ. Ժ. 30): Եւ էր ամենայն երկիր լեզու մի և բարբառ մի ամենեցուն: Եւ եղև ի խաղալն նոցա յարեւելից՝ գտին դաշտ մի յերկրին Աննաար և բնակեցան անդ (Մենդ. Ժ. Ա. 1, 2):  
 2. Հայկ... յիշի և աստանոր պատմութիւնս հարաւոյ կողմանէ դաշտն այսորիկ առ երկայ նանտիւ միով լեռամբ բնակեալ յառաջագոյն արք սակաւք՝ ինքնակամ հնագանդղկ զիցցազլինն Սողարացուցանէ և այս գասացեալ զրոյցս անգիրս:  
 3. Այս սեղմունն չի բացասեր մնացած աշխարհներն:

Արարատեան գաղութն գերիշխանութիւն բանեցուց միւս տների վրայ և համարուեցաւ Կեդրոն ազգային իշխանութեան և միութեան. ուստի Ասորեստանի միապետներու դէմ մղուած կռիւներու մէջ՝ միագրւխապետ կը ներկայանայ Այրարատեան աշխարհի իշխանն, որու պարտութեամբ Հայաստան կը դառնայ մի նուաճուած երկիր:

Եւ որքան մեծ է Խորենացու հրճուանքն երբ մեր Պարոյր Նախարարն վարբակէսի օգնութեամբ, թօթափելով Քաղդէացուց լուծն, անկախ իշխանութիւն մի կը հաստատէ Հայաստանի մէջ<sup>1</sup>:

Պարոյրի յաջորդներն իբրև հարկատու թագաւորներ պայագատեցին մինչև ցՏիգրան Մեծն, որ Կիւրոսի շնորհիւ՝ թուի անկախ իշխանութիւն մը ձեռք բերած. նորա օրով երջանիկ եղած է Հայաստան երկիր. Տիգրանը Հայոց Սողոմոնն եղած է: Սա կը թողու երեք որդիք, Բար, Տիրան, Վահագն: Անուններ որոնք նախնաբար դիցարանութեան պատկանած են և առարկայ եղած կրօնական պաշտամանց, իբրև Արևի մարմնացումն. յետոյ նաև քրմերու անուններ՝ իբր Արևի պաշտաման նուիրուածներ:

Վահագն քաջագոյնն և ուժեղագոյնն եղբարց մէջ կը յափշտակէ թագաւորական և քրմական<sup>2</sup> գաւազանն իւր եղբայրներէն, բնաջինջ անելով իւր եղբայրների սերունդն, որոյ համար և կոչուած է Վիշապաքաղ<sup>3</sup>, այսինքն թագաւորագարմի սատակիչ:

Վահագն իւր ցեղին սեփականելով թագաւորական և քրմական բարձրագոյն պատիւներն՝ նշանակեց իւր որդիքը իբր քրմապետ զլիսաւոր մեհենատեղեաց վրայ. Բագատ (կամ Բագարատ) Անգեղ տան յԱնի, իսկ Վահէն Տոսպայ և Տուրուբերանի և Տարօնոյ Աշտիշատու մեհենատեղեաց, կրելով միանգամայն թագաւորական թագն, որով Աշտիշատն թագաւորաց Հայոց կրօնական պաշտամանց կեդրոն դարձաւ, նսեմացնելով Արմաւիրի և Բագարանի մեհենաներն: Վահէ՞ Գարեհի պարտութենէ յետոյ, կ'ինկնայ Մակեդոնական իշխանութեան ներքև, կորցնելով անկախ թագաւորի թագն և գաւազանն:

Մակեդոնական տիրապետութեան շրջանի մէջ, Հայ իշխաններ իբրև Կուսակալներ կառավարեցին գերկիր, որոնք պատկանելով այլ և այլ նախարարական տներու, կը ջանային ապահովել իրենց տան համար իշխանական տիրապետութիւնն, որով Հայաստան շարունակ շփոթից և խռովութեան մէջ էր<sup>4</sup>: Բայց տարակոյս չկայ որ առանձին կերպով հալածուած էին թագակապ իշխանագուծնք Այրարատեան Նախարարութեան, և ազդեցիկներ փախստական գնացեր էին Պարթև թագաւորաց արքունիքն, ուր ապաստան կը գտնէին իբրև առ իւրեանց ցեղակից և կրօնակից Նախապատմական ժամանակներուց:

1. Եւ այժմ ահա զուարճացայ ոչ փոքր ինչ կրելով ինդութիւն, հասանելով ի տեղիս մերում իսկ բնիկ նախնոյն, յորում սերունդք թագաւորութեան հասանն յաստիճան (Խոր. Ա. ԻԱ. 99):  
 2. Քուր-Մական (?) Սուրբ գաւազան քահանայական կամ աստուածպետական. թէ ոչ հրաշագործ, այլ նոյնքան զօրաւոր որպէս Մովսէսինն:  
 3. Յետ որոյ և ընդ վիշապաց ասէին յերգն կուռեւ նմա և յաղթել... Խոր. գիրք Ա. ԳԼ ԼԱ. Ագաթ. էջ 606:  
 4. Յայտնեալ մինչև ցթագաւորութիւն Վաղարշակայ ի Հայս՝ ոչինչ ճշմարտագոյն ունիմ պատմել թեզ. քանզի շփոթ իմն ամբոխից լեալ, այր գարամբ ելանէին տրեւ աշխարհիս. (Խոր. Ա. ԼԱ. 127):

Խորենացու միջին խօսքերու մէջ դեռ կարելի է բաւական բացորոշ կերպով նշմարել որ Վաղարշակ յառաջ քան Մեծին Արշակայ նշկահումն և պատերազմն ընդդէմ Մակեդոնացոց, ծառայութեան մէջ էր արդէն ի դրան արքունի՝, անշուշտ իբր թագակիր իշխան Հայկազուն զարմէ: Սա տեղեակ լինելով Արշակայ աշխարհակալական խորհուրդներուն, ուզած է օգտուիլ, խոստանալով իւր և իւրայոց աջակցութիւնն ի մարտի ընդդէմ Մակեդոնացոց, պայման դնելով անշուշտ Հայաստանի թագաւորութեան վերականգնումն: Վաղարշակ՝ Բագարատ իշխանի հետ, որ թերեւս կուսակալութեան պաշտօնով կը տիրէր մի մասին Հայոց, «ի ծայրս հայերէն խօսից», համախորհուրդ եղած է ապստամբութեանն և զհայս անցնելու ի կողմն Պարթևաց: Արշակ Մեծն վարբակէսի խորագրութեամբ թագ կապէ Վաղարշակին և իրեն սերտ սիրոյն նշան, և եղբայրութեան Պատիւով՝ փոխէ անունն ի Վաղարշակ (Բահլ-Արշակ) խառնելով իբր յիւր ազգակցութիւն: Իսկ Բագարատին՝ իշխանին Անգեղ Տան, խոստանան կարգել Առաջին իշխան Հայոց և Մալխազ՝ և ընդ նմին տան թագադիր Ասպետ լինելու աստիճանն և պատիւն՝: այնպիսի արտօնութեամբ որ ոչ ոք Արշակունի՝ օրինաւոր թագաւոր համարուի առանց ազգին Բագրատունեաց:

Այսպիսի պայմանագրութիւն եղած լինելու է Արշակայ արքունիքում, որով տուած է իւր իշխանութեամբն ոյժ և հաստատութիւն երկու իշխաններու մէջ կուած դաշինն. ապա թէ ոչ անհասկանալի կը մնայ թէ ինչպէս Վաղարշակ քան զիւր իշխանութիւնն աւելի բարձր իրաւունք և իշխանութիւն կրնար շնորհել Բագրատունի Ասպետին, այսինքն առանց անոր հաւանութեան օրինաւոր թագաւոր չճանչցուիլ Հայոց՝:

Եթէ Այրարատեան Արշակունիք, չլինէին Հայկական զարմէ և ի նախնեաց որդոց որդի տիրապետող և ապա թագակիր իշխաններ Հայաստանի, յառաջ քան Մակեդոնացոց տիրապետութիւնն, մեր չորրորդ

1. Գրանգի այս Բագարատ նախանունն ընծայ ըստ կամաց մատոյց զինքն Վաղարշակայ, յառաջ քան զպատերազմն Արշակայ ընդ Մակեդոնացիս և սա ի դրան արքունի՝ իսկ ի ծայրս Գ. Գրանգի կու տանք որ այս պարբերութիւնը իբր փակագծի | մէջ ասուած ծանօթութիւն թիւն ի մէջ աշխարհիս » ի կայն. որ ճշգրիտ Բագրատունեաց յանձնուած էր Արշակունի թագաւորներէն: « Սա » չի կարող վերաբերիլ առ Բագարատ քանզի Վաղարշակի կոխ սկսած ժամանակ նա դեռ Մակեդոնացոց իշխանութեան տակն էր: Ամբողջական իմաստն կը պահանջէ « և » որ ուղղել « էր »:

2. Վասն բնութեան եզրայրութեամբ ազգատոհմին... քան ընդ տէրութիւն իւրեանց ազգատոհմին և կըրայրութեամբն (Ազգթ. էջ 31-32) որպէս թէ ըստ մտաց Հոմէրական ազգայնագրելոց, որք նոյն իշխանի ազգատոհմի անուամբ կը կոչուէին - Այսպէս նաև Հայկազունի իշխանն կը կոչուի Արշակունի: Արշակունի կոչումն յատկապէս չի նշանակեր նաև ցեղի մը արեւնակցութիւնն, այլ իբր մակդիր մը որ կարելի է երբեմն զեղջել կամ ընդարձակել: Այս մտքով Ս. Սահակ Հրապատ Կամարականի որդւոյ համար միջնորդելով Վասն կը խնդրէ, եթէ չկամին արշակունի անունը տալ, գտնէ միւս նախարարներու կարգն անցնի: « Եւ միւս եւ զի զարձուցէ գտուն ազգականին իմոյ և քո, զմանկանն Գագարունի զորդոյն Հրապատայ թէ և ոչ յիւրում եանդ, զարշակումն յաշխարհիւ մտնու, զէթ ի կարգ ընկեցեալ՝ ընդ այլ նախարարսն թուեցի » (Խոր. զէրթ Գ. ԳԼ. ԿԵ.): Նոյնպէս Արտաշէր Պարսիկ մեր Արտաշէս վերջոյն անունն ևս կը փոխէ յԱրտաշէր իբրև սիրոյ նշան (Խորենացի Անդ.):

3. Թոյր այս բառ ի զենսէ Մալ-Խիզանի իբր Տուն աղջկանց (?) կամ Ներքինապետ. Մարդպետ:

4. Ըստ ձեռագիր պատմիկին Գահնամակի Ս. Սահակայ:

5. Ար թագաւորն թագակապն լեւոյ էին ի Բմմէ, ազգին թագաւորութեանն Արշակունեաց: (Բազ. Կոպ. Ե. ԳԼ. ԽԴ):

և հինգերորդ դարու պատմագիրք, ամեն մի արշակունի յիշելիս, չէին ասեր - Բնիկ, յնակ, ի յուն, ի յեմե և այլն տերակց, արակց Տանն Արշակունեաց: Վերջին կոչումովս թագաւորական պատուոյ հետ կ'իմանային նաև ի զարմից հայկազանց լինելն, նա մանաւանդ որ Խորենացի յիշելով յառաջագոյն բնակուած լինելը Հայաստանի, Հայկայ համար կը գրէ. « Բնիկն մերոյ նախնոյն Հայկայ »:

Նմանապէս Վաղարշակայ արտաքոյ կարգի ուղարկութիւնն առ Բագրատունիս, կը յայտնէ նախ այդ ցեղի ունեցած ոյժն և հեղինակութիւնն երկրի մէջ, երկրորդ ազգակցական կապն՝ որով Բագարատ, մինչ Վաղարշակ Արշակայ մեծի արքունիքումն էր, յառաջ քան ապստամբութիւնն, կը կանխէ յառաջագոյն անձնատուր կը լինի թագաւորեցնելու զՎաղարշակ որ թագաւորական տան ուղիղ գծից իջած էր՝:

Այսպէս ուրեմն Խորենացու Պատմութիւնն առած յանգիր Զրոյցներէ, և յերգոց Վիպասանաց և ի Թուելեաց՝ և յազգային դիւանաց, ուր՝ ասէ Պատմահայրն « ամբաւ զրուցաց գոն մատեանք » որպէս և հատակոտորք Անանուն գրքին, կու գան հաստատելու Արշակունեաց, Բագրատունեաց և Վահունեաց մի և նոյն արմատէն բղխած երեք մեծամեծ ճիւղեր լինելը, որոնք ուղիղ գծով կ'իջնեն Վահագնի որդիքներէց, սորա իրանց մէջ բաժանեցին արքայական թագն, Քրմական մականն և Հայրութիւն, այսինքն թագակապ ասպետութիւնն՝:

Վաղարշակ՝ Բագարատ իշխանի աջակցութեամբ վերականգնելով հայկական թագաւորութիւնը, բնական է որ առաջին մտածութիւնն պիտի լինէր թագաւորութեան զերկիրն և վերանորոգել առաջին կարգերն՝ որոնք խախտած էին Մակեդոնական տիրապետութեան ժամանակ: Բաբեկարգութեանց սկիզբն եղաւ Նախարարական տներու իրենց բնական կարգին վերածնելն, որ յարձ կոչուէր, երբ ըստ աւագութեան և ազնուութեան թագաւորի տաճարին մէջ բազմէին իւրաքանչիւրն յիւր տեղին կամ ի բարձին: Կը տեսնենք որ նախապատուութիւնն կը ստանան այն աներն որոնք ուղղակի Հայկայ սերունդ ճանաչուած են, որպէս Բագրատունին, Սիսակեանն, Խորխոտունին, Մանաւագեանն, (Մուրացանն) և այլն. բայց Վաղարշակին մերձաւորագոյն էին Վահագնի սերունդէն իջած աներն: Սորա ոչ միայն Աւագ կոչուած Նախարարներու կարգն կը մտնեն, այլ Վաղարշակ աւելի իմն ուզելով պատուել զիւր ազգակիցներն, անոնց կը պարգևէ Քրմապետութիւնն՝, և անուն կոչէ Վահունիս:

1. Արեւելի իմն ասէ պատմագիրն թէ ի յուր տեղիս գտան բնակեալ ի մարդկանէ յերկրս մերում ցան և ցեր սակար յառաջ քան զպալուստ բնիկն մերոյ նախնոյն Հայկայ. (Խոր. Ա. ԺԲ. 62):

2. Եւ զկոչեցեալն Բագարատ... վասն յառաջագոյն անձնատուր ձեռնապատկան առ թագաւոր... զյառաջանացեալ Տանուտէրական պատիւն ազգին պարգեկելով: (Խոր. Բ. 156):

3. Զրոյց - Legendes - Երգ վիպասանական Poeme Epique - Երգ Թուելեաց Poésie Didactique.

4. Այսուհետև մեզի դիւրին պիտի լինի հասկանալ այն ծածկեալ պատճառն, որով Քրմատունեական շրջանի մէջ թագաւորական Տունն և Վահանայապետական համապատի համարուած էին և սերտ կապով միացած և նոր իմաստութեամբ կ'ամբողջուէին զայն:

5. Բայց յորդոցն Վահագնի գտեալ արս, որք ինքնակամ ինդրեցին զմեզներէց պաշտամունս, պատուէ մեծապէս, ի ձեռն մոցա տալով զքրմութիւնն, և կարգէ ընդ առաջին Նախարարութիւնն. (Խոր. Բ. ԳԼ. Բ. 172):

\* \* \*

Վահունիք նախապատմական ժամանակներուց սեփականներ էին իրենց Տարօնոյ գաւառն: Ըստ Պատմահօրն մեր բնիկ նախարարական ցեղէն Վահագնի որդիք ժառանգեցին Տարօնը, և հաստատեցին իրենց կրօնական պաշտամանց կեդրոնն յԱշտիշատ. և այն մեհեանքն և տեղիքն սեփականութիւն էին թագաւորացն Հայոց<sup>1</sup>: Վահագն իջեր էր յերկնից և անցեր էր ի շարս աստուածոց և ունէր իւր պաշտամունքն Աշտիշատու մէջ: Արտաշէս Ա. բարեացակամ առ իւր ազգայինս, Հերակլի քաջագործութիւնը նմանացնելով իրենց Վահագնին, Երակլի պատկերն կը զրկէ ի Հայս, որպէս զի յաշտից տեղիս զրուի: Սակայն Տիգրանի կեղծ ցասումն ընդ յառաջադիմութիւն և ազդեցութիւն Վահունեաց ազգին, բաւական եղաւ, Վաղարշակէն մեծապէս պատուած քրտմակաւս պաշտօնով, ընկենուլ Վահունիքը իրենց Տանուտրակաւ Պատուէն և Քրմութենէն և անոնց սեփական գիւղն Աշտիշատն զբաւել յարքունիս<sup>2</sup>. Ինչո՞ւ. որովհետեւ համարձակեր էին ինքնազուլս Երակլի պատկերն, իբրև իրենց Վահագնին, կանգնել յաշտից տեղիս: Սակայն իսկական պատճառն այլ էր:

Արշակունի թագաւորներու երակներու մէջ, իբրև Վահագնի սերունդ, հաւասարապէս քրմական արիւնն ծնունդէ ծնունդ կ'անցնէր յաջորդաբար: Տիգրանի աշխարհակալական յաջողութիւնը ծնուցին նորա մտքի մէջ միապետական տենջն, և այդ գաղափարին համեմուտ համար, հարկ համարեցաւ միացնել իւր անձի վրայ թագաւորականի հետ նաև Քրմապետական մականն, ըստ օրինակի Հռովմէական կայսերաց: Ուստի Տիգրան թագաւորութեան սկիզբէն իբր իւր կրօնասիրութեան ապացոյց «առաջին գործ զմեհեանսն շինել կամեցաւ<sup>3</sup>»: Կապաղովկիայէն եկած քրմներն, չուզելով վիրաւորել իրենց ազգայիններն, ըղձութիւն պատճառեցին, և բերուած անդրիքը իրենց ուզած մեհեանտեղիքն զետեղեցին յԱնի, ի Թիլ, և յԵրիզա: Իսկ Վահունիք չկասկածելով իրենց ազգակցի բարեացակամութեան վրայ, զոր վայելէին իւր Վաղարշակի և Արտաշէսի ժամանակ, զոհ գնացին Տիգրանի նախանձուն և ազգակործան ատելութեան. որով ոչ միայն ստացուած քնին զբաւուցեցան յարքունիս այլ և կորուսին Տանուտրական պատին կամ բարձն, և ինկան փոքր կամ կրտսեր նախարարութեանց կարգն. որը վայելէին միայն ազնուականութեան մենաշնորհն, աւելի իբր տիտղոս մը քան իրաւունք և իշխանութիւն. ուստի յայնմհետէ Վահունեաց Աշտիշատու տունն անպաշտօն

1. Ապա հրաման տայր (Խորրով)... յեւթն բազինս մեհենիցն ուխտաւոր լինել պատկերակոց զինցն պաշտաման: Սպիտակ ցլուք և սպիտակ նոխագօր... զիւր ազգին արշակունեաց գէտ իննեացն պաշտամանց տեղիսն մեծարէր... Ազաթ. էջ 33-34. (Արմաւիր-Բագարան, Անի, Թիլ Թորդան, Երէզ, Բագայառինջ) Թող գայս եօթն՝ էր մի ուրիշ Աթեթորդ՝ Յաշտից տեղիքն: Ե իբրև եկն հէտս ի Սահմանս Հայոց, լուա Գրիգորիս Թէ Վահագնի համար մեհեանսն մնացեալ յերկրին Տարօնոյ... ութնորով պաշտօն հուգեալ, անուանեալն վիշապաբազն Վահագնի, յաշտից տեղիք (Աշտիշատն) թագաւորացն Հայոց Մեծաց: Ազաթ. էջ 606:

2. Յասուցեալ ընդ վահունիս, Թէ ընդէր յերեանց սեփականին իշխեցին կանգնել զպատկերն Երակլի, առաքեալ ի նորին հօրէ, ընկենու զնոսս ի քրմութենէն և զգիւղն յարքունի տունու, յորում պատկերքն կանգնեցան» (Խոր. Բ. Ժ. 188).

3. Խոր. Բ. Ժ. 188.

տօն պիտի կոչուէին «Կարճագատը», հազուադիւս բառ մը որ շատ խորհուրդներ կը բովանդակէ իւր մէջ<sup>1</sup>:

Արշակունի թագաւորներ սիրեցին զքրմութիւնն և ուզեցին զուզել իրենց տան և ազգի վերայ: Երուանդ արշակունին իւր տանը աւելի փայլ մը տալու համար, հնաւանդ Արմաւիրն անշքացնելով, Բագարան կը հիմնէ և հոն իւր եղբայրն Երուազ քրմապետ կը կարգէ: Երուանդ այս տեղափոխութեամբ ուզեց հարուածել ուղիղ զծով իջած բնիկ հայկական հարստութիւնն և ընդհակառակն ընտելացնել իւր տան հետ Հայոց ժողովուրդն, որ սիրահար իւր վաղնջական տօնախմբութեանց, աշխարհօրէն բազմութեամբ կը թափէին ուխտագնացութեամբ զլիւաւոր մեհեանտեղիքն<sup>2</sup>:

Իսկ Արտաշէս Բ. զեռ աւելի առաջ կ'երթայ: Երուանդին յաղթելով և Երուազին սպաննելով, ասոր յաջորդ կը կարգէ իւր ընտանի կամ ազգակիցներէն մին, Մոզպաշտե<sup>3</sup> տիտղոս մ' ևս աւելցնելով վրան, ըստ օրինակի Հռովմէական Pontifex Maximusի. որ Հռովմէական կրթութեան հետեանք մ'էր, լինելով մին անշուշտ այն թագաւորաց զուներէն որոնք կամ իբրև պատանդ, և կամ յօժարակամ կը զրկուէին Հռովմ քաղաքակրթութեւն, ինչպէս շատ անգամ կը յիշատակէ Տաւրաոս իր Տարեգրութեանց մէջ<sup>4</sup>: Այս չափով չբաւականանալով, արքունական գաւառներու զլիւաւոր մեհեանտեղոյն վրայ, որ էր Անի, քրմապետ կ'անուանէ զիւր որդին Մաժան: Ոչ միայն Անի, այլև Թիլ, Երիզայ և Բագայառինջ կամ Բագաւան, Մաժանի իրաւասութեան տակն էին, ուր ըստ Հռովմէական ճոխութեան թաղուած էր դամբաւունի մէջ: Տիգրան Գ. իւր եղբոր և քրմապետի շիրմին վրայ կը կանգնէ բազին<sup>5</sup>, (Սրբավայր), և այսպէս զեղբայրն ի կարգս աստուածոց կ'ամբառնայ, ինչպէս արած էին Հռովմէական կայսերք սկսեալ Ազգուտուպէն որուն զանազան բազիններ կանգնեցին Սպանիոյ, Գաղղոյ և Փոքր Ասիոյ քաղաքներէն ոմանք:

Ապա Վաղարշ նոյն տեղոյ մէջ, Հայոց Նոր տարւոյ սկիզբն կարգեց տօն աշխարհախումբ ի մուսս Նաւասարդին, որ էր սիրելի և աւանդական տօն մի Հայաստան աշխարհի. աշխարհախումբ բազմութիւնն

1. Տիգրան նոյնպիսի անթութեամբ վարուեցաւ նաև Մուրացան ազգի հետ, զոր Վաղարշակ կողմնակալ կարգեր էր «զեզերը հայկական խօսից» Արտակեան և Աղաման աներու սահմանակից՝ հանելով յերկրորդական գահն, Մեզ չի թուիր որ սոքա Մարաց կամ Մեղաց ազգն լինէին. այլ իրենց զինանշանի պատճառաւ կոչուած են Մարաց Տէր, Վիշապազունք՝ սոք ընդդէմ կրուած է Վահագն, ինչպէս ասացինք, իբրև իրեն ազգակցաց և թագաւորազարմից: Նոյն աւրինն է որ կը սողայ Տեգրանայ երակներուն մէջ. սոքա անշուշտ Վահունեաց իրաւագրութեան պաշտպան կալով իրենք ևս զոհ գնացեր են անոր փառասիրութեան: Նոյն բանն կրկնուած է նաև Արտաշէս Բի ժամանակ, Արտաւազդի զրգուութեամբ և Սաթինկայ հրապուրանքով:

2. Բայց Երուանդ շինեալ զքաղաքն իւր, և փոխեալ անոր զամենայն ինչ յԱրմաւիրայ ուրոյն ի կոտցն... զի մի ի գաւն և զոհել անդ աշխարհի, ոչ զզուլութեամբ պահեցի քաղաքն (Խոր. Բ. Խ.):

3. Եւ ի տեղի նորա ի վերայ բազնացն (Բագարանի) կացուցանէ զլիւտամի Արտաշէսի, աշակերտ մոզի ուրումն երազահանի, որ սոյն սակս և Մոզպաշտէ անուն կարդային (Խոր. Բ. Խ.):

4. Տակաոսոս-Տարեգրութիւնը. զիբր Բ. զ. 2. զիբր Ժ. Բ. զ. 10, 11. — Brotier յուսուած. զիբր Ժ. Բ. — Garnier-Frères au Palais Royal 215.

5. Վերջին Տիգրանայ արքայի Հայոց պատուեալ զգերեզման եղբորն իւրոյ Մաժանայ քրմապետի ի Բագնացն աւանի, որ ի Բագրեանդ գաւառի, բազին ի վերայ գերեզմանին շինեալ զի ի զոհիցն ամենայն անցաւորը վայելեցնեն և ընդունիցին հիւրք երեկոթիւք: (Խոր. Բ. Կ.):

հիւրասիրութիւն գտնելով և զոհերէն վայելելով, ուխտաւորներն, եկող գնացողներ, գեղեցիկ տպաւորութեան տակ կը վերագառնային իրենց տներ. այսպէս այդ քրմաց և քրմապետաց համբաւն կը տարածուէր Հայաստանի չորս կողմերն<sup>1</sup>:

Տարակոյս չկայ որ խոսքով նոյնպէս շարունակեց կրել քրմութեան պատիւն, և ինքն է որ կը հրամայէ եօթն բազմիներու վրայ զոհեր մատուցուին աստուածոց շքեղ հանդիսաւորութեամբ, որ ճշգրտիւ կը յիշեցնէ հոովմէական յաղթանակներու և զոհագործութեանց տօնախմբութիւնքն<sup>2</sup>: Ինքն է որ նաև բաժին կը հանէ յաւարէն և մեծամեծ պարգևներ կը շնորհէ քուրմերուն, իբրև ենթապաշտօնէից<sup>3</sup>:

Խոսքովու եղերական մահուամբ գոզցես Արշակունեաց համար կորսուած էր արքայական թագն և քրմական մականն. սակայն Սասանեանն Արտաշիր, հակառակ մեր ակնկալութեան մարդասէր վարմունք մ'ունեցաւ Հայաստանի և Արշակունի տանը հետ, որով ուզեց քաւել գործուած եղեոն և հայր լինել աշխարհին: Խորենացի կը պատմէ որ Արտաշիր Պարսիկն գեղեցկապէս կարգի դրաւ Հայոց աշխարհքը և թագէն ու Այրարատի բնակութենէն զրկուած Արշակունիքն կը վերադարձնէ նոյն տեղերը, եկամուտ և ոտճիկ կը կապէ ինչպէս որ էր յառաջն, և մեհենից պաշտամունքն ևս աւելի կը ճոխացնէ. Բագաւանի մէջ Որմզդակն<sup>4</sup> հուրն կը հրամայէ անշէջ պահել: Անշուշտ անոր համար որ Մաժանի գերեզմանն հոն էր և վաղարշ աշխարհախումբ տօն հաստատեր էր իբր համապատասխան Պարսից կրօնքին:

Քրմական պաշտամունքն և պատիւն այնքան բնական դարձած էր Արշակունի ցեղին մէջ, որ Արտաշիր և ոչ վայրկեան մը կը վարանի իւր ոխերիմ թշնամիքը վերահաստատել իրենց նախկին տեղերն մտիւք և ոտճիօք: Ասով Արտաշիր ուզեց սիրաշահել զԱրշակունիս, անով ձգել առ ինքն զՀայս և ապահովել իւր տիրապետութիւնը Հայաստանի վրայ, և ամուր պարիսպ մը կանգել Հոովմէացոց դէմ, և չսխալեցաւ: Սեպտիմիոս Սեբրոսի և Խոսրովու պարտումէն յետոյ, Հայաստան մօտ քառասուն տարի մնաց Պարսից գերիշխանութեան տակ մինչև որ Գիոկղետիանոսի և Գաղերիոսի երկու բանակներն վերջնական յաղթութիւն տանելով, Գիոկղետիանոս զՀոովմայ պաշտպանեալն Տըրգատ, որդին Խոսրովու, Հայոց թագաւոր պսակեց: Տըրգատ սնած և մեծացած հոովմէական ոգևով, վեհապետական շքեղ պատիւներն իւր վրայ ամփոփելու և ոչ մի վայրկեան վարանած լինելու չէ: Հայրենի գահու հետ ժառանգեց նաև Քրմապետական պաշտօնն, և առաջին տա-

1. Կրքին շարունակուեցաւ քրիստոնէական շրջանի մէջ աւելի իմն շքեղութեամբ, նոր կրօնքի հիմնադիրներու ներկայութեամբը, որպէս յիշէ Բուզանդ, ուր հանդիպեցան իրարու Տըրգատ և Գրիգոր յետ ձեռնադրութեան դառնալով Կեսարիայէն:  
2. Այլաւ հրաման տայր . . . . . յեթն բազմես մեհենիցն ուխտաւոր լինել պատկերաց կոց դիցն պաշտաման. սպիտակ ցլուք և սպիտակ նոխազօք. . . . . ոսկեղէն և արծաթեղէն զարդօք է վերջաւորս փողփողեալս ևս յլն. . . . . (Աղաթ. էջ 33-34 վ. հնետիկ 1862):  
3. Կան հինգերորդ և հանէր յամենայն մեծամեծ աւարացն անկեց, և մեծամեծ պարգևս քրմացն շնորհէր: (Աղաթ. էջ 34) Անդ:  
4. Ի Մհրական մեհեանն անուանեալ որդւոյն Արամազդայ: Աղաթ. էջ 593. վ. հնետիկ 1862:

րիէն սկսած Անահայ մեհենատեղիք կը դեգերի զոհեր մատուցանելու<sup>1</sup>: Եւ ահա այդտեղ երևան կ'ելլէ Գրիգորի քրիստոնէութիւնն և կը սկսի ծագիլ Հայաստանի քրիստոնէութեան արշալոյսն:

\* \* \*

Գրիգոր Լուսաւորչի ազգաբանութեան մասին առաջին գրողն է Ագաթանգեղոս, յաջողակ քարտուղար Տըրգատայ, կը յիշէ զԱնակ հայրն և ապա եղբրական սպանումն Խոսրովի՝ Անակայ ձեռքով, սորա տոհմի ջնջումն և դայեկաց ձեռքով Գրիգորի գողացումն և ի կեսարիա փախուսան: Իսկ Խորենացին այսքանով չբաւականանալով, հարկ կը համարի երկար ցեղաբանութիւն մ'անել, որով Գրիգորի նախնիքն կը լինին Արշակունի զարմով<sup>2</sup>: Անակայ արշակունի լինին հաւաստի կարելի է համարել, բայց թէ նա եղած է Կահապետ Պարսկաստանի թագաւորոց ցեղին, որ Արշակ մեծէն կ'իջնէր մինչև Արտաւան Արշակունի, կը մնայ տարակուսական: Քանզի անիմանալի է թէ ինչո՞ւ մինչ Խոսրով, Արտաւանայ մահու վրէժն լուծելու համար, և վերստին ի գահ հանելու իւր «ազգակիցներն» հրաւէր կ'ուղարկէ Անակին և միւս երկու տուններուն միանալ իրեն հետ կռուելու Արտաշրի դէմ, մերժումն կը ստանայ, մինչ նոքա աւելի յարեալ են սրտի մտօք Սասանականի տէրութեան<sup>3</sup>: Իսկ քնդ հակառակն սիրով կ'ընդգրկէ Արտաշրի առաջարկն դաւով սպանանել Խոսրովը, անհամեմատ աւելի նուազ վարձատրութեան մը համար: Փոխանակ ամբողջական երկրի տիրապետութեան և թագաւորութեան, զոհ կը լինի վարձատրութեամբ երկրորդական գահին և սեփական գաւառին: Սակայն Անակ ըմբռնած լինելու էր որ ակնյայտնի և անվրէպ մահուան կը դիմէր, իւր ազգի և տոհմի բնաջինջ լինելուն ստուգութեամբ: Այսքան անմիտ եղած լինելու չէ, այնքան յանդուգն և վտանգաւոր գործի ձեռք զարնողն: Ինչո՞վ բացատրել այս մովթ պատմութիւնն: Մենք մեր առանձին տեսութիւնն բացատրելու համար, հարկ կը համարիմք վերագառնալ բնիկ հայկական Արշակունի տան պատմութեան և անոր առաջնորդութեամբ հետագօտել Անակի ծննդաբանութիւնն: Ասոր համար պէտք է վահունեաց ցեղի պատմութիւնը երկրորդել. խնդրոյ հանգոյցն անոր մէջ թաղուած է:

Վահագնի սերունդէն իջած վահունեաց տոհմն, որոց սեփականութիւնն էր Տարօն և քրմական պաշտօնն, սկսել էին այն դերը խաղալ Հայաստանի մէջ, ինչ որ ունեցան եգիպտական քրմերն, որք անվիճելի գերակշռութիւն մը ձեռք բերած էին երկրի քաղաքական վարչութեան մէջ: Հայաստանի ամենալաւ գաւառներն այդ ցեղի ժառան-

1. Յառաջին ամի Տըրգատայ արքայութեանն Հայոց մեծաց, խաղացին եկին հասին յԵկեղեց գաւառ, ի գեղն Երեզա, ի մեհեանն Անահայական, զի անդ զոհս մատուցեն: (Աղաթան, էջ 49):  
2. Յոր հրապուրեալ Անակայ, որ էր ի ցեղէն Սուրենեան Պահլաւ, յանձն անու սպանանել զԽոսրով: (Խոր. Բ. զԼ. 27):  
3. Չի թէպէտ և էր ինքն (Խոսրով) ի մեծի արամութեան վասն բնութեան եղբայրութեան ազգատոհմին, զի հնագանդեցան ի ծառայութիւն մտին համբարձելոյ թագաւորութեան Սասանացւոյն և ընդ նմին միամտեցան: (Աղաթ. 32. վ. հնետ. 1862):



գութիւնն էին և սեփականներ էին գլխաւոր ութ մեհենատեղիք, Ար- մաւիր, Աշտիշատ, Բագաւան, Երէզ և Անի ևայլն. ուր աշխարհախումբ տօներուն կը հաւաքուէր ստուար բազմութիւն ուխտաւորաց, որոնք կը օ- նական երկիրդածութեան և պատկառոտ հպատակութեան հետ, ի դարձին կը տանէին իրենց տներն Վահունեաց փառքի և իշխանութեան տպա- ւորութիւնը:

Նախկին Արշակունի թագաւորներ, ազգակցական զգացմունքներու թարմութեամբ, շատ համերաշխ ապրեցան քրմական դասակարգի հետ, և մեծ նշանակութիւն կու տային անոնց գործելակերպին: Կարեւոր դիրք մը կը ստանան երբ Արտաշէսի ժամանակ կոոց արձաններ բերում են Յունաստանէն. Վահունիք ըստ կամս անոնց տեղն և պաշտամունքը կը սահմանեն: Սակայն այդ պերճութիւնն և խրոխտանքը զրգոնց զՏիգրան միջին, պատրուակ բռնելով Հերակլի արձանը, որ Վահունիք նմանցնե- լով իրենց Վահագնին, կանգնել էին իրենց սեփական գիւղում, պաշ- տօնընկէց արաւ գիրենք, որի հետ ասացինք, կորուսին նաև Տանու- տէրական պատին, որով և գիւղերը յարքունիս գրաւեց Տիգրան:

Արդ մի մեծ Նախարարական թագադիր զարմէ տուն, այսպէս յա- նիրաւի ինկնալով իւր պատուէն և ստացուածքէն, կարճ էր հաշտ աչքով ինին: Յայտնի է եղբայրական թշնամութիւնն աւելի խիստ է իւր ազ- գականի հետ քան օտարին, ուստի երբէք Վահունեաց ցեղն կարճ էր մոռանալ այդ անարգանքն, ստորացումն, ազատ և տանուտէրական իշխանութենէն ինկնալն ի շարս սոսկականաց և ի հեճուկս կրել նա- խատական տիտղոս մը «կարճագատը»: Յարմար առթի կը սպասէին վրէժը հանելու և շատ չ'ուշացաւ: Հոովմէական և խոսրովու բա- նակներ բնաջինջ եղեր էին պարսկական կոուի մէջ, Արտաշէր յազ- թանակաւ կ'արշաւէ Հայաստան: Խոսրովու դիրքը այլ ևս խախտել էր, չէր այլ ևս այն հզօր թագաւորը, որ Ագաթանգեղոսի ասելով տասը ձիգ տարին Արտաշէրը մինչև Հնդկաստան փախուցեր էր. Հոով- մայեցիք և դաշնակից ազգեր թողեր էին զինքը մինակ. ուստի եթէ յաջողէր գնա բառնալ մէջտեղէն, անարգել կը տիրէր Հայաստանի, առանց մի կաթիլ արիւն թափելու. քանզի Արտաշէրի թշնամութիւնն Հայոց դէմ չէր՝ այլ Հոովմայեցուց. ուստի նպատակ դրած էր սիրով նուա- ճել զՀայս քան բռնութեամբ: Ահա այս պարագային Արշաւիր կարող եղաւ երկրորդական գահու և սեփական գաւառի խոստամամբ զբաւել ար- ինքն զԱնակ, կարճագատաց Նահապետն, և անով իբրև մերձաւորի խոսրովու՝ դաւաճանութեամբ յաջողուց սպանութիւնն և Հայաստան մտնելով, «գեղեցկապէս կը յարդարէ զայն»<sup>1</sup>:

Եթէ Անակ, ինչպէս կը պատմէ Ագաթանգեղոս, մի եկուր էր, նորա ազգատոհմն կոտորելու ժամանակ անկարելի էր ևրկու մակուռը<sup>2</sup> ազա- տել և փախուցանել մին Պարսկաստան, միւսն ի կողմանս Յունաց՝ Քանգի այսպիսի աղիտաւոր դէպքեր երբ հանդիպեր են Հայոց արքու-

1. Խոր. գիրք Բ. զ. Հէ.  
2. Խորենացի մի միայն տղայ յիշէ, զԳրեգոր. (Խոր. Բ. ՀԳ):

նիրում, կոտորածից մի կամ երկու մանուկ ազատողներն եղած են մեծամեծ Նախարարներ և սպարապետներ, ինչպէս կը պատմէ Բուզանդ<sup>3</sup>, և ոչ թէ դայիկներ, օտար և անծանօթ երկրի մէջ, թագաւորասպանի գաւակներ կարողանային փախուցանել և ազատել. գրչով կարելի բան է, բայց ոչ իրականութեամբ. անոր համար մեզ կը թուի որ Անակ Վահունեաց ցեղի մի Նահապետ եղած է, որ կանխաւ խոոված խոսրու- վէն գնացեր էր առ Արտաշէր, և ապա խոսրովու պարտութենէն յե- տոյ, նա կը խոստանայ Տիգրանէն յափշտակուած երկրորդական գահն, որ էր Քրմայեթութիւնն և իւր սեփական Տարօնն և Աշտիշատն վե- բարդարձնել, եթէ յաջողէր սպաննել զԽոսրով. զոր յանձն կ'առնու Անակ թէ՛ վրէժ լուծելու և թէ վերականգնելու իւր Տունն: Ագաթան- գեղոսի պատմածն այնքան մեզի անբնական եկած էր որ ի սկզբանէ կասկած յարուցեր էր թէ մի ինչ որ ևկոր անկարելի էր որ կարու- դանար դաւաճանել թագաւորին, եթէ Անակ մտերիմ ազգական եղած չլինէր խոսրովու, որ անկասկած և միայնակ կը մնայ թագաւորի մօտ: Եղիշէ մեր կարծիքն կը հաստատէ մինչ յիւր պատմութեան բացայայտ կերպով կը գրէ Տրդատայ համար, «որ ի տղայութեան փախուցեալ ի հայրասպան մարդախոշոշ հօրեղբարցն իւրոց՝ ապրեալ սնաւ յեր- կրից Յունաց»<sup>4</sup>:

ԶԳրիգոր փախցնելուն հակապատկեր կը ներկայացնէ խոսրովու տան կոտորածն և Տրդատայ փախցնելու պարագաններն. հոս մեծ նա- խարարներ կը գործեն և դիւրին էր նոցա անվտանգ իրենց թագաւորի ժառանգը ապրեցնել և տանել Հոովմէական կայսերաց արքունիքն, ուր վաղուց սովորութիւն ունէին Հայ թագաւորաց մանուկներ կամ իբրև պատանդ կամ դաստիարակութեան համար զրկուելու<sup>5</sup>:

Ահա երկու մանուկներ վիճակակից աղէտից մէջ, բայց բազաւոր ծննդեամբ. երկուքն ալ ազնուական արեւնէ բղխած, անծանօթ իրարուց կը սնանին և մեծնան, յունական կրթութեամբ կը զարգանան, մին զէնքի կը դիմէ, բնազդամբ իւր թագաւորական արեան, իսկ միւսն զրոց վարդապետութեան, նոյնպէս աւանդական ժառանգութեամբ: Տրդատ կոչուած է թագաւորելու, զօրաց զուլիս անցնելու. իսկ Գրիգոր քա- հանայազործելու, հովիւ լինելու ժողովրդեան: Գրիգոր անծանօթ չի մեծնար կեսարիոյ մէջ. Արտաշէրն փախստական նախարարազունք կան- անդ, որ մի օր մատն և տուր պիտի լինին առ Տրդատ Գրիգորի Ա- նակի որդին լինելու<sup>6</sup>: Սակայն Գրիգոր սնած աւետարանական վար- դապետութեամբ, վեհանձնարար կը գնայ առ Տրդատ քարոզելու ճշը- մարտութիւնը<sup>7</sup>, և իբրև Քրիստոսի պաշտօնեայ զինքը անոր ծառայութեան

1. Բուզանդ. Գար. Գ. զ. ԺԼ: Եւ Խոր. գիրք Գ. զ. ԼԲ. ևայլն:  
2. Եղիշէ. էջ 132:  
3. Որոյ (Տրդատ) հասեալ և կեսարիա յուրե ի նախարարացն ընդ առաջ լինէին. Եւ և- լեալ յաշխարհս, զտանէ զ(տայ) զի թէպէտ և ոչ ծանեալ զճշմարտութիւն յազգս Աստուծոյ, Անակայն զստութիւն կոոցն զիտաց, Նոյնպէս էր և սան նորա խոսրովիւրիսա. (Խոր. Բ. զ. 2Բ):  
4. Տաճատ իշխան Աշոցաց. սա էր որ յայայն զգացոյց աներոյն իւրոյ Արտաւազդայ... զԳրիգորի Անակայ լինել որդի... որպէս հմուտ եղեալ ի կեսարացուց քաղաքիմ բնա- կելով. (Խոր. Բ. զ. 2Բ):  
5. Բայց... Գրիգոր անցեալ գնաց առ Տրդատ զհայրենեացն հատուցանել պարտիս, կամ որպէս պարտ է տուել ճշմարտութեամբ՝ զստարեւութեան վիճակ մերոյ աշխարհիս և զքահանա- լութեանն հանգերձ մարտիրոսութեամբն վարժելով (Խոր. Բ. զ. 2):

կու տայ և հնազանդութեամբ կը ծառայէ անոր<sup>1</sup> յառաջ քան զթագաւորելը: Տրդատ տակաւին Գրիգորեանոսի բանակի մէջն արդէն իմացեր էր որ Գրիգոր ըրիստոնեայ էր<sup>2</sup>, զուցէ տարակուսանքով զիտէր և Անակայ որդի լինելը: Գրիգորի իսկութիւնն կը ստուգուի այն ատեն երբ Տրդատ իւր յաղթութեանց համար ի շնորհակալութիւն կը հրամայէ Գրիգորի զոհեր մատուցանել հայրենի աստուածներուն:

Տրդատ անշուշտ պատահաբար չի հրամայեր Գրիգորի այսպիսի մի մեծ պաշտօն և պատիւ, այլ իբրև վարձատրութիւն միամիտ ծառայութեանը և աշխատութեանը՝ որով զոհ արած էր զՏրդատ. սա ևս միտքը դրած լինելով զնա բարձրացնել (կեցուցանել<sup>3</sup>) կը կոչէ ըրմութեան պաշտօնին, որոց անկ էր պակներ և թաւ ոստեր ծառերուն տէր տալ Անահիտի պատկերին կամ քաջ Վահագնի արձանին: Գրիգոր կը հրաժարի այդ պատիւէն իբրև ըրիստոնեայ, չուզելով սուտ աստուածներու պաշտօնեայ լինել:

Ով զիտէ հնոց բարբերը, ներկայ պարագային մէջ դժուար է հաւատալ Ագաթանգեղոսի խօսքերուն որ Գրիգոր մի օտարական և աւել յախարհիկ մէկն եղած լինի, մինչև Տրդատ նախամեծար ընտրէր քան զքնիկ քուրմեր այն հոչակաւոր մեհենատեղեացն, որոնք ինչպէս ասացինք կանխաւ հայկազեան սերունդէն էին և ազգակից արշակունի ցեղին. ուստի երբ Տրդատ Գրիգորի կը յանձնէ զոհեր մատուցանել և պակ գնել կոոց գլուխը, կը նշանակէ որ Տրդատ համոզուած էր Գրիգորի ազնուական տոհմէ սերելուն, կամ թերևս իսկ իմացեր էր Վահագնեաց ցեղակից լինելուն, և կամաւոր «ըստ հեշտ պաշտաման» այսինքն՝ վասն յաշտից պաշտօն կատարելու համար մտեր էր Տրդատայ ծառայութեան մէջ: Մի կարևոր հանգամանք որ աւելի որոշ կերպով պիտի պարզով ըրիստոնեական շրջանի մէջ:

\*  
\*\*

Տրդատ աշխարհախումբ աւագանւով զԳրիգոր կը յուղարկէ ի կե սարիա ձեռնադրութեան համար: Բնական կարգ իրաց այնպէս կը պահանջէ որ նա ի դարձին առաջին հանդիպումն Տրդատայ հետ ունենար և ապա սկանէր իւր առաքելական քարոզութիւնն: Սակայն այնպէս չէ եղած. պատմութեան կարգն այլ է և մեզի կրկին խորհրդաձուլութեան նիւթ կը մատակարարէ: Ս. Գրիգոր ձեռնադրուելէն ետքը անմիջապէս կ'ուղևորուի դէպ ի Տարօն<sup>4</sup>, ուր էր հոչակաւոր Վահէ վահեան մեհենան, «յաշտից տեղիք թագաւորացն Հայոց մեծաց»: Նոյն յառաջ քան զձեռնադրութիւնն, Տրդատայ օգնութեամբ քանդել էր Հայոս

1. Գրիգորի... ել և զնաց առ Տրդատիս ըստ հեշտ պաշտաման. (Ագաթանգեղ. էջ 43).  
2. Իսկ իբրև զգացեալ Տրդատիս վասն Գրիգորի թէ ըրիստոսական պաշտամանն հարով է... (Ագաթ. էջ 43).  
3. Եւ ես զոհ էի զվատակոց քոց և ունիի ի մտի կեցուցանել զքեզ, (Ագաթ. էջ 50).  
4. Եւ իբրև եկն եկաւ ի սահման Հայոց, լուաւ Գրիգորիս թէ Վահէ վահեան մեհենան մնացեալ է յերկրին Տարօնոյ... (Ագաթ. էջ 600).

բոլոր բազիններն, և միայն մնացեր էր այս «ուլթերորդ պաշտօն հոչակեալ, անուանեալն Վիշապաքաղն Վահագնի»: Ինչո՞ւ արդեօք ակն առեր էին, առ երկիւղի՞ թէ վասն պատուի: Չենոր Գլակի պատմութենէն պէտք է կարծել որ առ երկիւղի ժամանակ մը յետաձգեր են ըրմաց ուժեղութեան և բազմութեան պատճառաւ, որոնք իրենց ոյժն ուզեցին փորձել նաև Ս. Վրթանէսի ժամանակ<sup>1</sup>: Սակայն հաւանական չէ այս ենթադրութիւնն. քանզի ինչպէս յետոյ ընկճուեցան արքունի բանակաւ, նոյնը մի տարով յառաջ ևս կարող էին կատարել. ուստի կը հետևի որ մի այլ խորհրդով և ծրագրով յետաձգուած էր այդ հրաչակաւոր մեհենի քանդումն:

Թէ Տրդատ և թէ Գրիգոր կամեցած են նոյն նախկին փայլին և վիճակի մէջ պահել զԱշտիշատն, ինչպէս եղած էր հեթանոսութեան դարաշրջանին. ուստի կամեցած են որ Նոր կրօնից հիմն կամ սկզբնաւորութիւնն անտի սկսի Աղղրանիկ Եկեղեցոյ հիմնարկութեամբ, որ առանց եպիսկոպոսական իշխանութեան կարելի չէր: Որով Գրիգոր Երզնկայէն անցնելով ի Սերաստիա և ապա ի Կեսարիա, աստի հարաւային գետափնեայ ճանապարհով, քերելով Արածանոյ եզերքը, անցնելով Քարբերդէն<sup>2</sup> իջեր է Տարօնոյ դաշտն: Հոն քանդելով Վահէ վահեան մեհենան և հիմնելով եկեղեցի, ուղղելով սեղան, իսկ և իսկ ըրմաց որդիքներէն<sup>3</sup> 12 հօգի եպիսկոպոս կը ձեռնադրէ որոց զխաւորի անունն է Ագրիանոս (Հոովմէական անուն մ'է Albino) որ հաւանական է թէ յառաջ ծանօթ եղած է Գրիգորի և Տրդատայ Կեսարիոյ մէջ, որով առ Կոստանդիանոս գնացած ժամանակ հետերնին կ'անուն<sup>4</sup>: Գրիգորի այս քայլն վերահաստատութիւն մ'էր քահանայապետական իշխանութեան իւր տան և ազգատոհմի մէջ, քրիստոսական կրօնից նախորտով զարդարուած. յաղթանակ մ'էր որ Վահագնեաց ցեղն կը տանէր Տիգրանայ անիբաւ յափըշտակութեան դէմ, և յետոյ պիտի տեսնենք որ իրենց կալուածոց հետ պիտի վերստանան նաև Տանուէրական պատիւն յորմէ ինկած էին կարճազատաց դասն: Գրիգոր ուզեց միանգամայն հասկացնել Հայաստան աշխարհին, որ թէ և ըստ տեւրեան Միածին Որդւոյն նշանակած տեղն լինելու է Աթոռանիստ Եկեղեցին Հայրապետացն Հայոց ըստ եկեղեցական Նուիրապետութեան և իրաւաբանութեան<sup>5</sup>, սակայն կամեցաւ որ իւր բնիկ նախնեաց սեփականավայրն առաջին եկեղեցոյ հիմնարկութեան նախապատուութիւնն վայելէ<sup>6</sup>, ինչպէս որ տեսանք հե-

1. Արդ որք միանգամ զնութիւն կապաշտութեան հեթանոսութեան գնոյն սովորութիւն մինչև ցայժմամ ունիին զաղտնի, ի մի միաբանութիւն ժողովաւը հասանէին իբրև հազարք երկու, խորհուրդ եղեալ ընդ միմեանս՝ սպանանել զքահանայապետն Աստուծոյ Վրթանէս: (Քուր. Գա. Գ. զԷ. Գ).  
2. Այժմու սիւսմամբ կոչուած Խարբերդ: Մեզ թուի սա լինել Խորենացու յիշածն ուր Վաղարշակ և Մորփիւղիկէս պատերազմով պատահեցան իբարու: «Բայց պատահեն միմեանց առ բարձրաւանդակի միտը ըլլով քարազագաթմիլ, որ այժմ ասի Կորոնիա»:  
3. Անոյր ընդ իւր զմեծ արքեպիսկոպոսն Գրիգոր և զնորուն սրդին զԱստակէս և զԵպիսկոպոսն Ագրիանոս, (Ագաթ. էջ 650).  
4. Այսպէս ի Հոովմ Մայր ամենայն եկեղեցեաց է Լատերանու եկեղեցին. զի նա է առաջին շինուած եկեղեցին Կոստանդիանոսի ձեռամբ. իսկ Վատիկանը կը մնայ Կեղոսն Եկեղեցական Նուիրապետութեան և վարչութեան:  
5. Չայնու ժամանակաւ երթեալ հասանէր Եզուս Վրթանէս ի մեծն յառաջին ի մայրն եկեղեցեացն Հայոց, որ էր յերկրին Տարօնու: (Քուր. Գա. Գ. զԷ. Գ).



ազնուականութիւնն և զինուորական վիճակն, և իրենց կին առին Տիրան թագաւորի քոյրերը, Պապայ կնոջ անունն էր Վարազդուխտ, իսկ Աթանազիսին՝ Բամբիշն: Ահա դա կը նշանակէ որ Գրիգոր ոչ էր «այր մի օտարական և անաշխարհիկ»<sup>1</sup> ինչպէս վկայարանութիւն զրոյն երևակայեր է. այլ այնքան բարձր ազնուականութեամբ՝ մինչև փեսայանալ թագաւորին, որ ենթադրել կու տայ թէ կամ արշակունի ցեղէ պէտք էր լինել կամ ուրիշ թագաւորի մը զարմ: Այս երկու ամուսնութիւնը հաւասարապէս երջանիկ չեղան: Պապ անորդի ելաւ աշխարհէ, իսկ Աթանազիսն ունեցաւ մի որդի միայն՝ Ներսէս անուն: Սակայն Բուզանդ կը յաւելու որ թէպէտ Պապայ բուն կնոջն զաւակ չմնաց, բայց նա ունէր մի հարձ Տարօս զաւառի Կարճագատաց Հացեաց գիւղէն, և Հացեացի հարձէն մնացեր է մի զաւակ, որի անունն Վրիկ կը կոչուէր<sup>2</sup>:

Բուզանդ տարօրինակ է իւր պատմագրութեան մէջ. նկատուած է որ նա ժամանակի մարդն է, ապրած է այն պատմութեանց մէջ զոր կը զրէ իբրև ականատես և գործող: Նա ուրեք ուրեք պատմաճնորդ մէջ այնպիսի սուր և խորհրդաւոր դիտողութիւններ և ակնարկներ կ'անէ, զոր չէ մարթ համարել թէ առանց պատճառի և նպատակի լինի. այդպիսի նկատողութեանց մին է Պապայ հարձի մասին տուած ծանօթութիւնն, որ ըստ ինքեան լուրջ մատենագրի համար ծիծաղելի էր յիշատակել մի աննպատակ դէպք, ինչպէս մի հարձից զաւակի մը ծնունդն. որքան հարձեր ծներ են զաւակներ և մնացեր են անյիշատակ, մոռացութիւնն ծածկել է հետախաղաղ. բայց ո՛չ Կարճագատաց Հացեաց գիւղի հարձինը: Բուզանդ ունեցեր է իւր մտքի մէջ մի խորհուրդ, մենք պէտք է զայն բացատրենք: Նախ յիշելը թէ Աթանազիսին մնաց մի արու զաւակ իւր Բամբիշն կնոջն, շատ հասկանալի է. վասն զի այդ զաւակն եղաւ Ս. Ներսէս «այր սքանչելի և զարմանալի» և մեր տոհմային պատմութեան ամենամեծ դէմքն, ուստի ծնողի և որդւոյ յիշատակութիւնն միմեանց փառքը կը յաւելուն: Իսկ ի՞նչ մեկնութիւն կարող ենք տալ Պապայ մասին բաւական խնամքով և մանրամասնօրէն գրուածին, որ իւր բուն կնոջն զաւակ չունեցաւ, բայց իբր յապօրինի(?) անկողնէ ունեցաւ մի զաւակ, հարձէ մը ծնած, որ Կարճագատաց գիւղէն էր և այդ տղայի անունն Վրիկ կոչուում էր:

Բուզանդ ակներև ունեցեր է աչքի առաջ մի հագուագիւտ դէպք այդ յիշատակութեան մէջ, և մնացած պատմութիւնն լուրթեամբ անցեր է, երկիւղ կրելով անշուշտ ստուեր մը ձգելու մի մարդու վրայ, որի ապագան այնքան մեծ, այնքան փայլուն պիտի լինէր, մինչև գերազանցել քան զամեն ժամանակակից առաքինիքն<sup>3</sup> և այդ մարդն էր Մեսրոպն «ի Տարօնական զաւառէ, ի Հացեաց գիւղէ, որդի առն Երանելոյ Վարդան կոչեցելոյ»<sup>4</sup>:

1. Ագաթ. էջ 50.

2. Բայց Պապայ ի բուն ի կնոջն ոչ մնաց, այլ էր նորա հարձ մի ի զաւառն Տարօնոյ, ի Հացեաց գիւղէ կարճագատացն. և մնաց որ ի հարձէ անտի ի Հացեացուոյն, որում անուն իւր որդւոյ հարձին Վրիկ կոչէր: (Բուզ. Գ. պ. Գ. զԼ. Ժ. Թ):

3. Խոր. գերք Գ. զԼ. Կ. Է.

4. Կորիւն էջ 6. վ. Կենեակի.

Գրիգոր Լուսաւորչի թոռներ, Աթանազիսն և Պապն, մի մի զաւակ ունեցան: Պապն, իր բուն կնոջ մահուանէն յետոյ անշուշտ՝ երկրորդ ամուսնութեամբ՝ Հացեացի հարձի հետ, կ'ունենայ զՎրիկն. իսկ Աթանազիսն՝ զՍ. Ներսէս: Գրեթէ մի և նոյն բնի մէջ ծնած և սնած ազնուազարմ մանուկներ, որքան տարբեր կերպարանքով կը ներկայացնէ մեզի ժամանակակից պատմութիւնն: Բուզանդին բառ կը պակսի գովելու և փառարանելու գ'երսէս, իսկ սորա հօրեղբոր որդին՝ հազիւ փախտական յիշատակութեամբ կը թողու մեզի, այն էլ մի տարակուսական մանկական անուն, ոչ միայն՝ այլ և աղճատուած, կարճատուած ասենք, Վրիկ, ըստ գիւղական կոչման: Խորհրդաւոր է Բուզանդ իր զրածններուն մէջ:

Տիրան թագաւոր տարակոյս չկայ որ արքայավայել խնամք ունեցած է իւր թոռները կրթելու, որոնք նախկին դաստիարակութիւնն Յովհանու Մարգարէանցի մէջ ընդունած են և ապա ուղարկուած ի Կեսարիա յուսումն յունարէն դպրութեան: Ներսէս իւր բովանդակ կենսագրութեամբ մի լուսաւոր կոթող է, որ կը նշողէ Հայաստանի ամեն կողմերն, մի հրաշալի արձիւ է որ թեատարած կը խոյանայ ի պաշտպանութիւն թագաւորական թագին, ազատաց և իրաւագուրկ շինականաց. Ներսէսի լոյսի մէջ ամեն որ խաւարեր է, իսկապէս Հայաստանի Տէրն է և Հայրն: Տակաւին մինչ աշխարհիկ կեանք վարէր, մտաւոր և հոգեկան ձիրքերով և մարմնոյ արութեամբ և վայելչութեամբ անհամեմատ էր, նմանը չունէր Նախարարներու մէջ, միտ դնելով այն գեղեցիկ նկարագրութեան զոր մեզ հասուցեր է Բուզանդ<sup>1</sup>: Բայց Վրիկի մասին ոչ մի բառ, ոչ մի զրոյց. զարմանալի է այդ լուրթիւնն:

Բայց մի բան դիտուած է որ Ներսէսի վարուց զրոյն եղած է մի ընտանի և ներքին մարդ, որ նորա հետ կարողացել է մտնել նաև թագաւորական տան սեմէն, ընտանեանալ ամեն նախարարական տներու հետ, որով այնքան մանրամասնօրէն կը նկարագրէ իւր ժամանակի մարդկանց, իշխանաց, թագաւորաց բարքն ու վարքն, հին և նոր սովորութիւնք, վարչական թերութիւնք և բարեմասնութիւնք կայլն: Ընդհանրապէս կարծուած է Փաւստոս ժամանակագիրն, որ անշուշտ այլ անձն լինելու է այն Փաւստոսն որ զՆերսէս սարկաւազ ձեռնադրեց. Բուզանդ զՓաւստոս Ծերուերի<sup>2</sup> կ'անուանէ: Սակայն զարմանալի է որ այդ Ծերուերի Եպիսկոպոսն է արդեօք Ս. Ներսիսի թագման ներկայ եղող, թէ այդ յիշատակութիւնն մի եկամուտ glossa համարելու է, քանի որ շարագրութեան կարգն այդ կը թելադրէ, ուր Փաւստոս և Տրդատ երկու «և» ով միջանկեալ են ընդ «Պաշտօնէից եկեղեցւոյն» «և Մուշեղ Սպարապետին», ասոնք բաւական էին հապճեպով սրբոյն մարմինը ու

1. Այլ ի ժամանակին յայնմիկ էր ի վարս զինուորութեան, ի զորձակալութեան, սիրելի սենեկապետ արքային Արշակայ, հաւատարիմ ի վերայ ամենայն կարգաց կենաց թագաւորութեան ի ներքոյ և արտաքոյ: Այր էր սա մեծ և բարձր ցանկալի հասակաւ և վայելուչ գեղով. զի ոչ զաւանէր ուրեք նման նմա գեղեցկութեանն ի վերայ երեսաց երկրի, տենչալի, ցանկալի, զարմանալի. և ահագին ամենայն նայեցող տեսողաց և նախանձելի յարութեան ի զինուորական կրթութեան. (Բուզ. Գ. պ. Գ. զԼ. Գ):

2. Եւ կոչեցին գծերունի կպիսկոպոսն՝ որում անուն էր Փաւստոս: (Բուզ. Գ. պ. Գ. զԼ. Գ. էջ 70):

ճրագործութեան վայրէն փոխադրել իւր սեփական գիւղն ի Թիւ. ուր հանդիսապէս կը կատարուի յուղարկաւորութիւնն ի գերեզման: Իսկ երրորդ Փաւստոս Եպիսկոպոս Չորթ Ներքինեոյ հետ աղքատանոցներու տեսչութեան պաշտօնով միշտ գաւառներ կը պտրտէր, և հազիւ թէ զբաղած լինի բողոքական կամ եկեղեցական խնդիրներով, որով մի այնպիսի բարդ և նուրբ պատմութիւն գրեթէ անկարելի էր գրել մէկի մը որ քայլ առ քայլ հետեւած չլինի թէ Ներսիսի և թէ ժամանակակից թագաւորաց գործերուն, հասարակական ոգւոյն և հոսանքին. և այդ միակ կարող և սրահայեաց մարդն մեզի կ'երևի Պապայ հարճորդին Վրիկ, որ իւր ծագումով և ուսմամբ ամենայամարն էր ևերքիւ մարդ լինելու և կարող հաւատարմութեամբ գրի առնուլ ինչ որ կը տեսնար աչքով և կը լսէր ախանջով: Ոչ ոք աւելի քան Վրիկն կրնար հիանալ, սքանչանալ Ներսէսով և ոչ այնքան դառնացած ոգւով կշտամբանք և յանդիմանութիւն և անէծք գրել Արշակունեաց տան, երբ Ս. Ներսէսի մահուանէն յետոյ Պապ առ նախանձու և ատելութեան կը ջնջէ ամե՛ նայն բարեկարգութիւն զոր արել էր և հաստատել Ս. Ներսէս իւր իշխանութեան տակ զտնուած գաւառներու մէջ, և այս ամենքի վերայ կը գրաւէ յարքունիս Եկեղեցւոյ հողերը, զոր տուած էր Տրդատ Ս. Գրիգորի: Մի օտարական յոյն ժամանակագիր չէր կարող այն իրաւացի ցաւն զգալ և ոչ այն անողորմ գրիչն զործածել, ինչպէս Վրիկ, իւր հօրեղբօր որդւոյ համար, որոյ մեծագործութիւն այնպէս խժոճարար առաթուր զարկաւ Պապ և զրկեց Եկեղեցին և եկեղեցականները իրենց հասոյթէն և համարձակութիւն տուաւ հեթանոսութեան և կռապաշտութեան հակողներուն յայտնապէս շատ տեղեր կոտց պատկերներ կանգնելու<sup>2</sup>:

Ի զուր թուի ջանալ պաշտպանել այն կարծիքն որ Բուզանդի գրիչն յոյն լինի ազգաւ, զի մատենագրի ոգին այդ կարծեաց դէմ կ'աղաղակէ. նա ամեն մի պատմուածքի մէջ հայկական նկարագիրն, ազգային զգացմունքներն կը ցոլացնէ կարմիր թելի նման, որ օտարի համար ոչ թէ շատ դժուար՝ այլ և անկարելի բան էր: Մինչդեռ Վրիկ ազգաւ և հայրենեօք հայ, նախանձաւոր իւր տոհմի և ազգի մեծութեան և փառաց սկսած Ս. Գրիգորէն մինչև Ներսէս՝ սքանչելի շրջանակի մէջ կը գնէ անոնց պատկերը. և զուգակշիռներու մէջ գերադաս քան զարշակունիս: Տեղեակ է նա ամենայն դիւանագիտական արուեստին, քաջ վարպետի մօտ աշխատեբ է, և այդ արուեստը, արքունի դպրութիւնը, թագաւորաց գործերը յիշատակագրել, պիտի աւանդէ Վրիկ իւր որդւոյն, զորոշմելով նախ անոր մատաղ սրտի մէջ Ներսիսի առաքինութիւնքն, իսկ մտաց մէջ արտաքին գիտութեանց հմտութիւնն. որով նա կորիւնէն կրկին տեսակաւ երանելի պիտի կոչուի, մին իւր առաքինի վարուց համար և միւսն Մեսրոպայ Հայր լինելուն:

1. Իսկ թագաւորն Հայոց Պապ... ոչ յագեցաւ մահուամբ նորա (Ս. Ներսէսի) այլ ջանայր այսպէս թէ զինչ միանգամ կարգը իցեն ուղղութեան ի Ներսիսէ եղեալ յեկեղեցւոջն, եղծեացէ և խանդարեացէ... Եհաստ ևս յարքունիս զհող եկեղեցւոյն, զոր տուեալ էր թագաւորին Տրդատայ... (Բուզ. Գպ. Ե. ԳԼ. ԼԱ):  
 2. Յետ ելեց նորա յաշխարհէս բազում գաւառք Հայոց և բազում մարդիկ ի հնութիւն զկռապաշտութեան դարձան, և ընդ բազում տեղիս Հայոց կուսս կանգնեցին ի համարձակութենէ թագաւորին Պապայ... (Բուզ. Գպ. Ե. ԳԼ. ԼԱ):

\* \* \*

Մեր ուսումնասիրութեան սկիզբն յայտարարեցինք որ նպատակ զրած ենք լուսարանելու կորեան տուած հակիրճ տեղեկութիւնը Մեսրոպայ մասին թէ «էր ի Տարօն գաւառէ, ի Հացեկաց գեղջէ որդի անն երանելոյ Վարդան կոչեցելոյ»:

Խօսեցանք բաւականօրէն Տարօն գաւառի և անոր բնատէրանց վրայ, ապացուցանելով որ Վահագնի ցեղէն էին և քրմական պաշտօնով և իշխանութեամբ ճոխացած:

Նկարագրեցինք Հացեկաց զբախտի տեղը և դիրքը, Աշտիշատու Մեհենատեղեաց մի մասը, որ գրաւեցաւ յարքունիս և բնակիչքն կորուսանելով Տանուտէրական պատիւն կոչուեցան կարճագատք: Արդ կը մնայ բացատրել և հաստատել թէ կորեան երանելի Վարդանը, ոչ այլ ոք է բայց եթէ Բուզանդի Վրիկն, որ կարճագատաց Հացեկաց զբախտի հարճէն ծնեբ էր, որդի Պապայ, որդւոյ Յուսկան, որդւոյ Վրթանիսի, որդւոյ Ս. Գրիգորի Լուսաւորչին: Զայս ապացուցանելու համար, հարկաւոր է բացատրել թէ ինչպէս Վրիկն կարելի է նոյնացնել Վարդանի հետ: Եթէ համոզիչ լինի մեր տուած լուսարանութիւնն, հարցն ինքնին իւր լուծումն պիտի ստանայ, քանզի Հացեկաց զբախտէն ուրիշ Վարդան ելած չէ, որոյ ժամանակն իսկ զուգրնթաց Ներսէսի հետ, զուգահաւասար Ս. Սահակայ ընծայած է Հայ ազգին իւր պանծալի զաւակն:

Ուրեմն մինչև այն համոզման զալու որ Վրիկն նոյն է Վարդան անուան հետ, ուշ դարձուցինք շատ մը հայկական անուանց վրայ, որոնք յիշուած են նոյն իսկ Բուզանդի մէջ և որ այժմ ժողովրդեան զործածութեան մէջ է: Այդ անուններէն շատն կը ճատուած են, աղճատուած են, և գրեթէ բնութենափոխ եղած են: Այդպիսի անուններ որ մեր միւս դասական մատենագրաց մօտ գեղեցիկ հնչիւն անուններ են, ընդհակառակն Բուզանդի մէջ բարբարոս ձայն մը ստացած են, շատ անգամ միավանկ և ձայնաւորները սղուած: Այս սովորութիւնը՝ մանաւանդ հայկական աւնուանց՝ մինչև ցարդ պահուած է առաւելապէս Քուրդ ազգի և Հայ ռամիկ ժողովրդեան մէջ. քրիստոնէական անուններն ևս նոյն ոճով կը ճատուած և սղուած են:

Օրինակներով բացատրեմ ասածներս.

ՀԱՅ ԴԱՍԱԿԱՆ ԱՆՈՒԱՆՔ	ՔՐԴԱԿԱՆ ԵՒ ՌԱՄԻԿ ՀՆՁՄՈՒՆՔՈՎ
Արիստակէս-Ռատակէս	== Ռատո կամ Ռատում
Մաշտոց	== Մատո
Բագարատ	== Բագո կամ Բգո
Տիգրան	== Տիգո
Խանդ	== Խգո
Վահրամ	== Վրամ
Հմայեակ	== Համօ կամ Հմօ կամ Ըմօ
Համագատայ	== Համգէ կամ Հմգէ կամ Հրմէ
Աւգա (Օտա)	== Աւգօ

Սլաք	=	Սլօ
Յուսիկ	=	Յուսօ
Սամուէլ, Շմուէլ	=	Սմօ կամ Շմօ
Սարգիս	=	Սգօ
Սաստուր (Սստուածաստուր?)	=	Սսօ
Դաւիթ	=	Դւօ
Սատոյ	=	Սատոյ
Մկրտիչ	=	Մկօ
Խաչատուր	=	Խեչօ կամ Խչօ
Կարապետ	=	Կրպօ
Կիրակոս	=	Կակօ
Վարդուհի կամ Վարդուն	=	Վաւօ
Կարապետ	=	Կարօ Կրպէ Կպօձ

Եւ այսպէս շատ անուններ ուրեմն նաև

Վարդանիկ	=	{ Վրիւ <sup>1</sup> Վրէն } Փարպ.
		{ Վրիկ Բուզ.

Վարդանէն—Վրիկ կամ փոխադարձ այլակերպութիւնն հաւաստելու համար, Վարդան անունն երկու ձևի տակ մեզի կը ներկայանայ. մին կորեան մէջ, յիշելով Ս. Սահակի թողը գլխարան, ասէ որ կոչուէր Վարդկան (թերևս ուղիղն Վարդկուն), այս տեղ արդէն կ'երևան կու գայ. իսկ երկրորդ վրթանէս, յունական ձևէն առած Վարդանէս. այսոր մէջն ունինք Ա կորուստն. որով Վարդանի փաղաքշականն Վրդանիկ կամ Վրթանիկը՝ ժողովրդի բերանը պիտի փոխուէր շատ բնականաբար Վրթիկ կամ Վրիկ, ինչպէս են վերոյիշեալները: Եթէ այսքանը բաւական չէ համոզելու, նոյն Բուզանդէն կը յիշենք մի այլ անուն, որ երկու ձևի մէջ անհաւատարի պիտի երևար նոյնութեան եթէ տարբեր պատմիչներ զայն չյիշատակէին: Կը խնդրուի նախ կարդալ Բուզանդի գրածն. «Սյրս այս խաղ<sup>2</sup>... ձեռասուն էր սա եպիսկոպոսապետին Ներսէսի... Եւ էին նորա երկու դստերը. և ետ գմինն Ասրկոյ ումեմն կին (ի զաւակէ Աղբիւնոսի և ազգակից խաղայ) և զկին աներոյն իւր, նա կալաւ զաթոռն խաղայ<sup>3</sup>»: Ապա խորենացու գրածն. «Բայց յերկրորդ ամին Սըշակայ եկաց յեպիսկոպոսապետութիւն Հայոց Ասպուրակէս ամս հինգ<sup>4</sup>»: Ո՞վ կարէ ասել որ Ասրկոյ և Ասպուրակէս մի և նոյն անունն

1. Նոյնպիսի անհասկանալի անուններն երևելի իշխանաց և նախարարական տներու որպէս. Ձոմն. Վորթ. Գորթ. Բատ և այլն:  
 2. խաղ ազգակից էր Աղբիւնոսի որ քրմաց ցեղէն էր և Հացեկաց գիւղէն. (Ազաթ. էջ 629-30).  
 3. Յետ մահուն Շահակայ եպիսկոպոսի եկաց զլուի եպիսկոպոսաց Ասպուրակ ոմն ի զաւակէ Աղբիւնոսի... (Բուզ. Գա. Գ. զլ. Գ. էջ 264 — զլ. ԺԵ. էջ 270).  
 4. (Խորենացի զեբք Գ. զլ. ԽԱ.) Ձարմանալի է և զիտելի որ Բուզանդ խաղայ դստերաց մին կը յիշէ որ Ասրկոյի հետ կ'ամուսնանայ, իսկ միւս դստեր համար կը լռէ, մինչ նա ևս երևելի նախարարական տան մը հարս գնացեր էր, Ապահունեաց ազգին: Դա ցոյց կու տայ խաղայ ցեղի բարձրութիւնն և ազնուականութիւնն: (Խորենացի զեբք Գ. զլ. ԼԲ):

լինին և սակայն մի և նոյն անձն է: Որով ասել է թէ Բուզանդ ժողովրդական ձևով գրած է Ասպուրակէսն՝ Ասրկօ կամ Ասրկոյ. կը հետևի ուրեմն նոյն օրինակաւ և Վարդանն, Վրդանիկն կամ Վրթանիկն ևս ըստ ընտանեկան կոչման գրած է Վրիկ<sup>1</sup>: Կարելի է դեռ դիտել տալ որ Վարդան անունը պատահաբար դրուած չէ հարձէն ծնած տղուն, այլ ինչպէս սովորութիւն է ամեն տան և տոհմի մէջ պապերի անունը թոռներին դնել, այսպէս Պապ իր ունեցած միակ որդոյ անունն կոչեր է Վրթանէս իւր հաւուն յիշատակն կենդանի պահելու համար: Ուստի պէտք է ընդունել որ Կորեան յիշած Հացեկացի Վարդանն, նոյն է Բուզանդի Վրիկի հետ, որով ստուգած կը լինինք Ս. Մեսրոպայ ծագումն: Յետոյ պիտի տեսնենք որ Մեսրոպը հարձի ծնունդ լինելու պատճառաւ եկեղեցական ձեռնադրութիւն չէ կարող ընդունել:

\* \* \*

Եթէ Բուզանդի մէջ որ և է յիշատակութիւն չենք գտներ Մեսրոպայ մասին, զարմանք չէ. վասն զի և ոչ Ս. Սահակայ յիշատակութիւն կայ, առիթ ունենալով հանդերձ որ մի տեղ հարեանցի կերպով յիշած է Ս. Ներսէսի համար թէ. «Սա լեալ էր ամուսնաւոր յաշխարհակեաց կեանս նախ յաստիս (յանտիս) մանկութեան<sup>2</sup>»:

Տարակոյս չկայ թէ ինչպէս Տիրան իւր թոռներն, երկու եղբոր որդիքը, Ներսէսն ու Վարդանն արքունի ծախքով հեռաւոր աշխարհներ ղրկեց կրթուելու համար. նոյնպէս հաւանական թուի թէ ըստ կարգին իրենք, Ներսէս և Վարդանն սնուցին և կրթեցին իրենց որդիքն զՍահակն ու զՄեսրոպն, ոչ միայն ի կեսարիա ղրկելով, ուր ըստ Բուզանդայ Ներսէս «ի տղայութենէ սնեալ և ուսեալ ի կեսարացոց քաղաքին Գամրաց ընդ հաւատարիմ վարդապետօք» այլ նաև ի Բիւզանդիոն, ուր առաւելագոյն գիտութեամբ հմտացան աստուածաբանական ուսմանց և յոյն լեզուի և գրականութեան<sup>3</sup>: Բայց ընտանեկան և քաղաքական կենաց մէջ ոչ ոք անշուշտ աւելի հաւատարիմ վարդապետ կարող էր լինել տաղանդաւոր երիտասարդներուն քան Ներսէս ինքն. որուն քաղաքական կենաց յամենայնի հետևող եղած է և բարւոյն նախանձախնդիր Մեսրոպը: Ինչպիսի տպաւորութիւն թողած է վրան, Ներսիսի ներկայութիւն այն ղրից և այն փառաց մէջ երբ նախանձելի էր «յարութեանն ի զինուորական կրթութեան»: Կը տեսնանք որ Մեսրոպը ևս նոյն շաւղով պիտի ընթանայ և թերևս մասամբ իմն յաղթահարուի ուշիմ աշակերտէն: Արդարև ինչ գովեստ որ Բուզանդ կը շոսյլէ Ներսէսի հասցէին «Նախանձելի յարութեանն ի զինուորական կրթութեան<sup>4</sup>». նոյնը առաւելուն հանդերձ Մեսրոպայ համար կո-

1. Հմմտ. նաև Վրիւ Մաղխազ և Վրէն Ձիւնական (Փարպեցի էջ 126); Վրէն Վանանդացի (Փարպ. էջ 394); Վրէն Տաշրացի (Փարպ. էջ 356).  
 2. Բուզանդ. Գա. Գ. զլ. Գ.  
 3. Բուզանդիոն... Եւ յայնմ հետէ վտակը գիտութեան որպէս ի թագաւորանիստ վայրի յորդեալ բղիւնի է քաղաքէն... (Վազ. էջ 13).  
 4. Բուզանդ. Գա. Գ. զլ. Գ.:

րին կը գրէ «Յանկալի եղեալ զինուորական արուեստին իւրոց զօրա-  
կանաց<sup>1</sup>»։ Այս համեմատութիւնը մեզի մի այլ խորհրդածութեան կը  
ձգէ ի նպաստ մեր առաջադրեալ խնդրին։

Չինուորական արուեստը միայն ազատագրի դասակարգին սեփա-  
կան էր, և յաւէտ թուի սիրելի Լուսաւորչայ թոռներուն։ Պապ և Աթա-  
նագինէս, քահանայական պատիւը թողին, և իրենք զիրենք զինուորա-  
կան արուեստին տուին<sup>2</sup>։ Ներսէս նոյնպէս ինքզինք զինուորական ծա-  
ռայութեան տուել էր և արքունեաց մէջ բարձրագոյն տեղն բռնել էր<sup>3</sup>։  
Նոյն իսկ խաղայ պէս սրբակեաց մարդն գերծ չմնաց ձիախրոչրեան<sup>4</sup>։  
մեղադրանքէն որ մասնաւորապէս թուի սիրելի եղած է Վահուենաց  
ազգին իրբև քաջի արանց վայել արուեստ մը, բուժանելով մօտակայ  
խնուայ դաշտի մէջ մինչև ցարդ անուանի Հայկական Նժոյզներու երա-  
մակներ։ Մեսրոպը ևս երիտասարդութեան ժամանակէն ինք զինք տուած  
է այդ արուեստին։ Ո՞ գիտէ թէ ինքն ևս այն նախարարներու որդոց  
թիւէն չէր, որոնք խրախացեալ Գնելի հարսանեաց մէջ, խոստացան  
անոր տալ իրենց գաւակները «գորս առեալ մեծապէս հանդերձեաց  
զարդու և զինու<sup>5</sup>»։

Չինուորութիւնը թեթև արուեստ չէր, այլ դժուարագոյններէն մէկն,  
որուն համար կը պահանջուի տաղանդ, հմտութիւն և աշխարհավարու-  
թիւն։ Ամեն աշխարհակալ և մեծ զօրավար ունեցած է այդ յատկու-  
թիւններն որով հազարաւոր մարդիկ մէկ կամքով շարժեր է, առաջ-  
նորդեր և յաղթանակ կանգնել. յառաջ քան թշնամուն յաղթել,  
գիտացել են նուաճել և տիրել սիրով և մարդասիրութեամբ իրենց  
զօրականին։ Իրաւ է Մեսրոպը չէ յիշուած աշխարհակալ մը կամ բա-  
նակի զօրավար, սակայն նաև ի խաղաղութեան գիտենալ կառավարել  
իրեն յանձնուած զօրագունդն, պահպանել կարգապահութիւն և հնա-  
զանդութիւն զօրաց մէջ, երկիրի և պատկառանքի հետ սիրելի դառնալ,  
անա յայսմ է մեծ մարդոյ արժէքն, և Մեսրոպը յայսմ իր արժանաւոր  
բարձրութեան վրայ կանգնած կը հանդիսանայ մեզ, դատելով զինքն  
կորեան այս խօսքերէն, «Տեղեկացեալ և հմուտ եղեալ աշխարհակաց  
կարգաց, ցանկալի եղեալ զինուորական արուեստին իւրոց զօրականաց<sup>6</sup>»։  
Եւ ինչո՞ւ այդպէս չլինէր այդ ազնուագարմ և հանճարեղ մարդն, այն-  
պիսի բազմահանճար և աշխարհավար վարդապետի քաջարի զօրապետի

1. Կորիւն Պատմ. էջ 6.

2. Որք հարեալք գաւանդն հոգեորն պատուի, անձամբ զանձինս իւրեանց խորատուր յա-  
րուեստն զինուորութեանն զինեցան։ (Բուզ. Գա. Գ. ԳԼ. ԺԵ.)

3. Այլ ի ժամանակին յայնմիկ էր ի վարս զինուորութեան... զզինուորական ձեն յինքեան  
բերել և զարգարեալ էր զեղեցիկ պատմածանաւ և (ի) զարդ վայելուէ... զարքունական սուսերն  
զպտղովատիկն զուկէպատեանն հանդերձ ականակապ մարգարազարդ կամարան ի սպասու նորս  
(Թագաւորին) բարձեալ ունէր։ (Բուզ. Գա. Գ. ԳԼ. Գ.)

4. Ապա կամեցեալ Արշակ Թագաւորն պատուաւ և ազահութեամբ կարասոյն մեքենայի-  
խարել զտուրը եպիսկոպոսն խաղ, բազում ոսկի և բազում գանձս արծաթոյ և րազում միտոյզ...  
զարքունականն ծիող... տայր նմա։ (Բուզ. Գա. Գ. ԳԼ. ԺԱ.) — Այս խաղ... Եւ ոչ եղև ի  
նմա գամագիւտ սասանայ, բայց վասն միոյ նուզի, զի էր պճնող առ հանգերծս և ծիաւալ...  
(Խոր. զերբ Գ. ԳԼ. ԼԱ.)

5. Գնէլ... Թագաւորապէս արարեալ հարսանիս, տայ առատապէս պարգևս ամենեցուն նա-  
խարարացն։ Որոց հաճեալ ընդ նա և սիրեալ, ետուն առ նա զգաւակս իւրեանց. զորս առեալ  
մեծապէս հանդերձեաց զարդու և զինու. և առաւել ևս սիրեցին զնա։ (Խոր. զերբ Գ. ԳԼ. ԻԲ.)

6. Կորիւն. Պատմ. էջ 6.

մը ձեռքի տակ վարժուելով, որպիսին էր Ներսէս Մեծն։ Որքան մեծ  
եղած է Ներսէսի հրճուանքը և Վարդանի խանդավառութիւնն ի տես այդ  
գեղադէմ, պերճահասակ և վաւոխուն երիտասարդին, որ կը խոստանար  
փայլուն ապագայ մը, զոր ինքեանք իսկ չէին կարող գուշակել։

Չինուորական արուեստն արգելք չէրաւ Մեսրոպին հետեւելու  
ղիւանագիտութեան. քաջ հմուտ և ճարտար լինելով հելլէն, ասորի և  
պարսիկ գրչութեամբ, որով երբ խոսրով կը թագաւորէ, կը կոչէ զինքն  
լինել վարիչ և ուսուցիչ արքայական զիւանին և ծառայողներուն<sup>1</sup>։  
Մեսրոպը մնաց այդ պաշտօնի մէջ, մինչև խոսրովայ անկումն։ Քանզի  
խոսրով և իւր համախոհներն՝ Սահակ կաթողիկոս և Նախարարք, ա-  
մենքն պաշտօնանկ եղան Շապհոյ հրամանաւ, որ եղծեց, խանգարեց  
ինչ կարգ և հաստատութիւն արած էր խոսրով իւր բաժնի մէջ<sup>2</sup>։ Ահա  
այս դէպքիս մէջ իբր համախոհ իւր ազգակցին Մեսրոպը զիւանապե-  
տութեան պաշտօնէն ինկաւ, որ թերևս ինքն իսկ յօրինած էր գաղտնի  
դաշնագրութեան թղթերն Արկաղու հետ. ոչ միայն այս, այլ և միւս  
նախարարներու պէս իրենն ևս վրդովուեցաւ Տանուտէրական պատիւը։



Ուսումնասիրութեանս ընթացքի մէջ ասացինք որ Տիգրան Միջին  
բրմութեան պաշտօնէն ձգեց զՎահուենիս, անոնց սեփական գիւղն յար-  
բունիս գրաւեց։ Վահուենիք զրկուած էին Տանուտէրական պատուէն,  
և ինկած էին ազնուականութեան դասակարգէն և նոր կոչումն տրուած  
էր իրենց որ անձանթ պիտի մնար ընդ միշտ, եթէ Պապն ունեցած  
չըլլար հարձ մը կարճատուաց Հացեաց գիւղէն։ Տանուտէրական պատիւն  
զլիւսաւորապէս կը կայանար յայնմ որ ամեն նախարար իւր սեփական  
գաւառի կառավարչին էր և դատաւոր և ունէր իր առանձին զօրքն։  
Տոհմային պատմութեան մէջ երկար դարեր չի յիշուիր Վահուենաց Նա-  
խարարութիւն, մինչև իսկ Բուզանդի ժամանակ, այսինքն այն ժամա-  
նակ երբ Տիրան թագաւորի փեսան Պապը, կարճազատաց գիւղէն առած  
էր հարձը, ուսկից ծնաւ Վրիկ իրաւագուրկ ազգէ, անմասն կառա-  
վարչական պաշտօններէ և պատիւէ։ Սակայն Հինգերորդ դարու մէջ,  
Վարդանանց պատերազմերու ժամանակ Վահուենաց Տանուտէրն և Վա-  
հուենաց զօրքն մերթ ուխտապահաց մերթ ուրացելոց խմբի մէջ են։ Եւ  
արդէն յառաջագէմ և մեծ նախարարութեանց կարգէն են այնպէս որ  
Յազկերտ Վահուենաց Տէրը զԳիւտ անձամբ կը ճանաչէր և միւսներու  
հետ զինք ալ ի Գուռն կոչեց<sup>3</sup>։ Բայց արդ խնդիր է թէ Վահուենիք  
էրբ վերաստացան այդ Տանուտէրական պատիւն։ Եւ Ս. Սահակի Գահ-

1. Ի տես մանկութեան ուսեալ դպրութիւն յոյն. զինուորեալ ի դուռն Հայոց արքային  
խոսրովայ, կարգեալ յիւրմ մատնագիր արքունի դպրաց։ (Փարպեցի.)

2. Եւ Արասալի ընկեցեալ զնա (զխոսրով) ի տէրութենէն... ոչ գմեծն Սահակ և ոչ զորք ի  
նախարարացն կարգեաց խոսրովայ եթող, այլ վրդովեաց ի պատուոյ իւրաքանչիւր (Խոր. զերբ-  
Գ. ԳԼ. Ծ.)։ Այս խմբի մէջ եղած է նաև Մամիկոնեան տունը, և Վրամի ժամանակ Ս. Սա-  
հակայ ինկրանօք, կը վերահաստատուի ի տէրութիւն իւրոյ ազգին. (Խոր. զերբ Գ. ԳԼ. ԿԵ.)

3. Յազկերտ... կոչոյ հրաման տուեալ յականէ յանուանէ զարս զորս ինքն ճանաչէր որոց  
անուանքն են... ի սոսմէ Վահուենաց Գիւտ անուն, (Եղիշէ, 76. վ. նկատել.)

նամակի մէջ Ութերորդ են ըստ կարգի: Բայց յառաջ քան զՍ. Սահակն արդէն եղած կ'երևի այդ շնորհումն ընկի արշակունի թագաւորի ձեռամբ, զի Սուրբ Սահակ ինդրամատոյց եղաւ Վրասէն հաստատելու նախկին կարգն, զարտուղութիւն անելով իւր թոռնիկի Մամիկոնենոյ Վարդանի համար, որ անցաւ ի Չորրորդ՝ կարգ Մեծ Նախարարութեանց, աւելցնելով վրան նաև սպարապետութեան պատիւն: Ուստի Վահուճիք ևս վերահաստատուելու համար այնքան բարձր դասակարգի մէջ, պէտք է ունեցած լինին մի բարձրագոյն տէր և պաշտպան և այդ Տէրն և Պաշտպանն մենք կը համարինք եղած է Ս. Ներսէս Մեծն Արշակ թագաւորի ժամանակ, երբ սա Ներսէսի օգնութեամբ և առաջնորդութեամբ սկսաւ մեծամեծ բարենորոգութիւններ մտցնել Հայոց մէջ, յորոց մին եղաւ Նախարարաց խանգարուած կարգի վերահաստատութիւնն ինչպէս եղած էր ի ընէ ի նախնեաց հետէ: Հաւանական է այս միջոցին Ներսէսի միջնորդութեամբ միայն Արշակ իւր ազգակիցներու Տանուտէրական գահն և կալուածքները դարձուցած պիտի լինի, մանաւանդ որ այն ժամանակի Նոր Տանուտէրն կը հանդիսանար Արշակի հօրաքեռ թոռը և Ներսէսի հօրեղբոր որդին, Վրիկն կամ Վարդանիկ Վահուճին: «Եւ նորոգեցաւ զուարթացաւ տէրութիւնն թագաւորութեան Հայաստան երկրին որպէս և զառաջինսն, մեծամեծքն յիւրաքանչիւր գահոս և զորձակալքն յիւրաքանչիւր չափու»<sup>1</sup>:

Այսուհետև հասկանելի է մեզ բուն բառերու նշանակութեամբ կորիւնի գրածներն թէ «տեղեկացեալ և հմուտ եղեալ աշխարհակաց կարգաց, ցանկալի եղեալ զինուորական արուեստիւն իւրոց զօրականաց»<sup>2</sup>: Այսինքն Մեսրոպը իսկապէս ժողովել էր հօրից Տանուտէրական գահն, ունեցել էր իւր առանձին գունդն և զինուորութիւնն, որոց աւելի քան սիրելի՝ եղած է ցանկալի, ասկից աւելի մեծ գովեստ չէ կարելի լինել զօրապետի մը, և ոչ աւելի մեծ պատիւ այնպիսի զօրավարի մը ինչպէս էր Ս. Ներսէս որոյ ձեռասունն եղած էր Մեսրոպը և անբաժան ընկեր նորա անզուգական որդւոյն Սահակայ: Ուստի երբ կարգանք նոյն կորիւնի մօտ թէ «մերկանայր այնուհետև զիշխանակիթ ցանկութիւնսն»<sup>3</sup> կամ խորհնացոյն թէ «ընկեցեալ յետս զմարմնական պատիւն»<sup>4</sup> պէտք է հասկանալ թէ Մեսրոպը թողուց հրաժարեցաւ Տանուտէրական իշխանութենէն և պատիւէն՝ ինքզինքն Աստուծոյ նուիրելով համար: Իրաւ է որ այդ հրաժարումն ակամայ եղաւ, ինչպէս ասացինք և ստիպողաբար Պարսից արքայի կողմէն, այլ ոչ առանց Նախախնամութեան կամաց, որ զնա մեծագոյն զօրաց և համակ Հայաստան աշխարհի լուսաւորիչ պիտի կարգէր: Ուստի Հոգին առաւ տարաւ զինքը անապատները, սիրեց մենակեցական վարքը, զոր սիրած էր նաև երբ արքունական սուսերն ոսկեղրուազ զարդարուն կամարով մէջքին ունէր

1. Չորրորդ ըստ Գաճնամակին մի պատասեկին գոր զիտնականն էմին ընծայել է Հ. Ս. իշխանին և պահուած է մեր ձեռագրատան մէջ:  
 2. Բուզանդ Գալ. Գ. ԳԼ. Բ. 66:  
 3. Կորիւն էջ 6:  
 4. Կորիւն էջ 7:  
 5. Խոր. զերթ Գ. ԳԼ. ԽԷ:

կուսական գեղով պերճացեալ, հրաժարած երկրաւոր ցանկութենէն և յօրինաւոր ամուսնութենէ, որի ակնարկութիւնն կը տեսնուի Խորհնացու խօսքէն իսկ, «ի նաւահանգիստ փութայ նաև խոռովեալ, և անձն ժուժկալ ինդրէ զանապատ»<sup>1</sup>: Կամ մանաւանդ Բուզանդի ի պատիւ Ներսէսի գրած հետեւեալ տողերու մէջ կը գտնեմ նաև Մեսրոպայ իսկական նկարագիրն. «Եւ մինչդեռ իսկ զձևս զինուորութեան յինքեան բերէր յերևելիսս, ներքին մարդովն զՔրիստոս էր զգեցեալ յանձն իւր, և ազնուական վարս էր յինքեան կերպարանեալ: Եւ յուսովն՝ զոր ունէր՝ խաչեալ էր ընդ Քրիստոսի, և թաղակից եղեալ էր ընդ նմին, և սիրով հաւատոյ մեռեալ էր մեղացն, և յարութեան յուսոյն արդարութեամբ սպասէր»<sup>2</sup>:

Չինուորական վարքը ամենավտանգաւոր միջավայրն է կորցնելու հոգեկան առաքինութիւնները. եթէ Մեսրոպը ժուժկալութեամբ առաքինացաւ երիտասարդական խոռվայոյզ ալիքներու մէջ, որպիսի՞ գերագանց առաքինութեամբը պիտի փայլի Եկեղեցւոյ խաղաղ նաւահանգստի մէջ: Երկրաւոր թագաւորը չկարացին իրենց փառքով և պարզկենքով գոհացնել այն լայն միտքը և լայն սիրտը, որ դառնացեալ ամենայն ունայնութենէ, աշխարհակիր ցանկութենէ և մարմնական պատիւէ, կը գնայ անապատները փնտնելու մտքին ճարակ, սրտին խաղաղութիւն: Անապատը, միայնութիւնն մեծամեծ գաղափարներու մայր եղած են, ազատարար և փրկիչներ տուեր են աշխարհի:

Մովսէս անապատէն հրաման ստացաւ տէր լինել Փարաւոնի որոյ ոտից առջև բլուրներ պիտի խոնարհին և ծով զարհուրեալ պատառելով ճանապարհ պիտի բանայ ներշնչեալ մարգարէին: Անապատէն դարձաւ Յիսուս Հոգւոյն զօրութեամբ և փրկիչ երևեցաւ աշխարհիս: Նոյն և Մեսրոպը Քրիստոսի խաչակիր գունդն խանուելով, միայնութեան՝ լեռնակեցութեան տալով ինզգինքն, շատ անգամ գիշերոյ խորհրդաւոր լուսութեան մէջ Հայաստանի լուսաւորութեան նոր ծրագիրն, զրոց գիւան կ'երկնէր<sup>3</sup>, այնպիսի գործ որ հաճոյ էր Աստուծոյ և մարդկան:

Կորիւն գոհացուցիչ կերպով նկարագրել է զՄեսրոպը իրբև տիպար ճշմարիտ, սրբատէր և աստուածասէր անապատականի. այս մասին մեր ծրագրէն դուրս է զբաղիլ. մենք պիտի պարապինք Գրոց գիւտի հարցով և ասոր համար հարկաւոր է ընդհանուր և համառօտ տեսութիւն մը մեր գրականութեան վրայ Հինգերորդ դարէն առաջ:

\* \* \*

Հայաստանի քաղաքական պատկերն, նման է աշխարհագրական քարտին, նկարուած մեծամեծ լեռներով և գետերով, լեռնաշղթաներով, ձորերով, ծործորներով, անտառախիտ մայրիներով և սարահարթ դաշտագետիներով: Քաղաքական կեանքն լի է մեծամեծ աշխարհակալներու

1. Խոր. զերթ Գ. ԳԼ. ԽԷ:  
 2. Բուզ. Գալ. Գ. ԳԼ. Գ:  
 3. Նոյնպէս առաւել հոգ ի մտի արկանէր, զհամաշխարհական սփոփելով... և գիրս նշաւ նազրոյ Հայաստան ազգին հաստատել... (Կոր. 8):

տիրապետութեամբ, արիւնահեղ պատերազմերու յիշատակներով, բարբարոսաց կոտորածներով, աւերածներով, հրդեհներով. մարդկային հեղեղներ՝ որոնք կատաղարար վազելով սարերու կողերէն, դաշտերու երեսէն, սարուձոր, մարգագետին, թագաւորի ապարանքն և աղքատի խրճիթն լուացին արիւնով և անցան գնացին ոչնչութեան ծոցն, ջնջան եղան նոր ազգաց զարգանալովը, բայց իրենց ատելի յիշատակները պահեց պատմութիւնն, իմաստնոց և բարերարաց ի փառս, իսկ անմտից և արիւնարբուաց յամօթս: Բարելացիր, Ասորեստանցիք, Քաղզէացիք Եգիպտացիներ, ողողեցին Հայաստան, ասոնց թողած քաղաքակրթութեան հետքն նման եղաւ իրենց երկրի գետերուն որոնք բարձրանալէն յետոյ կրկին ամփոփուելով նախկին ափունքներու մէջ կը թողուն շերտ մը սկի և դիրքի, ընդեղէններու բնութեան յարմար և պարարտացուցիչ:

Բարելոնի տիրապետութիւնն, աւելի շահաւոր եղած է քան Ասորեստանինը: Գատելով Խորենացու անգիր զրոյցներէ և վիպասանութիւններէ (poésie épique) և թուելեաց երգերէն հիւսած պատմութեանէն, Շամիրամայ և Վանայ բերդի նկարագրութեանց մէջ, շատ զարգացած քաղաքակրթութեան հանդէպ կը գտնուինք. եթէ այդ զարգացումն գուտ հայկական չհամարինք, սակայն անմխտելի է որ նա թողած է անջընջ ջերի հետք մը զրոշմուած Հայաստանի ժայռերու վրայ որ եղած են կարծր և անտեղիտալի և ըմբոստ ամեն բնութեանց դէմ, սակայն կակղեր են, խոնարհել են, մտքի և գրչի առջ բացեր են իրենց ճակատն և իրոխտ դշխոյն իրրև հարթուած մոմի վրայ գրեց ինչ ողորդեց, իր կամքը, սէրը թէ սուրբ. տակաւին ժամանակն ասոնց մասին կը պահէ իւր խորհրդաւոր լուծիւնն<sup>1</sup>: Չեղբը գրեց անցաւ, լեզուն մնաց, բեկոտագրեր կը խօսին անցելոյ մասին, Հայաստան ութ-ինն դար Ն. Ք. ունեցեր է իւր գիրը. թէ և լեզուն լռէ՝ սակայն միտքը գեռ մեզի հետ կը խօսի: Պիտի չխարուինք որ այդ գիրը հանրամատչելի էր, որով ամեն հայ՝ գրակարգաց և դպիր լինէր. սակայն դիւանական կամ մեհենական գրութեանց ծառայեր է երկար ժամանակ. և գուցէ համեմատական պեղումներ Հայաստանի մէջ, մեզի ընծայեն նոյն իսկ բեկոտագիր թրծած աղիւններ, ինչպէս բարելոնիներն և այլն:

Եգիպտական տիրապետութիւնն գուցէ նոյնքան և աւելի շահաւոր եղած է Հայոց քան Բարելացիներունը, որոնք աւելի զարգացած էին գիտութեամբ, արուեստներով և վաճառականութեամբ, որոց հետ սերտ յարաբերութեան և տուրևառի մէջ եղած են Հայք: Բնութեամբ յարմարող և հետևող այլև օրինակող հայն, չվարանեցաւ անշուշտ իր ծանր բեկոտային գրերն եղանակաւորել Եգիպտական հերթիկ կամ փիւնիկեան գրերու վրայ: Կաղմոս մը կը յիշուի որ Յունաստան տարաւ փիւնիկեան բարեփոխած տառեր: Նոյնպէս Կաղմոս մը ունի Հայաստան (իւր Հայկայ թոռներուց) արդեօք սա ևս Հայաստան բերան նոր ձևով գրել թէ ոչ: Կաղմոս գաղթական կը նշանակէ, ուստի՝ եկած էր մեր կաղմոսն, Փիւնիկէէն թէ Փոնիգիայէն: Ինչ որ ալ լինի Հայաստանի իշխող

1. Իսկ զամենայն երեսս քարին իբր գրչաւ գմոմ հարթեալ, բազում գիրս ի նմա գրեալ որոյ հայեցուածն միայն զամենայն ի զարմանս անէ: (Խոր. գիրք Ա. գլ. ԺԶ.)

ներ և քուրմեր ունեցած են գիր մը որ գործածած են մինչև Մակեդոնական տիրապետութիւնն և այնուհետև մոռացութեան տրուեր է: Սակայն Հայկական շրջանի մատենագրութեան մնացած բաց ի բեկոտագիր տախտակներէ, Մովսէս Խորենացու յիշած անգիր զրոյցներ ալ այս խորհրդաւոր գրերով միթէ գրուած չէին և մինչև ի բրիտանոնէութիւն ևս պահել էին Վահագնի վերագրեալ քնարերգական երգերն և այլք, որք գեղեցիկ մտքի ծնունդ են թէ բովանդակութեան և թէ լեզուի կողմէն, ուրեմն Հայք յառաջ քան զՄակեդոնական տիրապետութիւնը ունեցած են իրենց զրականութիւնը:

Յունական քաղաքակրթութիւնը աւելի մեծ և աւելի արմատական յեղափոխութիւն բերած է մտաւոր զարգացման և բարոյից մէջ: Հայն սկսել էր հոգուով թեքիլ դէպ ի արևմուտք. Տիգրան միջին յոյն դերասաններ կը հրաւիրէ հայ բեմերու վրայ ներկայացումներ տալու<sup>1</sup>. Արտաւագդ շղթայակիր Կլէոպատրայի արքունիքում ողբերգութիւններ կը գրէ որք ճաշակով և իմաստով կը մրցին յոյն դասական թատերագիրներու հետ<sup>2</sup>: Արտաշէս, Տիգրան յունական գեղեցիկագոյն անդրիններ ի Հայս փոխադրել կու տան, գեղարուեստի ճաշակն առած էին նաև հայ քուրմերն զորս ուրախութեամբ իրենց հայրենական Բազմիներու մէջ կը կանգնեն: Այս շրջանի պատկանող գրուածք միայն օտար հեղինակներէն յիշուած են յոյն դպրութեամբ գրուած լինելուն պատճառաւ, որ փոխանակեր էր հին գրութեան, ինչպէս յիշեցինք. և արդէն բաւական զարգացած Գրականութեան հանդէպ կը գտնուինք:

Հռովմէական քաղաքակրթութիւնն հսկայական քայլերով սկսաւ ընթանալ, մանաւանդ Օգոստոսի հաշտութենէն յետոյ, երբ այնուհետև Հայաստան իրրև դաշնակից սկսաւ գործել կոյսրութեան հետ և Հռովմէական ծերակոյտի ամեն ջանքն եղաւ պահպանել Հայաստանի ամբողջութիւնն, շատ անգամ ասոր անկախութեան համար պատերազմներ մղելով Պարթևաց կամ Պարսից դէմ: Այնուհետև հայ թագաւորներ և նախարարագուցնք, իրենց որդիք կամ իբր պատանդ կամ պարզապէս քաղաքակրթութեան համար Հռովմ կը դրկէին, յորոց ոչ սակաւք կը յիշատակէ Տակիտոս իւր տարեգրութեանց մէջ<sup>3</sup>: Արշակունի թագաւորք, հակառակ իրենց ազգակից համարեալ Պարթևներուն, նախամեծար կ'ընտրէին Հռովմէական կայսրներէն թագն ընդունիլ, քան Պարթևաց արքայից արքայէն:

Կողդիոս զՄիհրդատ թագաւոր կարգած ժամանակ, « Հռովմայ աշակերտ » կը կոչէ և կը պատուիրէ որ իւր արքունեաց և երկրի մէջ մտցնէ և սիրելի անէ Հռովմէական քաղաքակրթութիւնն: Հռովմէական շրջանի գրականութիւնն նոյն յունական նկարագիրն ունի և մենք Խորենացու հատակոտորներուց միայն կրնանք գաղափար կազմել հայ մտքի զարգացման: Տրդատ վերջինն եղաւ որ Գիովղեսիանոսէն ընդունելով արքայական թագն, հռովմայեցի քարտուղարով իւր արքունի դիւանը կը վարէր: Տակաւին հեթանոս-հռովմէական գրականութեան կոթող

1. Պլուտարքոս-Չուզակչիք, Լուկուլլոս:  
2. Պլուտարքոս-Չուզակչիք. Անտոնիոս:  
3. Տակիտոս-Տարեգիրք գիրք ԺԲ. 10-16.

մ'է Ազաթանգեղոսի պատմութիւնն, որ փակելով հեթանոս գրականութիւնը կը բանայ ըրիստոնէական շրջանի զարգացումն և յառաջադիմութիւնն որ եղաւ աւելի ճոխ և աւելի նուրբ ճաշակով քան նախկին երկու շրջաններունը։ Տրդատ և Գրիգոր Լուսաւորիչ յոյն և ասորի դպրութեանց համար դպրոցներ կը բանան, ընտրանք տղաք կը ղըրկուին Կեսարիա, Բիւզանդիոն և Աթէնք։

Հայ երիտասարդութեան մրցումն յոյն ուսանողներու հետ և երբեմն յաղթահարելն, յայտնի է մեզի Գրիգոր Նազիանզացու Ս. Բարսղի վրայ խօսած դամբանականէն<sup>1</sup>, յորում թէ և ոմանց իմաստակորեան համար կը գանգատի, բայց և կը յիշէ բարեկամներ որոնք սերտ սիրով կապուած էին Ս. Բարսղի հետ, յորոց զխաւորն հանձարով և ազնուականութեամբ կը գերազանցէր անշուշտ Ս. Ներսէս<sup>2</sup> և վարդանիկն Պապայ հարձորդին։ Աշխարհահռչակ համբաւ ստացեր էր Աթէնք և ի Հոռով հայկազն Պարուր կամ Պրոքերեսիոս, որուն հանձարի վրայ սքանչանալով Հոռով պղնձի ամբողջական անդրի կը կանգնէ, « թագուհին տիեզերաց, թագաւորի բանին<sup>3</sup> », արձանագրութեամբ : Այսպէս նաև շատերը կարող ենք յիշել որոնք Գ դարու մէջ հայ միտքը զարգացուցին յունական իմաստութեամբ և կրթութեամբ։ Դժբաղդարար այսքան յառաջադէմ մատենագրութենէ ձեռքբերնիս հասած է միայն Փաւստոս Բիւզանդացոյն երկասիրութիւնն, որ աւելի տարեգրութիւն է քան պատմութիւն, սակայն նուրբ և մշակուած մտքի երկունք է, որ դարերու ընթացքի մէջ չի կորցներ ոչ արժէքն, ոչ թարմութիւնն, զի կը ներկայացնէ կեանքի առօրեայ պատկերն, և գրուած ժողովրդեան խօսած կենդանի բարբառով, հայ է գրողը հին յունական վաղնջուց գտնուած տառերով որոնք Ծովոաց և Աղձնեաց վարժարաններու մէջ յարմարացուած էին հայ մանուկների համար. բայց « անբաւական ողջ ածել զսիւզորայս և զկապս հայերէն լեզույն » և կարօտէին քաջ արուեստագիտի ձեռքին Մեսրոպի կերպածնելուն, որպէս զի լինէր ինքն միայն մեր Ոսկէ դարու գրականութեան աղբիւր՝ Հայր և Ուսուցիչ և Հիմնադիր :

\* \* \*

Մեսրոպը Չորրորդ դարու սերունդէն է, որ « անեալ և ուսեալ առ Մեծին Ներսեսի<sup>4</sup> » և « վարժեալ հելլէն և ասորի դպրութեամբ<sup>5</sup> », արքունի քարտուղարութեան պաշտօնով ծառայեր է նախ « առ հազարապետութեամբ Առաւանայ ուրումն<sup>6</sup> » և ապա խոսքով թագաւորի ժամանակ՝ զինուորական վիճակի<sup>7</sup> մէջ։ Տակաւին երիտասարդական հասակէն,

1. Ճառ Ի. Գրիգ. Նազիանզացու կողմինս 1.  
2. Ի տղայութենէ անեալ և ուսեալ ի Կեսարացոց քաղաքին Գամբաց ընդ հաւատարիմ վարդապետոց, և ցանկալի եղեալ իւրոյն համարուեալն զուզակցացն (հասակակցացն):  
3. Ե՛նայպիս — վարք իմաստասիրաց — Պրոքերեսիոս — կողմինս 1613:  
4. Խոր. զերթ Գ. ԳԼ. ԽԼ:  
5. Կորիւն, էջ 6. Վազար 33:  
6. Կորիւն, էջ 6.  
7. Փարպեցի 33:

նորա վառվռուն երևակայութիւնն հայկական հորիզոնն վարդակարմիր կը նկատէր. մանաւանդ երբ Կաթողիկոսական աթոռն յաջորդելու կոչուեցաւ Ս. Սահակ։ Արդեօք այս երկու հանձարներն ազդեցութիւն ունեցան խոսքովի վրայ շեղելու զինքն Պարսից քաղաքականութենէն, յարելու առ ըրիստոնէայ կայսերս Բիւզանդիոնի։ Նորա այդ քայլն անհու շարժառիթն ունէին կամ ունեցած են մի ինչ որ դաշանց թղթից գոր երկիցս կը յիշէ Բուզանդ<sup>1</sup> և ապա Եղիշէ ի Ե դարու<sup>2</sup>. խոսքով՝ հրապուրուելով ապագայ միահեծան և ուժեղ Հայաստանի հետապատկերով, բարեկամութիւն կը հաստատէ Արկադիոս Կայսեր հետ և կը զրգոէ Եսապուհի ցասումն, և իր յուսացած օգնութիւնը չգանելով կորսնցուց թագն և ազատութիւնն։ խոսքովի պաշտօնեայք, գործակիցք, Նախարարք և Կաթողիկոսն Սահակ, ամենքն իբր արքունի յանցաւորք պաշտօնանկ եղան և զրկուեցան իրենց հայրենի տէրութենէն և տանէն։ Մեսրոպը այս ցաւալի իրականութեան առաջ կանգնած, հասկացաւ որ անցել է անդառնալի կերպով յոյս զնել թագաւորական գաւազանի վրայ փրկելու զՀայաստան սպառնալու կործանումէն։ Ս. Սահակ վաղարշապատու Կաթողիկէին մէջ, ցաւոց և արտմութեան մէջ ընկզմած հարշապատու Կաթողիկէին մէջ, ցաւոց և արտմութեան մէջ ընկզմած կը տեսնայ Հայաստանի անկումն և աւերումն։ Երկուքը հասկացել էին իրար։ Սահակ իւր եկեղեցական վիճակի մէջ մօտիկ կանգնած էր ժողովրդեան, իւր կոչմամբ զեռ կարող էր ոգի և շունչ փչել այդ մարտողներուն, իւր կոչմամբ զեռ կարող էր ոգի և շունչ փչել այդ մարտողներուն, իւր կոչմամբ զեռ կարող էր ոգի և շունչ փչել այդ մարտողներուն, իւր կոչմամբ զեռ կարող էր ոգի և շունչ փչել այդ մարտողներուն։ Սահակ իւր եկեղեցական վիճակի մէջ մօտիկ կանգնած էր ժողովրդեան, իւր կոչմամբ զեռ կարող էր ոգի և շունչ փչել այդ մարտողներուն, իւր կոչմամբ զեռ կարող էր ոգի և շունչ փչել այդ մարտողներուն։ Սահակ իւր եկեղեցական վիճակի մէջ մօտիկ կանգնած էր ժողովրդեան, իւր կոչմամբ զեռ կարող էր ոգի և շունչ փչել այդ մարտողներուն, իւր կոչմամբ զեռ կարող էր ոգի և շունչ փչել այդ մարտողներուն։

1. Մանուանդ զի զուխան յիշեալ զդաշանցն կոնուց գերզմանցն հաստատութեան, միջնորդութեամբ ի մէջ կայսերն Կասանդիանոսի և ի մէջ թագաւորին Տրդատայ եղեալ էր (Բուզ. Գ. Գ. ԳԼ. ԽԱ).  
2. Ի իբրև յանդիման եղին մեծի թագաւորն, և ընթերցան զգիր պաղատանայ Հայոց աշխարհին և զիշտատեակարանան նախնեացն, բազում մատենք ի մէջ եկեալ ընթերցան, որ զնոյն Ուխտ հաստատութեան ի ներք գտանէին (Եղիշէ էջ 133):  
3. Կորիւն էջ 7. Խոր. զերթ Գ. ԳԼ. ԽԵ:

միջոցները, հոն պիտի ծրագրէ ժողովուրդը անցունել գիտութեան ծովէն և ձուլել սուսերն ի գրիչ, և ապա պատգամախօս երևնալ Հայաստան ազգին, և գրչով պիտի յեղափոխէ և վերակազմէ Հայաստանը. թուղթն պարիսպ պիտի ածէ խաւարի արշաւանքներու դէմ, որ աւելի հաստատուն և յարատե պիտի պահեն հայու կեանքն՝ քան Արտաշատու և Անույ պարիսպներն: Երջանիկ անապատ Գողթան, ուր Մեսրոպը երկընքի և երկրի հետ խորհրդաւոր ներշնչմամբ իւր ծիրանի սրտի մէջ պիտի երկնէ և ձուլէ հայկական գիրերը, որով պիտի ծնանի պատանի գրականութիւնն և հրավառ արշալոյսի աչերէն՝ պիտի ծագէ Հայոց Ոսկէ դարը:

Խոսքովու աղէտալի անկման հետեւանքները միայն երկու հոգի զգացին՝ Սահակ և Մեսրոպը: Հայաստան միայն մնացեր էր անպաշտպան և անկարող իւր ազատութիւնը և անկախութիւնը պաշտպանելու հզօր թշնամի զրացի տիրապետութեան դէմ: Եւրջ հարիւր տարի առաջ (382) Պրորոս Կայսրն հաշտութիւն կնքելով Պարսից հետ, Հայաստանը բաժանեցին մէջերին. այդ օրէն Հայոց Սև գիրն գրուեցաւ: Թէպէտ Տրդատի ջանքերով դարձեալ Դիոկղետիանոսի և Կոստանդիանոսի ժամանակ, հռովմէական հովանաւորութեան տակ, կէս դարու չափ Հայաստան ազատ մնաց Պարսից հարստահարութենէն, բայց Տրդատայ յաջորդներու ժամանակ Բիւզանդական Կայսերութիւնը երթալով դէպ ի անկումն կը մտնար, և անգօր կը զգար պաշտպանելու իւր հեռաւոր գաւառները, մանաւանդ Հայաստանը որոյ վաճառմամբ, ասենք, կը յուսար գտնել խաղաղութիւն: Յովիանոս վերջին հարուածն տուաւ, հռովմէական անուան նախատական դաշինքով: Այնուհետեւ պարսիկներ հետամուտ եղան ջնջելու զքրիստոնէութիւնը, որպէս զի ընդ միշտ իրենց տիրապետութիւնը ապահովեն Հայաստանի վրայ: Արդէն որմզդական հուրն սկսել էր վառել հայ հողի վրայ. Մերուժան և նմանիք իրենց ազգին դաւաճաններն՝ կը քանդեն եկեղեցիք, կը ջնջեն յոյն գրեանքն և կ'արգելուն յոյն դպրութիւն: Արքայից արքան հզօրագունի իրաւունք բանեցնելով Հայոց թագաւորներ գահազուրկ կ'անէ և Անուշ բերդի մէջ կը փակէ, Կաթողիկոսն կը կապտուի իւր հոգեւոր իշխանութենէն, գոզցես ըստ բանի աւետարանին «Հարից զհովիւն և ցրուեսցին ոչխարքն»: Պարսիկք այլ ևս չեն մտածեր բնաւ սիրաշահիլ զհայերն՝ արշակունի թագաւոր նշանակելով, այլ Յագկերտ իւր ճապուհ որդին կու տայ թագաւոր, որպէս զի նախարարագունք հետը կենցաղավարելով՝ ընտելանան Մագդէզանց կրօնքին. արդէն Մոգերն իրենց վարդապետութիւնը պարսիկ դպրութեամբ Հայոց մէջ տարածելու ձեռնարկեր են, և յաջողութիւնը իրենց կողմն էր, զի պարսկերէնն արդէն արքունեաց լեզու եղեր էր, որով շատերուն ծանօթ. կարդալով այն մուրաբ գրքերն, վերստին կը զարթնուն հեթանոսական զգացմունքներն, որոնք քրիստոնեայ թագաւորաց ժամանակ թաքնուած մնացած էին. բայց երբ Պարսից իշխանութիւնն գերակշիռ հանդիսացաւ, անոնք կրկին երևան կ'ելլեն<sup>2</sup>: Ամեն

1. Խոր. զերբ Ա. զԼ. 1, Ա.  
2. Էւ զօրեալ ազանդն հեթանոսական թաքուցեալ յաւուրն Տրդատայ մինչև ցայն ժամանակս. և ապա յայտնեցաւ ի վաթիարիկ թագաւորութեան արշակունեաց, (Խոր. զերբ Գ. զԼ. 10 է):

նշաններէն կարելի էր գուշակել Հայաստանի վերջն հասած լինելն: Այսպիսի դառն և դժուարին ժամանակի մէջ կ'ապրէին Սահակ և Մեսրոպը: Մին առանձնացած իւր դաստակերտի մէջ յՈռուստանն վաղարշապատի՝ իսկ միւսն յիւր դաստակերտն ի Գողթն գաւառի՝ ինքզինքն միայնակեցութեան տուած: Ահա այդ երկու մարդոց մտաց առջև պատկերացած էր Հայաստանի ներկայ տխուր վիճակը և ապագայի ահաւոր կործանումն: Երկուքն ևս նոյն կրօնից սուրբ նախանձով և հայրենեաց սիրով վառուած, կը խորհէին անոր փրկութեան հնարքը գտնալ: Եւ գտան հնարքը, պահել և պահպանել քրիստոնէական կրօնքն և լուսաւորել հայերը, որպէս զի ճանաչեն իրենց գոյութիւնը պահպանելու գիտակցութիւնն: Պէտք էր կռուիլ խաւարի դէմ՝ լուսաւորել միտքը, պէտք էր կռուիլ պարսից դէմ, ազգային միութեան գաղափարով: Այս երկու նպատակին հասնելու համար կը պակասէր մտքերու հարստութեան միջոցն. հայն իւր սեփական գիրն չունէր:

Չարմանալի զուգադիպութեամբ այդ երկու լուսաւոր և խորհող մտքերը կը դիմէին միևնոյն նպատակին՝ անձանօթ իրարու աշխատութեան. Մեսրոպը տասը երկար և խաղաղ տարիներու մէջ յղացեր էր իւր մեծ ծրագիրն և կանոնաւորել գրերու մի ցուցակ. ուստի երբ Մեծն Սահակ վերստին հաստատուեցաւ Կաթողիկոս, նա իւր Գողթան սուրբ թաքստոցէն իբրև Եւր Մովսէս երեցաւ արքունեաց մէջ, Քրիստոսի զինուորութեան արուեստին ցանկալի եղած ամենքին: Ս. Սահակ իւր վիճակի բարեկարգութեան համար Եպիսկոպոսաց ժողով գումարել էր վաղարշապատի մէջ, թէ ինչպէս դիմադրել Մագդէզի վարդապետութեան որ քաղցկեղի պէս սկսել էր ճարակ գտնել թէ՛ նախարարական և թէ՛ ուսմկաց տներն<sup>3</sup>: Եպիսկոպոսաց ժողովին կը ներկայանայ Մեսրոպը, պարզ և համակերելի ծրագրով, Հայոց գիր ստեղծել կը փափաքէր<sup>4</sup>: Կաթողիկոսի և ժողովականաց քաջալերութիւնն Մեսրոպը ակնկալութենէն աւելի վեր էր. իւր պատրաստած ատաղձն բոլորի մըտակն կարգելու էր և համոզիչ: Որովհետև Ս. Սահակայ պէս լուրջ քին յարմար եկած էր և համոզիչ: Որովհետև Ս. Սահակայ պէս լուրջ միտք մը չէր կարող վեր ի վերոյ ըմբռնել Մեսրոպը ծրագիրն և ասել «յոյժ դիւրին է գիւտ իրացող զոր հայցես», և մանաւանդ կը խոստակարանայր ի կարգել զհեզեհայան, բերեալ առ իս՝ ուղղեմ զայն»: Այս քաջալերութեան աւետիան անելով Մեսրոպը, հոգիաշունչ մարգարէի կորովով ձեռնամուխ կը լինի Հայաստանի վերածնութեան մեծ զօրծին, ստեղծելու զԳիրն Հայոց: Մեսրոպը տանամեայ փորձով հաւոգուեր էր թէ կան հայերէն նշանագրեր, որոնք անգործածութեան մատնուելով մոռացուեր էր իւրաքանչիւրի ձայնն կամ հնչիւն. և կ'աշ-

1. «Հասանէր յառաջագոյն ի դաստակերտն իւր յՈռուստան (Ոռուստան) յԱյրարատեան գաւառին ի Աղարշապատ քաղաքն»: (Ազատ. էջ 626).  
2. Էւ թեալ իջանէր ստոստան (Ոռուստան) Գողթան յառաջին դաստակերտն իւր: (Կոր. էջ 14).  
3. Էւ միանգամայն յօժարութեամբ գումարեալ հանդերձ ազօթից մեծովք առ Աստուած կանխէին վասն ամենայն ոգոց Քրիստոսաբեր փրկութեան հասանելոյ: (Կոր. էջ 8).  
4. Ապա. — ժողովել քաջարհանգ խորհուրդն երանելի միտքանկեղցն, և զիւր նշանագրոյ Հայաստան ազգին հաստնել (հաստատել): (Կոր. էջ 8).

խառնէր ինքնին առանձնապէս կատարելագործել. ուստի երբ իմացաւ թէ Ս. Սահակ նոյն նպատակով եպիսկոպոսաց ժողով գումարել է, թելադրուած Վրամշապուհ թագաւորէն, որ հայերէն գրի և քարտուղարի պակասութեան պատճառաւ շատ նեղութիւն կը կրէր, կու գայ Մեսրոպը կը ներկայանայ իւր ծրագրովն. թէ ժողովականք, «բազում հարց և փորձի և քննութեան զանձինս պարապեցուցեալ» և թէ Ս. Սահակ կը համոզուի որ Մեսրոպայ հանձնարածն իւր յարմար էր և իրագործելի, ուստի զինքն կը քաջալերեն հետեւելու առաւելագոյն եռանդեամբ, «քանզի յոյժ զիւրին է գիտ իրաց զոր հայցէր»: Սահակայն Մեսրոպը գործի ծանրութիւնն քաջ հասկացած լինելով, և տասնամեայ ճգնութեամբ խոնարհութեան խորն իջած, ի լուր Դանիէլեան նշանագրերուն, կը թողու և կը հրաժարի պահ մը իւր սկսած յաջող և սխառնատիկ գործէն: Դանիէլեան նշանագրաց հետազոտութիւնն և փորձնական գործողութիւնը երկու կամ աւելի տարով յետաձգելու պատճառ պիտի լինին Հայկական դպրութեան գիւտն:

\*  
\* \*

Տարօնոյ. Ս. Յովհաննէսի Մարգարէանոցն կամ Հացեաց զրախտ կոչուածն լի էր ասորի և յոյն կրօնաւորներով, խառն Գուրմերու ցեղից ձեռնադրուած վարդապետաց և եպիսկոպոսաց հետ: Չորրորդ դարու պատկանող հոչակաւոր վարդապետը Եպիփան, Գինդ<sup>1</sup> և այլք այս վանքէն էին և աշակերտը Մեծի Դանիէլի Ասորւոյ, որ ընդհանուր գլխաւոր էր Հայաստանի եկեղեցիներու<sup>2</sup>: Բուզանդի պատմութեան ընթացքէն կ'երևի որ Հացեաց զրախտի Միաբանութիւնն իւր առաջնական պաշտօնը կը տարածէր աւելի Հայոց հարաւային աշխարհներու վրայ, Ծոփաց, Աղձնեաց, հայ Միջագետաց և այլն: Գիտութիւնն և գրագիտութիւնը ասորերէնի և յունարէնի՝ առաջին տեղն բռնած էր եկեղեցական պաշտամանց մէջ. յառաջադիմութեան և զարգացման սիրահար Դանիէլի Աշակերտներից մին Եպիփան, հայեցողական կեանքին հետ միացուց նաև գիտութիւնն իրական կեանքի համար, զլխաւոր նպատակն էր քրիստոնէական կրօնքն ժողովրդական դարձնել, մատաղ սերունդն կրթելով. ուստի «և դնէր վարժեար ընդ ամենայն երկիրն Ծոփաց, և լինէր Եպիփան լոյս երկրին Ծոփաց և լուսաւորէր զնոսա մեծապէս<sup>3</sup>»: Եպիփան իր գործունէութեան շրջանն կ'ընդարձակէ, անցանելով նաև Աղձնեաց երկիրն «լուսաւորէր և զնոսա»: Եւ Միաբա-

1. Եւ էր նոցա բուն զլխաւոր սուրբն Գինդ, զի առհասարակ ամենայն մարդիկ երկրին Հայոց անուանեալ կոչէին սմա վարդապետ: (Բուզ. Գա. 9. գլ. ԺԶ):  
 2. Այլ վերակացու և հրամատար տեսուչ և հոգաբարձու ամենայն եկեղեցեացն Հայոց Մեծաց ընդ ամենայն տեղիս: (Բուզ. Գա. 9. գլ. ԺԳ):  
 3. Ծոփք և այլ 14 գաւառք ձեռնական (պարզական) իշխանութիւն էին Գր. Լուս. որդւոց և թուանց: Այս գաւառներու մէջ յատուկ խնամքով «Ս. Ներսէս կարգէր ի տեղիս տեղիս զպրօքս յունարէն և ասորերէն յամենայն գաւառս Հայոց — (Բուզ. Գա. 9. գլ. Գ.): Գարձեալ նոյն դպրոցին կը պատկանին... Դարձեալ... «Կորդուաց աշխարհին վարդապետ տեսալ էր... Ասոր համար է որ Մեսրոպը Ասորիքէն դառնալէն զինի, յետ ողբունելոյ Ս. Սահակն և վրամշապուհ թագաւորն վաղվաղակի հրաման տեսալ ի թագաւորէն սկիզբմ անմեղոյ զնուժադոժ կողմանն Մարաց (վարդապետել)... մինչև բնաւ արտաքոյ իւրեանց ընտանութեան զերձանել (բանականութեան վերձանել): (Բուզ. Գ. գլ. ԺԳ. — Կոր. էջ 12):

նութիւն կամ վկայանոց մի ևս չինէ Տիգրանակերտ քաղաքի մօտակայ մի աւանի մէջ<sup>1</sup>: Հայախօս և ասորախօս բնակչութեան մը համար, զուտ ասորի կամ յունական դպրութիւն ձեռնտու չէր, նա մանաւանդ որ այն կողմերն երկար դարեր Հռովմէական ազդեցութեան տակն ինկած էին, և լատին լեզուն այնքան ծանօթ լինելու էր երկրի վարիչներուն որքան էր ասորին և յոյնն: Ուստի հարց է թէ Եպիփան ինչ դպրութեամբ կ'ուսուցանէր և լուսաւորէր իւր վարժարաններու մէջ նայ մաւկրտիկ, որու համար գրեթէ անպէտք էին ասորերէնի և յունարէնի 22 գրերից բաղկացած այբուբենը: Չունէին մի այս Հայ-Ասորա-յունական վարժեարն իրենց առանձին պայմանական դպրութիւնն կամ այբուբենն քաղուած և յերկրած այլևայլ դպրութիւններէ<sup>2</sup>, Պահլաւէ, Չենդէ, Փիւնիկեան և այլն գրերէ, փոքր ի շատէ յունական կամ Հռովմէական գրութեան նմանութեամբ ձեւակերպուած: Այս՝ ապահովապէս ունէին և իրենց համար մինչև անգամ բաւականացուցիչ, որ չեն քաջուիր վրամշապուհին, Հայոց թագաւորին, առաջարկելու մտցնել նաև վեւրին Հայոց վարժարաններու մէջ: Դանիէլ ասորի այս դպրոցին կը պատկանէր, հետեւապէս այդ նշանագրերն նորագիւտ կամ Դանիէլի հնարած կամ յարմարեցուցածն չէին: Թիրիմացութիւնն թուի յառաջ եկած է Կորեան մի աղաւաղ ընթերցումէն, յորում նա ասէ. «Դանիէլ... որոյ յանկարծ ուրեմն նշանագիրս ալփաբետաց հայերէն լեզուիս». — որոյ մինչդեռ կարդալու է. «Պատմէր նոցա արքայն վասն անն ուրումն ասորւոյ եպիսկոպոսի ազնուականի Դանիէլ անուն կոչեցելոյ, որոյ անկարծ (ստուգիւ) ակեր նշանագիրս ալփաբետաց հայերէն լեզուիս<sup>3</sup>». նոյնը աւելի անորոշ բացատրուած է Խորենացու մօտ, Հաբէլին ասել տալով, որ խոստանայր հայկականաց լեզուաց աննել նշանագիր, յարմարեալ ի Դանիէլէ: Մինչդեռ շատ բացայայտ է Փարպեցու գրածն որ կու գայ հաստատելու թէ հայերէն եղանակիք կային Դանիէլի մօտ, և սորա ոչ այլ ինչ էին քան Եպիփանու Ծոփաց և Աղձնեաց վարժարաններու մէջ կիրարկուածն, կ'ուզեմ ասել նորագիւտ չէին և ոչ Դանիէլէն յարմարեցուած: Եւ իսկապէս երբ վահրիճ Հաբէլի հետ կ'երթան նիէլէն յարմարեցուած: Եւ իսկապէս երբ վահրիճ Հաբէլի հետ կ'երթան նիէլէն ուսանելու և հմտանալու քաջապէս ընթերցանութեան, կը առ Դանիէլ ուսանելու «զնուած նշանագրեր են, յունական այբուբենի տեսնան որ «վաղնջուց» գտնուած նշանագրեր են, յունական այբուբենի կարգաւ շարուած. թերևս Դանիէլի բոլոր արդիւնքն յայսմ է և ոչ աւելի: Սահակն ինչ որ լինի, պէտք է փոքր ի շատէ համոզիչ եղած ընդունել Դանիէլեան նշանագրերն, որ Ս. Սահակ և Մեսրոպը արժան դատել և երկու տարի, կամ ըստ Խորենացու «սակաւ ամս», առ ի փորձ մատաղ մանկուոյն ուսուցանել. և Մեսրոպին յանձնուած ժա-

1. Եւ ընդր գերեկին Ծոփաց վանիւք. և դնէր վարժեար ընդ ամենայն երկիրն Ծոփաց, և լինէր սուրբն Եպիփան լոյս երկրին Ծոփաց, և լուսաւորէր զնոսա մեծապէս:  
 Անցանէր և յերկիրն Աղձնեաց, լուսաւորէր և զնոսա և ընդր գերեկին Աղձնեաց վանիւքով. և չինէր վկայանոց մի յաւանին ի քաղաքին Տիգրանակերտի: (Բուզ. Գա. 6. գլ. ԻԷ):  
 2. Կոր. էջ 9:  
 3. Կոր. էջ 8:  
 4. Խոր. վերջ Գ. գլ. ԾԲ:  
 5. Հաբէլ անուն, որոյ ասացեալ էր յառաջագոյն ցարքայ, որ և մերձաւոր է անն բարեպաշտի Դանիէլի եպիսկոպոսի, առ որում Ոշմանագիրքն հայերէն կային: (Գագար, էջ 38):

մանակ այդ ուսուցչութեան պաշտօնն, առանձին Վարդապետական աստիճան<sup>1</sup> կը տրուի:

Դանիէլեան նշանագիրերն ըստ օրինակի յունականին շարուած, ենթադրել կու տայ որ 22է աւել չէին, զոր փորձելով երկու տարի համոզուեցան որ բաւական չեն հայերէնի վանկեր և հոլովներ կազմելու համար: Գուցէ Դանիէլ իւր կողմէն պայմանական նշաններ դրել էր այլևայլ գրերու վրայ կրկնաձայներու և միւս հնչմանց պակասն լրացնելու համար, որ ինչպէս փորձն ցոյց տուաւ գործը կը դժուարացնէր և անկարելի կը դարձնէր ոչ «կարելով ստոյգ հոլովել զհեզեանայ բառից հայկականաց հագներգարար մուրացածոյին այնուիկ գծագրութեամբ<sup>2</sup>»:

Դժբաղդարար Ղազար Փարպեցի յայտնի չ'ասեր թէ Մեսրոպը Վաղարշապատու ժողովին ինչ առաղձ ներկայացուցեր է, որոյ համար «քաջալերութեան աւետիս» աչքալոյս կ'ընդունի Սուրբ Հայրապետէն. սակայն դատելով որ նա երկար ժամանակ քարտուղարական պաշտօն վարած է, — մանաւանդ Խոսրովի ժամանակ, յորում Հայոց յարաբերութիւնն դիւանական գործերու բացառապէս Պարսից արքունեաց հետ էր, որ ժամանակի համար կը գրէ Խորենացին թէ «պարսկականաւ վարէին գրով — հաւանական կը թուի մեզի որ Մեսրոպայ նշանագրոց մի մասն առնուած լինելու էին Պարսիկ և զենտի կամ պահլաւ նշանագրերէ և խառնած յոյն և ասորի նշանագրութեանց հետ որք աւելի ծանօթ էին հայոց. անոր համար երբ կը լսեն որ Դանիէլի մօտ կը գտնուին ըստ յունականին յարմարցուած տառեր, իսկոյն Մեսրոպը, առ խոնարհութեան թէ համակրութեան, իւր սկսած ձեռնարկն կը թուղու և կ'անցնի փորձելու ասորւոյն գրերն որք խլեցին իւր բեղմնաւոր կեանքի երկու կամ աւելի տարիներ:

Դանիէլեան նշանագիրքն եղած են հաւանօրէն հետևեալները. ա. ք. զ. յ. ե. ե. ը. ր. ի. շ. ի. կ. զ. զ. մ. ն. ո. պ. ո. ս. վ. տ. ր. որոց բնորոշն է մի հաստ գիծ, որի մանր կտորներն կը միանան իրարու հետ նաքր գծով: Իսկ մնացածներուն վրայ շարունակութեան մէջ կը խօսինք, յորում պիտի երևի Մեսրոպայ արդիւնքն:

Մեսրոպը սուրբ Սահակայ տուած օգնականներով կ'իջնէ Միջագետք, տեսակցելով Դանիէլի հետ՝ Եպիփանի շինած վանքի մէջ՝ իբրև նախածանօթ՝ ի մանկութենէ ինքն Ս. Յովհաննու Մարգարէանոցի մէջ ուսած լինելով, իբրև բնիկ Հացեաց Գրախտին. և աւելի բան չգտնելով կ'անցնի Տիգրանակերտ և ապա ուղիղ Նիզիսի, որ Գ դարու կէսէն սկսած քրիստոնէական զարգացման կեդրոն դարձել էր, յորում ժամանակի կատարուած է նաև Ս. Գրոց «Պեշիտօ» կոչուած թարգմանութիւնն ասորի լեզուով: Սիրալիր ընդունելութիւն կը գտնէ երկու քաղաքաց Բաբելաս և Ակակիոս՝ Եպիսկոպոսներէ, ընձեռելով ամենայն միջոց՝ որպէս

1. Եւ յորժամ բազումք ի նոցանէ տեղեկանային, ապա հրաման տայր ամենայն ուրեք նովին կրթել, որով և յաստիճան իսկ Վարդապետութեան գեղեցիկ երանելին հասանէր. (Կրթիւն, էջ 9).  
2. Խոր. գիրք Գ. գլ. ԾԲ:  
3. Assemani J. S. Bibliotheca Orientalis Romæ 1719 C. XIV p 197. ունի այսպէս Rabulas Edesse episcopus ab anno Christi 412 usque ad annum 435. Իսկ Տիգրանակերտի յեշի Ակակիոս Եպիսկոպոս շուրջ 400 թ. 1 Բազալքը, Կամս:

գի Մեսրոպը գրոց գիւտն կատարելագործէ ուսումնասիրելով տեղւոյն բարձրագոյն վարժարանն և ճոխ դիւանն: Սակայն յուսախար եղած, ի զուր եկած չլինելու համար, իր սիրելի աշակերտներն կը տեղաւորէ Եղեսիոյ մէջ՝ ոմանք ասորերէնի և զայլս յունական դպրութիւն սովորելու. իսկ ինքն իւր խոյանքն յառաջ կը տանի երկու ընկերներով և Հոգին իրեն կ'առաջնորդէ անցնելու Եփրատը աւետեաց լուրն ընդունելու և սրտին վրայ Աստուծոյ զիրը գրելու համար:

\* \* \*

Եփրատի աջ ափանց վրայ կ'ամբառնար զղեակ մը որու բնակիչներն դաշնակից եղած են Հայոց հետ ինն դար Ն. Ք. Ասորեստանեայց լուծը թօթափելու համար. Կոմագինաց երկիրն էր սա, որոց ոստան եղած է Սամոսատ կամ Շրմշատ: Մակեդոնական տիրապետութիւնը մերժելու համար, դարձեալ համախոհութեամբ Հայոց հետ զէնքի կը դիմեն. առաջին թագաւոր կը յիշուի Օրոնտ կամ Հրանտ աներ Արտաշէսի Մեմնոնի (շուրջ 164 թուականին) երբ Վաղարշակ թագ կապած Հայաստան կը բարեկարգէր: Իսկ Հոովմէական հարստութեան ժամանակ Սամոսատ կառավարչական աթոռանիստ եղաւ բոլոր Եփրատական կողմերուն. Տիգրանակերտ, Եղեսիա և Պալմիրայ և այլն անոր իշխանութեան կը հնազանդէին: Իշխանանիստ քաղաքի մէջ ամփոփուած էին միւս դիւաններէն էական դոկումենտներ, և դիւանի ծառայութեան համար կային ճարտար քարտուղարներ, որոնք ամեն ազգի գրչութեանց տեղեակ լինելու էին: Եղեսիոյ Պղատոն ճարտասան հեթանոս իշխան դիւանին, կը վկայէ ձարտարաց գրուածոց փոխադրութիւնն յԵղեսիայէն ի Սամոսատ, և խորհուրդ կու տայ Մեսրոպայ դիմել զնալ Սամոսատ իւր փափաքելին թերևս գտնելու համար: Այս տեղն ևս ըստ վկայութեան Կորեան, Մեսրոպը՝ եպիսկոպոսէն և Հասարակութենէ մեծապաթեան Կորեան, Մեսրոպը՝ որոնք մեզ յիշելու հարկ պիտի լինի: Երբ կը մեծաբուր<sup>3</sup>, պարագաներ՝ որոնք մեզ յիշելու հարկ պիտի լինի: Մեսրոպը Սամոսատի մէջ կը հանդիպի թանկագին նիւթերու՝ իւր գործի ուսումնասիրութեան համար: Այդ աշխարհը դեռ Հայկազանց շրջանի մէջ Արամայ քաջագործութիւնքը կը յիշէր, Արշակունեաց հարստութեան ժամանակ հզօր արքայի Տիգրանայ յաղթութեանց շոինդն կը հնչէին լերինք և բլուրք, որոյ զէնքերու յաջողութիւնն կը գրգռէ զԱնտոնիոս դիմելու ի Հայս. ճանապարհին՝ կ'անուս զՇամշատ, ուր այնուհետև զօրանիստ և վարչական դիւան հաստատուեցաւ: Այդ դիւանի մէջ հետև զօրանիստ և վարչական, եթովպական, փիւնիկեան բարեփոխած Մեսրոպը գտաւ եգիպտական, եթովպական, փիւնիկեան բարեփոխած Պալմիրայի հնագոյն մատենաներն, թագաւորական և մեհենական գրուած Պալմիրայի հնագոյն մատենաներն համար Ռուֆինոս ծանօթացուց զինքը թիւնք, և հոովմայեցին Հաուփանոս կամ Ռուֆինոս ծանօթացուց զինքը Յոյն և Հոովմէական Պալէօգրաֆիայի հետ: Ահա այս է Մեսրոպայ գրոց գիւտի բաղդորոշ ժամանակն: Գիշեր ու ցերեկ անխոնջ պարապելով կը

1. Արեգ-քաղաք:  
2. Babelon. Histoire ancienne de l'Orient t. IV.  
3. Եւ ապա... Իջանէր ի քաղաքն Սամոսացոց, յորում մեծապատիւ իսկ յեպիսկոպոսէն և յեկեղեցոյն մեծարեալ լինէր. (Կրթ. էջ 10):  
4. Եւ այնպէս բազում աշխատութեանց համբերեալ վասն իւրոյ ազգին բարեաց ինչ օճան գտանելոյ. (Կրթ. էջ 10):

գտնէ իւր արուեստի բանալին. սրամիտ և անդրադարձող մտքէն չեն վրիպիր յոյն-հռոմէական այբուբենի զարգացման փուլերն. բաղդատութիւնն այլևայլ նշանագրաց, համեմատական կերպաձևութիւններ որ ընդունեն են նոյն աղբիւրէն բղխած գիրերն, լոյս կը ծագեն մտացը մէջ, երևակայութիւնն կը գործէ նաև ընոյ մէջ. իւր գիւտով հիացած յափշտակուած է և գերմարդկային զօրութեան կը գրէ իւր արած գիւտն, աստուածային շնորհաց պարգև մը<sup>1</sup>: Մեծամեծ գիւտեր եղած են առանց շատ մտածելու և խորհելու՝ ինչպէս իմաստասիրական կամ երկրաչափական խնդիր լուծելու համար միտք կը յոգնեցնեն մարդիկ: Բնութեան զաղտնիքներ ամեն օր ամեն վայրկեան մարդու աչքի առաջ են, բայց մտքի արթնութեան այն ինչ տուեալ վայրկեանը պէտք է դիպրև ճշտիւ ըմբռնելու և անդրադառնալու համար: Գալիլէոսի համար մի լապտեր, Նևտոնի համար մի տանձ, Վոլտայի համար մի գորտի ոտք, պատճառ եղան բնութեան օրէնքները սահմանելու և մեծամեծ գիւտեր անելու, գիտութեան կանգնած յաղթանակներն են անոնք անմահացնելով գտիչ հանճարներն: Այսպէս նաև Մեսրոպայ համար նշանակութիւն ունեցաւ մի հանգամանք, որ վրիպեր էր շատերու աչքէն: Նա Սամոսատի դիւանին մէջ գտաւ երկու գրութեան սխատեմ, սեմական լեզուներու այբուբենն աջէն դէպ ի ձախ և հորիզոնական դրութեամբ՝ և յոյն-հռոմէական գրութիւնն՝ ձախէն դէպ ի աջ և ուղղահայեաց դիրքով: Պահ մը մտածած է Փիւնիկեան և Կաղմեան գրերու վրայ, և տեսեր է անոնց փոխադրութիւնը անսայթար և գեղեցիկ: Գաղափար մը փայլակի պէս անցեր է մտքէն և աներևոյթ ձեռքի թաթ մը գրեր է սրտի գործարանի վրայ իւր փնտռած այբուբենն: Գիւտն եղած էր: Մեսրոպը իր սուրբ աջով ստեղծել էր հայ լեզուի նշանագրեր, նոր և սքանչելի կերպով, շատ պարզ և շատ բնական ոճով «փոխադրելով զհայերէն աթուրթայսն ըստ անսայթարութեան սիւղորայից հելլենացոց<sup>2</sup>»:

\* \* \*

Դանիէլեան նշանագրերն երկու պատճառաւ անյաջողութեան հանդիպած լինելու են. առաջին, որ նա վաղնջուց գտնուած գրեր յարմարացուցեր էր ըստ իւրում կարի հայերէն լեզուին՝ առանց փոխադրութեան ըստ յունին ձախէն դէպ ի աջ. երկրորդ՝ պակաս գրեր ունէր, որք փոխանակուած էին անշուշտ վերադիր նշաններով, որով ընթերցանութիւնը տանջանք մ'էր և ոչ անսայթար<sup>3</sup>: Այս երկու դժուարութիւնքը հարթեց Մեսրոպը և փոխադրութեամբ, երկրորդ՝ նոր լրացուցիչ գրեր ներմուծեց Դանիէլեան այբուբենի մէջ և անով ամբողջացուց ձայնական հնչուփները որով լեզուն կապեց վանկերով և գ. ուղղահայեաց դիրք

1. Որով պարզէր իսկ վիճակ յամենաշնորհողէն Աստուծոյ, հայրական չափուն ծնեալ ծնունդս նորոգ և սքանչելի սուրբ աջովն իւրով նշանագիրս հայերէն լեզուին: (Կոր. էջ 10).  
 2. Խոր. գիրք Գ. զԼ. ԾԳ.  
 3. Իսկ իբրև ի վերայ հասեալ թէ չեն բաւական նշանագիրք ողջ ածել զսիւղորայս և զկապս հայերէն լեզուոյն: (Կոր. էջ 9).

տալով գրութեան ոճին: «Եւ անդէն վաղվաղակի նշանակեալ անուանեալ և կարգեալ յօրինէր սիւղորայիւք և կապօք<sup>1</sup>»:

Վերջին բառերս հասկանալու համար ամեն ընթերցող պէտք է մտաբերէ մեր նախնեաց փորրիկ քերականն, ուր նախ գրեր կը սովորեցնեն և ձայնական հնչուփներ, ապա միավանկ, երկավանկ և բազմավանկ բառեր կապելով, հուսկ ուրեմն պարզ ընթերցանութիւն՝ առանց հեգելու կամ կապելու: Մեսրոպը իւր Քերականն անձամբ անձին կազմեր էր փոխադրած գրերով<sup>2</sup>. այս աշխատութեան գործակից եղած են երկու աշակերտներն, որք արդէն քահանայ էին, գորս Ս. Սահակ օգնական տուած էր «կարգելոյ զհեգենայս», մէկն Յովհան Եկեղեցաց գաւառէն, միւսն Յովսէփ ի Պաղանական տանէն, քաջ ասորագէտներ և տեղեակ Դանիէլեան վաղնջուց յարմարեցուած գրերուն: Մեսրոպը այնքան զոհ էր իւր արած գիւտով, մինչև անգամ յաջողութիւնն ուղղակի աղօթքի զօրութեան կը վերագրէր և ըստ այնմ իւր աշակերտքն գրի անցուցին<sup>3</sup>: Միայն մի բան կը տրտմեցնէր Մեսրոպայ սիրտն, որ իւր նշանագրերն յայլևայլ դարբութեանց քաղուած լինելով և փոխադրութեամբ՝ չունէին ոչ համաչափութիւն և ոչ նոյնաձևութիւն, որով զըջութիւնն տգեղ իմն և խառնակ կ'երևէր, նա մանաւանդ երբ համեմատութեան կը դնէր Հռոմէական գեղարուեստական գեղագրութեան հետ և սաստիկ բարի նախանձով կը վառուէր կերպաձևելու և կանոնաւորելու իւր գիրն առնոց. պէս: Այսպիսի գեղեցիկ ցանկութեան մղուած կը գտնայ Սամուսատի մէջ զՀուստինոսն «հրաշալի արուեստիւ հելլէն<sup>4</sup>՝ զըջութեամբ», և կ'աշխատին ի միասին կերպաձևելու Մեսրոպի գտած առ ձեռն պատրաստ այբուբենն<sup>5</sup>:

Կորեան գրածն նշանագրոցն ընտրութեան մասին, նախ կը վերաբերի Հռոմէական գեղագրութեան, որոյ հրաշալի արուեստագէտն էր Հուստինոս, բնականաբար նոյն արուեստով և ոճով ընտրեց նախ ուղղահայեաց հաստ գիծը, միացնելով մակագծերն նուրբ թելերով քառանկիւնի ձևով, նմանութեամբ հռոմէականի զըջութեան կատարելով նաև իւրաքանչիւրի ընտրութիւն: Մեր այս նոր դիտողութիւնս թող չգարմացնէ զընթերցողն, զի ընդհանրապէս զրոց գիւտի ուսումնասիրողաց<sup>6</sup> ուշադրութեանէն վրիպեր է միտք դարձնել Հռոմէական զըջագրութեան վրայ: Ամենքի միտքը ցրուել է «հելլէն» բառէն, որ մեր չորրորդ և հինգերորդ դարու մատենագրաց մէջ խառն նշանակութիւն ունեցեր է: Իսկ մեր մանր դիտողութեամբ կատարած ուսումնասիրութեան, նշանագրերու գեղարուեստական ոճին, հակառակ սովորական կարծեաց, համոզուեցանք որ Մեսրոպայ գտած նշանագիրները Հուստինոս Հռոմէականի կերպաձևած է Հռոմէական Գ. դարու կապիտալ

1. Կոր. էջ 10.  
 2. Խորենացի այնպէս գրած է որպէս թէ փոխադրութիւնը եղած է գործակցութեամբ Հուստինոսի, որ ճիշտ չէ. մենք Կորեան հետեւեցանք.  
 3. Եւ յարուցեալ յաղօթիցն աստեղծ գնշանագիրս մերս: (Խոր. գիրք Գ. զԼ. ԾԳ).  
 4. Հայոց համար խառն էր գաղափարը Հելլէն և Հուստինոս Հռոմէականի կոչումներուն.  
 5. Եւ անդէն ի նմին քաղաքի զբիւլ ոմն հելլենական դպրութեան Հուստինոս անուն գտեալ, որով զամենայն ընտրութիւնս նշանագրոյն գնրապոյնսն, զկարճս, և զերկայնս, զառանձինն և զկրկնաւորն միանգամայն յօրինեալ և յանկուցեալ: (Կոր. էջ 10).  
 6. Չարբանաւան — Հայ. Գրք. Վեներիկ.

(Գլխագիր) կոչուած կաղապարէն (modèle) և որքան ուրախ եղանք մեր վերև յայտնած բոլոր կարծեաց ստուգութիւնը գտնելով հաստատուած մի Հնագրչական (Paléographie) ծանօթարանութեամբ «Մեծ Համայնագիտական» բառարանի մէջ: «Այս կապիտալ գրութիւնն հին և նոր գրչութեանց հիմն կը կազմէ, փոխառեալ յունական ակփարեալէն,

Ա Բ Գ Դ Ե Է Ը Թ  
Ի Լ Խ Կ Ղ Մ Ն Ո  
Պ Ռ Ս Վ Յ Ր

Հայ գլխագիր Ե. դարու (միջին մասեաններ գրելու)

Չ Ժ Ծ Տ Զ Ծ  
Յ Ը Զ Լ Յ  
Ի փ փ

Հայ գլխագիր Ե. դարու (գործածական թէ՛ գլխագիր և թէ՛ Մեծատառ գրոց հետ)

որք ի գործածութեան էին իտալիոյ յունական գաղութներու մէջ. Յոյներէն առնելով իրենց այբուբենն, Հռովմայեցիք կանուխէն զրոշմեցին, այսպէս ասած, իրենց հանձարի կնիքն: Գրելու ուղղութիւնն երկար ժամանակ անորոշ մնացած է յունաց մօտ, որք երբեմն աջէն դէպ ի ձախ կը գրէին, երբեմն ձախէն դէպ ի աջ, և երբեմն շարամանեալ երկու ևս ուղղութեամբ<sup>1</sup>: Հռովմայեցիք ձախէն դէպ ի աջ ձգուածն ընդունեցին, նորս վերջնականապէս ուղղանայեաց դիրքը տուին գրերուն. բնագծի վրայէն անցնող հորիզոնական ձողն և կոր կամ փորանկեալ գիծերն կը միանան իրարու հետ ուղիղ անկիւնով: Սորա նախ արձանագրութեանց մէջ գործածուած են, ապա մատենաներու արտագրութեան համար

1. Sbu. La Grande Encyclopédie Բուսսօֆէդոն Հատ. Է. էջ 854:

փոքրիկ փոփոխութիւն կրեր են, այսինքն բնագիծն պահելով հաստ իսկ միացնող գծերն՝ նորք: Այս գրերու գեղեցիկ համաչափութիւնն պատճառ եղած է կոչուելու քառակուսի գիր (litterae quadratae): Այս տիպի գիրն պահած է միշտ իւր աւանդական գրութիւնն միապազաղ և խիտ, զանազան մեծութեամբ:

Տարակոյս չկայ որ գլխաւոր դժուարութիւնն կը կայանար Գանիէլեան նշանագրերու հետ զուգադրել համաչափութեամբ Զենտի և Պահլաւի կլորածև գրերն, որոնք հարկաւոր էին լրացնելու հայկական հնչմունքները և կապելու լեզուի բառերն: Ըստ մեզ Զենտ կամ Պահլաւ գրերն են գ. ժ. ծ. հ. ձ. յ. շ. չ. ց. որոց վրայ Հռուփանոս աւելցուցած է լատին գրեր Խ, Փ, Ք: Հռուփանոս չստեց իւր համարւին, և սքանչելի գրչութիւն մը գեղարուեստական յորինուածով ընծայեց Մեսրոպըին:

Մեր երկարագիր<sup>1</sup> կոչուածն, բաղդատելով Հռովմէական «կապիտալ» կոչուած գրութեան հետ, գծագրական (graphique) նմանութիւնը ցոյց կու տայ յիբաւի Հռուփանոսի ճարտարութիւնն կերպածեւելուն մէջ: Հռուփանոս Մեսրոպոյ հետ Գանիէլեան 22 նշանագիրքն, և այլ և այլ դպրութիւններէ քաղած 14, ընդ ամենն 36 նշանագիր՝ զամենն ճաշակով յարմարելէն վերջը, ինքնին աւորակիկ ճաշակը կը գրէ կերպածեւած նշանագրով, և կը սովորեցնէ Մեսրոպըին և իւր աշակերտաց գրչութեան արուեստը, «և իսկոյն ի թարգմանութիւն ձեռն արկեալ, խորհրդարար սկսանելով յԱռակաց գրոց Սողոմոնի<sup>2</sup>»:

Տասն և հինգ դար յետոյ, դիտելով Մեսրոպոյ ճգանց արդիւնքը, հանձարոյ ստեղծագործութիւնն, որուն Աստուած շնորհեց բազում հայոց գիրերը գտնելու, նոյնքան զարմանքով և հիացմամբ պիտի կրկնէինք կորիւնի զբաժն «հայրական չափուն ծնեալ ծնունդս Նարոց և սրանչելի, ստրք աշովն իւրով»: Նորագ, քանզի փոխադրութիւնն և ուղղահայեաց դիրքն բոլորովին նոր էր Հայոց և բոլոր մերձակայ ազգաց համար. սրանչելի, վասն զի լատին ամենագեղեցիկ գրոց տիպարի վրայ կերպարած էին ըստ օրինակի վերև յիշած «կապիտալ» գրութեան, զոր «գեղեցիկ համեմատութեամբ» գրուած կը գտնէ Մեծ Համայնագիտակ բառարանն. Ստրք աշովն, քանզի ամենայն աշխատութիւն թէ՛ գրերու ընտրութեան, թէ՛ անուանելոյն և թէ՛ դասաւորութեան վերաբերեալը՝ ինքնին կատարեր էր. այսու իրաւամբ և ստուգիւ ինքն է հեղինակ և գտիչ Հայերէն լեզուի նշանագիրերու<sup>3</sup>:

1. Քառակուսի երկաթագիր հետ մի և նոյն ժամանակ գոյութիւն ունէր նաև կլորամկիւն գիրը (Մեսրոբեան Երկաթագիր կոչուածն) որ աւելի արձանագրութեանց համար կը գործածուէր բան թէ մատենաներ գրելու, որ թղթի ամբողջ երեսը կը բռնէր: Երբ կլորամկիւն մատենաներու մէջ գրուէր, միշտ երկիջեան Մեծատառ էր, և աւելի յաճախեց այս ձևն Ե դարու սկիզբէն եկեղեցական պաշտօնակալի քոյր համար: Սակայն ընդ նմին կարելի է գտնել անդրախնի սկզբանէ մամբ բոլորովին կոչուածն, որ, նախապէս լուսանցքներու վրայ կը գրուէր, թեքիս Բոլորագիր կոչուածն ինչոպէս կը լինելով մի երեսի վրայ կը գրուէր խիտ և միապազաղ. իսկ գլխագիրն երկաթագիր, երբ երկու եջէ բաժանուած: Բառեր որք Գր. Մագիստրոսի դարը կը յիշեցնեն, թէ և բաղդատելով մեր գլխագիր — Երկաթագիր կոչուածն յոյն և լատին նախորինակներու հետ կը համապատասխանէ Onciale գրին որ է բոլորգիրը. մինչ Capitale (գլխագիրն) փոքր կոչուած քառակուսի երկաթագիրն, ինչ որ կը տեսնուի տրուած օրինակներու մէջ:  
2. Խոր. գիրք. Գ. գլ. ԾԳ:  
3. Մեսրոպոյ գրերու ոմանց արտաքին նկարագիրն ըստ ամենայնի նման է հին եգիպտաց

\* \*

Վրամշապուհի խաղաղ թագաւորութիւնն, Հայաստանի երջանկութեան կարապետն եղաւ. իրեն պաշտպանութիւնը հարկաւոր էր վերածնութեան գործին և չինայեց ո՛ր և է միջոցի՝ որպէս զի գրոց գիւտը յաջողի և ինքն է որ առաջին Դանիէլեան նշանագրերու գրոյցն կու տայ Ս. Սահակին և առանձին հրովարտակով իւր ազգակիցն Վահրիճ կ'ուղարկէ առ Հաբել և բերել կու տան զանոնք: Խաղտախուղա լեզուով ասորին չէր կարող հայկական ականջին յարմար ձայներ ստեղծել, որով ոչ գրերու ընտրութիւնն անել լեզուի մեքենայն և կապն յարմարցնելու. վասն որոյ անօգուտ եղաւ ամենայն ճիգն և ջանքն երկամեայ փորձի մէջ: Հայուն ցաւն հայն պէտք էր դարմանել, և այդ եզական հայն եղաւ Մեսրոպը:

Մեսրոպը այն ոգիներէն էր որ դժուարութեանց առջև չեն վհատիր, մանաւանդ իրենք ընդ առաջ կ'երթան յաղթելու և յաղթանակելու յուսով, այնքան մեծ է իրենց մէջ զգացած բարոյական ոյժն: Հայրենեաց մեծ սէրն ամենայն մարդկային տկարութիւն մեղցնել և մոռացնել կու տայ, ինքզինքն իրրև համաշխարհի մենամարտիկ կ'առաջարկէ գրուխ հանելու սկսած գործը, յորմէ կախուած էր Հայաստանի և շրջակայ դրացի քրիստոնեայ աշխարհաց հոգեկան և քաղաքական կեանքի փրկութիւնն. իսկ իրրև հայր, իւր հայրենեացը զաւակաց համար «հոգացեալ յարածամ տրամէր՝ երանելի այրն Մաշտոց՝ տեսանելով զմեծաջան ծախս մանկանցն Հայաստան աշխարհիս, որք բազում թողակօք և հեռագնաց ճանապարհօք և բազմաժամանակեայ դեգերմամբ մաշէին զաւուրս իւրեանց ի դպրոցս ասորի գիտութեան՝»:

Բազում տգիտութեան ձմեռներ անցեր էին, և հասել էր այն Գարունն որ Հայաստանի համար միշտ կանաչ և պտղաբեր պիտի մնար: Բացուեցաւ 404<sup>2</sup> գարունն, գետինն դալարեցաւ, ծառեր զգեցան տերև, մարգագետինք պճնեցան ծաղիկներով, օդոց անուշաբոյր շունչն զեփիւտի թևերով կ'անցնէր Հայաստանի վրայէն, ամենքի սրտի մէջ զարթեցնելով կեանքի յոյսն. յարութեան և վերածնութեան պատկերն էր, որուն ակնանտես կը լինէր Մեսրոպը Հայրապետական դաստա-

կան հերատիկ կամ սրբազան կոչուած գրութեան. որ պահուած է եթովպացեաց գրութեան մէջ որոց նման է նաև լատին «Կապիտալն». արդեօք ի սկզբան մերն ևս կոչուած է երայթագիր որ տգիտութեան դարերում փոխուել է երկայթագիր: Մինչև ցայսօր վրացիք իրենց երկայթագիրն — խուցուրի — ասեն որ է եկեղեցական կամ սրբազան որ և Մեհենական:

1. Փարպեցի, էջ 35:  
 2. Այս տարեթիւն անտարակուսական պէտք է համարել, զի Մեսրոպը 45 տարի հոգևոր կեանք վարեց, և մեռաւ 439 թ. էթէ 35 հաններ կը մնայ 404, որ պէտք է հաշուել սկիզբն դպրութեան Հայոց: Կորեան Բաբելլաս կամ Աստեմանիի Բաբբուլաս յիշած Եպիսկոպոսն 412-435 կարոց է հանդիստ իւր տարեթիւն պահել ամուր, մինչ մի ուրիշ եպիսկոպոս Տիգրանաւ կերտի, Ակակիոս անուն, ձեռնադրուած է շուրջ 400 թ. և վախճանած 431, սրով Ս. Մեսրոպը 404 թ. հանդիպած լինելու է սրբան: Իսկ ժամանակակից Եղեւնոյ Եպիսկոպոս յիշուին Փաւ կերաս 398-408 (Series Episcoporum ecclesiae catholicae. P. Pius B. Gams 1873 Ratisbonae): Եթէ Կորին չի յիշատակեր զայս, պէտք է բնական մոռացութեան տալ այն մեր Թարգմանիչներուն՝ Եզնկայ և քնկերաց, որոնք զեղեցիկ հերասիրութիւն ընդունելով Բաբելլաս Եպիսկոպոսն կոպտան, որ Թարգմաւորութեան տակ խօսելով իրենց Վարդապետի՝ Մեսրոպրի՝ ժամանցը Եղեւնոյ մէջ, կարծել ատած է որ 404ին Դանիէլն արդէն եպիսկոպոս եղած էր Եղեւնոյ:

**I**N POSUIT NATURALI LOCIS QVOI TEMPORE PRIMVAI  
 DEVCALIONVACVVM IAPIDESIACEAYITINORBE  
 VNDEHOMINESNATI DVVRVMGENVSEIRGOAGFERRAI  
 RINGVISO LVMLPRIMISEXTEMPILOMENSIB ANNI

(Capitale carrée). Գլխագիր Բ. կամ Գ. դարու (Վասիկ. ձեռագ. 3256) (Միջինան ժամանակի գրելու համար)

Ի ԵՅԱՄ ԴԻԵՉԵՐՈՒԼԵՅՈՒՅՅ ԻՐԿԱԿԱ Ն  
 ԱՐԱԿԵՐԱՐԱՍՈ, ՅՈՒՄՆ ԵՄՈՒ ՈՒՍԵ, Ի  
 ՀԱՅՐԱՊԵՄՈՒԴԵԱՆՏԱՅՈՒՅՅ ՄՍԳՐԻԳՈՐԻ  
 ԵՒ ՅԵՊԻԱԿՈՊՈՍՈՍՈՒԴԵԱՆ ԿԻԻ ԼԵԿԵՅԻՍ Յ  
 ՆԱՏԱՍԳԻՍ ՄՆԻՄՈՅՆԵՐԱԻՍԻ. ՈՐՈՒՐ Ա  
 ՅԱԻ ԻՊԱՄԻԵԿԻ ԲԱՍԻՍՈՍԻՆԵՆԵՂԵՅՈՒՅՅ  
 ԱՐԵՆՈՒ ԻՐՈՂԻՍ, ՉՈՅՈՍԾԱԲԱՍՈՒԱՐԱՆՈՒ  
 ԻՎԱՊՍԱՆԵԿԻՍՅ ԱՍԸՆՈՒԵՐ ԱՍՄԱՐՈՅ Յ  
 ԲԵՐԻԿԱ ՍԱՐԻՐԱԻՍԻ. ՈՐՈՅՄԻՐԵ ԲԱՐԵՊԱԸՐ  
 ԱԲԵԱՍՈՒՄԱՍՏԵՄՈՒՏԱՐԱՉԱՐԵՂԵԱՅՐԱՈՒՅ

Օրինակ Հայ գլխագիր միջինան գրելու



մրմունջով համբոյր տալով ափերուն: Բնութիւնն ևս կը մասնակցի նուազաց քաղցրաձայն հնչմանց, ժողովրդի հրճուազին ծափերուն, երբ անմահ Սահակ և Մեսրոպը իրարու ցանկալի ողջոյնը կու տան<sup>1</sup>: այդ վայրկեանէն կը սկսի Հայաստանի համար նոր շրջան, «որով երանելի և ցանկալի աշխարհս Հայոց անպայման սքանչելի լինէր<sup>2</sup>»:

Մեսրոպըի հնարած գրերն կատարեալ էին ձայնական թիւովն և համաչափ ձևովն գեղեցիկ. համապատասխան հայկական բարբառոյն, որով «ինքեան ձայնիւ և ոչ մուրացածոյ բարբառով շահել զոգիս Հայաստան մարդկան» կարելի էր ստուգութեամբ. փորձը արդարացուց ամենայն ակնկալութիւն. երկիր ամենայն համոզուեցաւ որ «աւ՛ է» և ուրիշ չէ կարող լինել. պատուէր տրուեցաւ ամեն դպրոցներու մէջ սովորեցնել և կրթել Մեսրոպըի հրահանգներու համեմատ: Հայաստանի ամեն կողմերէն ուսումնասէր պատանիք թափեցան Այրարատ, ուր բացուեր էր աղբիւր ամենայն գիտութեանց: Մովսէս՝ մարգարէից դասի հետ, Պողոս՝ Առաքելոց գնդովը, ձեռքերնին բռնած Քրիստոսի աւետարանը, Սահակայ և Մեսրոպայ առաջնորդութեամբ մտան Հայաստան՝ «հայարարառք հայերենախօսը<sup>3</sup>» և Աստուծոյ գիտութեամբ առժամայն լցին լուսաւորեցին Հայ ազգն: Այրարատեան աշխարհն նախկին և զկնի դարերու մէջ եղաւ Հայոց քաղաքական կեդրոնը, ազգութեան գաղափարի խանձարուրքն. այսպէս եղաւ նաև քրիստոնէութեան կեդրոնն, ուր առաջին անգամ ծագեց խաչի լոյսն, թագաւորական և Հայրապետական գաւազանները իրենց իշխանութիւնը հաստատեցին Վաղարշապատի մէջ, ասոնց երկուքի համերաշխ կառավարութիւնն, արդիւնաբերեց Հայաստանի վերածնութիւնն. գրոց զիւտով ազգային գրականութեան՝ քաղաքակրթական գործն հրաշքներ գործեց, կերպարանափոխ եղաւ Հայաստան Ոսկի դարու կնիքն ի ճակատին: Մինչև ցարդ՝ Բուզանդ իրաւունք ունէր բամբասելու կամ ամբաստանելու զհայս, որ քրիստոնէական կրօնքն, իբրև լոկ մարդկութեան ուսումն ընդունած էին հայք. և իրաւացի էր մասամբ՝ թէ ոչ ամբողջապէս, վասն զի եկեղեցական պաշտամունք ասորերէն էին, անհասկանալի լեզու հայ ժողովրդեան<sup>4</sup>: Իսկ գրոց զիւտէն վերջ, մարգարէք, առաքեալք և Քրիստոս ինքնին աւետարանաւն հայերէն կը խօսէին, հասկանալի ամենայն ժողովրդեան Ս. Սահակի դիւրիմաց թարգմանութեամբ. «Քանզի յԱրարատեան գաւառին ի կայս թագաւորացն և քահանայապետացն, բղիւնցին Հայոց շնորհք պատուիրանացն Աստուծոյ<sup>5</sup>»:

1. Որոց առեալ զամենայն նախարարազունդ աւագանոյն ամբոխ ի քաղաքէն ելեալ պատահէին երանելոյն գափամբ Ռահ գետոյն. և զցանկալի ողջոյնն միմեանց տուեալ, ուստի բարբառոց ցնծութեամբ և երգօր հոգևորօք և բարձրագոյն օրհնութեամբ ի քաղաքն դասնային և զաւուրս տօնական ուրախութեամբ անցուցանէին: (Կոր. էջ 11).  
2. Կոր. էջ 12:  
3. Կոր. էջ 12:  
4. Քանզի պաշտօն եկեղեցւոյ և կարգացմունք գրոց ասորի ուսմամբն վարէին ի վանորայս և յեկեղեցիս, յորմէ ոչինչ էին կարող լսել և օգտել ժողովուրդքն այսպիսի մեծ աշխարհի, յանրութեան լեզուին ասորոյ: (Փարպ. էջ 36).  
5. Կորին, էջ 13:

\* \* \*

Մեսրոպը իւր յանձն առած պարտականութիւնն կատարած էր ամենայաջող և ամենափայլուն կերպով. Հայաստանին տուեր էր իր սեփական Գիրն նոր և սքանչելի իր սուրբ աջովն ստեղծուած: Այս աւանդն յանձնեց ամենապահով և ամենակարող ձեռքերուն մէջ ի կատար ածելու: Ս. Սահակ և Վառնապուհ անձամբ կը ստանձնեն ազգի մտաւոր մշակութեան գործը: Մեսրոպը հանգիստ աչքով դիտեց վերածնութեան սկիզբն, և ասեց՝ արդ այս ուրախութիւնն որ իմս է լցուած է. երջանիկ եմ, վախճանիս հասած եմ, փրկուած է Հայաստան և իր Քրիստոսական հաւատքն, Եկեղեցին: Սակայն իր առաքելութեան գործն չէր աւարտած, ծրագրի զլիսաւոր և էական մասն իրագործել էր, պէտք էր ամբողջացնել՝ ֆնացած մասն ալ յօդել մեծագոյն մասի հետ. Ծրագրի այս պակաս մասն էր լրացնել նաև Վրաց և Աղուանից գրի և դպրութեան պակասութիւնն, լուսաւորել այդ երկու քրիստոնեայ աշխարհներն և կապել զանոնք սերտիւ Հայոց հետ, կրօնքի և ընդհանուր ազգային ինքնապաշտպանութեան շահերով: Պարսկական վտանգն, հաւասարապէս սպառնալից էր նաև այդ երկու փոքր և աւելի տկար ազգութեանց համար: Մենք ձրիարար չենք վերագրեր Մեսրոպըին այս գաղափարը, որ աւելի պատիւ կրնայ բերել իւր հանձարին քան նուաստութիւն, այլ իւր զործոց ընթացքէն յայտնի է այն նպատակը որուն կը դիմէ:

Խոսքովու անկմամբ, ինքն ևս պաշտօնագուրկ եղած, ասացինք, վանականութեան մէջ գտաւ միջոց մը աւելի մօտիկ ապրելու ժողովրդեան հետ. քաղաքական յարաբերութիւնն արգիւտած էր իրեն իբրև արքունեաց վնասակար մարդու՝ մենչև անգամ Արարատն բնակելու, քաշուեր էր Սիւնեաց աշխարհի մի անկիւն: Սեաւ զգեստ հագած ժամանակ, նա ուխտեց ազնուական վրէժխնդրութիւն իր թշնամեաց դէմ ոչ սրով, այլ զրչով. զրչի գրածն տապարն չի կարող ջնջել, կ'ասէ ուս առակն: Պէտք էր կոտել ոչ զրահապատ բանակի դէմ, այլ աւելի մութ, աւելի խաւար բանակի մը դէմ, որ որմզդական հուրն հայ հողի վրայ կը խրոխտար վառելու: Կրօնական մոլեռանդութիւնն է որ ըզվրայ կը խրոխտար վառելու: Կրօնական մոլեռանդութիւնն է որ ըզվրայ Պարսիկս կը մղէ Հայոց դէմ, ոչ ազգին այլ նորա կրօնքին: Ուստի Մեսրոպը իւր ազգի կրօնքն ուզեց ամրապնդել և քրիստոնէութիւնն, զօրացնելու համար հարկաւոր համարեցաւ ստեղծել զիւր և դպրութիւն, հայկական մատենագրութիւն. զի Ս. Գրոց ծանօթութիւն՝ հիմն է հաւատոյ վարդապետութեան: Քաջ ըմբռներ էր Մեսրոպը քրիստոնէական կրօնից ներշնչած ազնուական և վեհ և ազատ գաղափարները. քրիստոնէութիւն և ազգութիւն համերաշխ կրնան ապրիլ, և այդ երկու գաղափարները մարդու մտքի խաղաղութիւնը չեն վրդովեր, սիրտը երկուքի չեն բաժաներ: Հայաստանի այն ժամանակի դիրքը և պարագաները կը

1. «Եւ բազում անգամ մարտնչէր ընդ այնոսիկ, որ ոչ ընդ նովին օրինոց մտանէին». (Ե. դիւէ էջ 11. և բովանդակ զիւրքն):

բռնադատէին զօրեղացնել մի միայն ըրիստոնէութիւնն, որ իբրև վահան լինէր ազգային պաշտպանութեան, մինչ այլ ուղղութիւն չար ևս պիտի գրգռէր չարասիրտ թշնամին, իբրև քաղաքական շարժումն դէպ ի ապրտամբութիւն ընդդէմ արքայի իշխանութեան: Համանման վիճակի մէջ էին նաև ըրիստոնէայ վրաստանն և Աղուանիստանն. մազդէզի կրօնքն հոն ևս իւր արբանեակներն սկսել էր զրկել. բիրտ ուժի առաջ ապամայ իսկ պիտի խոնարհէին. ասոնց մէջ նոյնպէս ըրիստոնէութիւնն զօրեղացնելու համար հարկաւոր էր գիր, ուսումն, դպրոց և Ս. Գրոց գիտութիւն, ուր առաքինութեանց ամեն օրինակներ կան:

Մեսրոպին յայտնի էր այդ երեք ազգաց, Հայոց, Վրաց, Աղուանից ազգայնական նախանձն և խուլ մրցումն առաջնութեան համար. հետեապէս քաղաքական հողի վրայ մերձեցումն թող որ անկարելի էր, այլ և վտանգաւոր և սխալ պարագայի մէջ պիտի դնէր զՀայս. ուստի նա ջանաց այդ երեք ազգերից կապել և կազմել մի դաշնակցութիւն՝ ըրիստոնէական եղբայրութեան զազափարով: Ահա նա այնուհետև իր կեանքը և ճիգը պիտի նուիրէ այդ փայփայած զազափարի մարմնացման: Ուստի նա կրկին տեսակաւ կը հրաժարի տարածումն անելու իւր ուսման բուն Պարսից բաժնի մէջ. առաջին՝ որ նրան գուցէ արգիլուած էր ներգործական մի դեր կատարել այդ բաժնի Հայոց մէջ, ուստի անոր ուսուցումն և վարդապետութիւնն կը թողու յօժարբար Տէր Եպիսկոպոսին, այսինքն Ս. Սահակայ, ուսուցանելու այն տեղերն ուր կայանք քաղաքաց էին<sup>1</sup>. երկրորդն՝ որովհետև ոչ ոք քան թէ ինքն բաւական էր իւր յղացած ծրագիրն իրագործելու նախապէս ծանօթ լինելով ամենայն իշխանաւորաց, և միանգամայն Հայաստանի սահմաններէն դուրս գործելով, իւր ներքին խորհրդոց և նպատակներուն ոչ ոք կրնար հասու լինել այն լրտեսներուց, որք բռնապետական իշխանութեան կոյր գործիք են մեծ մարդկանց դարաններ լարելու համար, որոնք կը մարտնչին անոնց եղերական սկզբունքներուն և հրամաններուն դէմ:

Մեր կարծեաց ստուգութիւնն կը հաստատուի, հիմնուելով կորեան ասածների վերայ՝ հետեւեալ երկու դիտողութեամբ, առաջին՝ ոչ Վրացիք և ոչ Աղուանք երբէք մտաբերած են ինքնաբերաբար իրենց առանձին գիր ունենալու. երկրորդ որ՝ Մեսրոպը անկախ հետեւելով իւր մտածութեան, ինքնաբերաբար կը ստեղծէ վրացերէն և աղուաներէն այբուբենն չև գնացած այդ երկիրները: Էլ յիշուի յետ պատրաստելու ըստ կարգին վրաց գրերն, Մեսրոպը իւր յառաջոյն աշակերտներէն ումանք հետն առած կ'ելլէ կ'երթայ վրաստան և թագաւորին կը ներկայանայ և իւր արտեստե բացատրելով կը յորդրի ուսանել, մինչև յանձն կ'առնուն Մեսրոպրի խնդիրքը կատարել<sup>2</sup>: Չարմանալի ետանդ, սովորական մարդկանց հասողութենէն բարձր բմբունումն, դիւցազնական քաջագործութիւն. ինքն Մեսրոպը գնացել անձամբ կը խնդրէ որպէս զի ընդունին իրենց

1. Յետ այնորիկ անոնոր հաւանութիւն երանելին Մաշթոց որպէս զի Տէր Եպիսկոպոսն ի Ապինականն և նա ի սփիւսս հեթանոսաց գրանն կենաց սերմանիցնն: (Կոր. էջ 14).  
2. Կը նորա գիր արուեստն առաջի արկեալ՝ խրատէր յորդորելով. յարում և յանձն առնալ ամենեցուն զխնդրելիմ կատարել: (Կոր. էջ 15):

համար պատրաստուած այբուբենն: Ճիշդ այնպէս ինչպէս բժիշկը հիւանդին չուզած դեղը կու տայ, փափարելի առողջութիւնն զտնելու համար: Եթէ հայ լինէր պատմագրողն, թերևս չափազանցութիւն համարէինք, բայց այդ ասողն ինքն վրացի է ազգով և եպիսկոպոսական

QUIBONANE  
PUIARENECAP  
PELLARESOLEAT  
QUODEARUM  
KERUMUID:

(Onciale latin) Մեծատա գրութիւն Գ. դարու (երկիջեան մատաններ գրելու համար)

ΤΩΒΑCΙΛΕΙΤΟΙΓΡΑ  
ΓΜΑΚΑΙΕΠΟΙΗCΕ  
ΟΥΓΩC  
ΚΑΙΑΝΘΡΩΠΟCΗΝ  
ΙΟΥΛΑΙΟCΕΝCΟΥ  
CΟΙCΤΗΠΟΛΕΙΚΑΙ  
ΟΝΟΜΑΑΥΤΩΜΑΡ  
ΔΟΧΑΙΟCΟΤΟΥΙΑΙ  
ΡΟΥΤΟΥCΕΜΕΕΙΟΥ:

(Onciale grec) Արձանագրութեանց համար գործածուած նախապէս՝ ապա անցան մատաններու գրչութեան. (Սինայի Ս. Գրոց օրինակէն Ե. դարուն — երկիջեան մատաններ գրելու համար)

վիճակին հասած կորիւնն է գրողն, վարդապետի կրտսեր աշակերտն, որի առանձին խնամքը վայելել է: Ինչ էր Մեսրոպրի նպատակը, կազմել մի և ուժեղ վրաստան, միացնելով գրագիտութեամբ զանազան լեզու խօսող կովկասու բնակիչքն ի մէկ կրօնք և ի մէկ ազգութիւն: Թագաւոր և եպիսկոպոս ամեն կողմերուց կը հաւաքեն մանկտի և կու տան վարդապետի ձեռքը, «զոր առեալ արկանէր ի բովս վարդապետութեան և հոգևոր սիրոյն ետանդեամբ... յայնչափ ի մասնաւոր և ի



Չնայած որ Սահակ և Մեսրոպը նախածանօթ էին Բիւզանդիոնի արքունեաց, և նուիրականներն խոնարհական թղթերով կը ներկայանան իշխողաց, այնուհանդերձ ոչ Սահակ և ոչ Մեսրոպ կը խուսափեն յունական նախանձէն և կեղեքող յանդիմանութենէն թէ՛ ինչո՞ւ առ Յոյնս չէին զիմած Գրոց գիւտի համար, այլ ծանծաղ ասորի գիտութեան: Բայց բուն պատճառը այդ չէր, այլ ներքին քաղաքականն, զի Յունաց սիրելի չէր որ Հայք Պարսից հակէին, խաղաղութեամբ ապրէին, վասն զի Վրաստանի խաղաղասիրական և հաւատարիմ ծառայութիւնն արքայից արքային, բերաւ Հայաստանի երջանկութիւն, զարգացումն. քաղաքակրթութեան ճանապարհի վրան կանգնեցան Հայք իրենց առանձին սեփական գրովն և գրականութեամբ, զայն չէին ուզեր յոյներն, կամէին Հայաստանի խոտվութիւնն որպէս զի իրենք առիւծի բաժինը վերցնէին, ցանկային որ Հայք մնային կուրուքեան մէջ, որով իրենց համակրութիւնն կը շրջէր դէպ ի յոյներն, և յուսային ապահովել իրենց սահմանները: Այս մտածութեան արտայայտութիւնն է որ կը լսենք Թէոդոսի բերնէն խրոխտ և տիրահրաման ձևովն, « վասն որոյ հաճեալ էաք ընդ մերոյ ծառայիցդ արհամարհել զայսպիսի ուսմամբդ<sup>1</sup> »:

Այս արհամարհական կերպէն պահ մը տագնապած պիտի լինի Մեսրոպը, որ իւր պատգամաւորութիւնը զատարկ անցնի. բայց նա գիտէ հեզութեամբ և իմաստութեամբ խաղաղել ներքին ալէկոծութիւնն և հմտութեամբ տանել իւր նաւն ի նաւահանգիստ: Մեսրոպը իւր համբաւըն բարձրութեան վրայ կանգնած, գիտէ ամփոփել իւր ոգւոյ մեծութիւնն և զոհել իւր փառքն հայրենեաց սիրոյն համար. և կատարեալ ուրացութեամբ իւր բոլոր ջանից և արդեանց, օտար երկրի մէջ, օտար ժողովրդեան և թագաւորի առաջ կը հրատարակէ ի լուր աշխարհի թէ գրոց գիւտն մարդկային ճարտարութեան գործ չէ, այլ Աստուծոյ շնորհքի տուրքն է, վերնական պարգև մ'է, հրաշքի գործ է: Այս վեհանձն յայտարարութիւնն կը կակղէ Թէոդոսի սիրտն, և ուսուցանելու հրամանն կ'արձակէ: « Բայց զի յետոյ պատմեաց մեզ Մեսրոպը թէ կատարումն արուեստիդ ի շնորհաց վերնոյն եղև. գրեցաք զի ամենայն փութով ուսցին<sup>2</sup> »:

Արդեօք ներելի է ենթադրել թէ հրաշքի պատմութիւնն և « թաթն աջոյ ձեռին գրելով ի վերայ վիմի » ևն մտածուած է ի Բիւզանդիոն, յունական նախանձէն ազատելու համար. և յաջողեցնելու իրենց խընդիրներն, որոց համար եկած էին: Արդարև հրաշք է հաւասարապէս յունական չարութեան և ատելութեան շիջումն. որք այնուհետև կը փոխանակեն սէր և անպայման համակրութիւն, առ անձն և առ գործն. զարմացումն և հիացումն շնորհալից կերպարանացն՝ որոյ վերայ ցուլա-

1. Խոր. զերբ Գ. զԼ. ԽԵ.  
 2. Խոր. զերբ. Գ. զԼ. ԾԷ: Հայկական գրոց ծագման մասին արժան էր առանձին խօսել. սակայն ներկայ յոգուածն իրբև վարքագրութիւն նկատելով, նշանակեցինք լսի ընդհանուր գծեր, առանց իջնալու մանրամասնութեանց, զանց առնելով համեմատել առանձնակ գրերու առնչութիւնն օտար դպրութիւններէ առանձնի հետ: Այսչափս յայտնի է ամեն ընթերցասիրաց որ Մեսրոպը շատեղեց ոչնչէ հայ ալփարեսն, այլ վաղնջուց գտնուած գլխաւոր երեք ճիւղաւորման տիպարի դպրութիւններէն ճարտարմտութեամբ կազմեց իւր այբուբենն, նոր ձայնակաճ անուանումն տալով փոխ ասած գրերուն, որք թերևս նախակաղապարի մէջ այլ հնչումն և զօրութիւն ունեցած են:

նայր սրբութեան և զիտութեան լոյսն, անբաւ խոնարհութիւնն, յորմէ վերնոյն պարգև համարեցաւ զրոյ գիւտն և արուեստն ուսուցչութեան, « հրաման ելանէր վայելուչ մեծարանօք զՍուրբն՝ Ալուամիտ անուն կոչելոյ<sup>1</sup> »: Յարգելով նաև Ս. Սահակայ խնդիրն, հրաման կը տրուի պատուով ընդունել զինքն « որպէս զարդարև վարդապետ իւրեանց (հանգոյն արքեպիսկոպոսին իբեսարու) և դարմանք և ծախք յարքունուսս եղիցին<sup>2</sup> »:

Այսպէս ուրեմն յաջողութեամբ պսակեցաւ Մեսրոպայ պատգամաւորութիւնն: Բայց խորենացոյ մի բանն մթին կը մնայ որ այս մասին կը գրէ. « առին զոր յուսայինն և զոր ոչն յուսայինն »: Ինչ էր արդեօք Սահակայ և Մեսրոպայ յուսացածն և ոչ յուսացածն: Յուսացածնին թուի Մեսրոպի ուսուցանելու հարցն էր, որի մասին արդէն համբաւն հոչակուեր էր յունական բաժնի մէջ, ուր շատ իշխանաւորաց և եպիսկոպոսաց՝ աշխարհական վարքի մէջ եղած ատենէն ծանօթ էր, ուստի անոնց միջնորդութեամբ կը յուսային յաջողիլ հրաման ընդունելու, նա մանաւանդ որ « հիւսիսական կողմանց հոչակելոց » վրաց և Աղուանից մէջ արագ տարածումն զրոյ դպրութեան, յունական ազդեցութեան աւելնալուն հրապոյր մ'էր, որով Մեսրոպի միջոցաւ միայն կը յուսային յաջողիլ և ձգել ի միութիւն գէթ ըստ կրօնականին: Իսկ որ ոչն յուսայինն, էր խնդիր Ս. Սահակայ, վերահաստատելու իւր հովուական իշխանութիւնն այն կողման վերայ, ուր կեսարիոյ աթոռն արդէն տարածեր էր իւր թեւերն. և թերևս հակառակ էին եպիսկոպոսներէն ոմանք, որք նախամեծար ընտրէին հպատակել Բիւզանդիոնի « ինքնագլուխ » պատրիարքին քան փոքր աշխարհի մի կաթողիկոսի: Այս հրամանը ձեռք բերելու համար երկու խոչընդոտներ կային, մին թագաւորական՝ միւսն պատրիարքական իշխանութիւնը. հարկ էր նախ հաւանութիւն առնել կայսերէն, ապա հաճութիւն պատրիարքէն. ահա այս չյուսացածն ևս կ'ընդունին: Թէոդոս կը հրամայէ կեսարու արքեպիսկոպոսին հաւասար պատուով ընդունել և յարքունուսս հոգալ ծախսերը: Իսկ Ատտիկոս նոյնպէս « հրամանաւ ինքնակալին » իշխանութիւն կուտայ Ս. Սահակին « իւր կողմը », այսինքն վիճակին մէջ, վարդապետելու:

Ինքնագլուխ Պատրիարքն իւր ճոխութիւնն ցոյց տալու համար, զՄեսրոպը կը ձեռնադրէ եկեղեցիաւորութիւն: Մեսրոպը ցայն վայր ձեռնադրութիւն չէր ընդունած, այլ միայն արեղայ էր, և Ուսուցողի պաշտօն յանձնուած էր իրեն Ս. Սահակի կամքով. մինչ եկեղեցական նուիրականութեան կամ ժառանգաւորաց մէջ մտնելու համար հարկաւոր էր ունենալ մի որ և է եկեղեցական պաշտօն, սկսած փոքր աստիճաններուց մինչև մեծերը, և զայս առանց յատուկ օրհնութեան կամ ձեռնադրութեան կարելի չէր ընդունել: Ուստի Ատտիկոսի « եկեղեցիաւորութիւն »-ը պէտք է հասկանալ՝ որ Մեսրոպը այդ ձեռնադրութեամբ եկեղեցական աստիճան մի ընդունեցաւ և անցաւ ի շարս ժառանգաւորաց Պատրիարքի Նուիրապետութեան, որով համարձակապէս կարէր իւր արուեստն ուսուցանել

1. (Իկումն ?) (Կորին էջ 16).  
 2. Նոյնն և Ատտիկոս գրէ. « արդ հրամանաւ ինքնակալին Ալգոստոսի տուեալ լիցի թեզ իշխանութիւն վարդապետել զկողմիդ մեր ». (Խոր. զերբ Գ. զԼ. ԾԷ):

հայ մանկուտոյն «այնր կողման»։ Այդ ձեռնադրութեան միջոց նոյն իսկ թուի նոր անուն մ'աւ ընդունած է Մեսրոփը, Կորեան այս աղաւաղ բացատրութեամբ «հրաման ելանէր, վայելուչ մեծարանօք զՍուրբն (Աղուժիտ) անուն կոչելոյ։ «Սուրբ» անուանն ենթադրել կու տայ իւր գոյականն, եթէ ինքն իսկ մի գոյականի աղաւաղումն չէ։ Քանզի միտ ղնելով Խորենացու գրածին «զի գոյր տեսեամբ հրեշտակական, գործովը մարմնով արտափայլեալ, սարասիւք անճառ» են, այդպիսի տպաւորութիւն թողով Ատտիկոս հայրապետի վերայ, ինչ աւելի յարմար կը տեսնար իւր հրեշտակակերպ ձեռնադրելոյն քան Մերուրն (Սրուրն)՝ անուն կոչելու մեծ Ուսուցչին, որ «ոչ որպէս արուեստ ուսուցանէր այլ իբրև զինգի առաքելաբար աշակերտելոցն տայը» 1։

Սակայն ըստ ամենայնի չէ մարթ հաւաստեալ ասել թէ Ատտիկոսի ձեռնադրութիւնն առքը աստիճան տալն եղաւ, զի յառաջ քան զձեռնադրութիւն Ս. Սահակ Ուսուցող մերոյ աշխարհի կոչէ, իսկ ձեռնադրութենէ յետոյ վարդապետ, իբրև առանձին իմն շնորհ կայսեր հրամանաւ եղած։ Վարդապետական աստիճանն իբրև Մագիստրոս եթէ տրուած է, հապա Ատտիկոսի ձեռնադրութիւնն ինչ նշանակութիւն կարող է ունենալ։ Արդեօք լոկ մի ձև, մի արարողութիւն էր, առանց սուրբ կնիք տալու, ինչպէս առ լատինս կոչին երբեմն Աբբայը, աշխարհականք ոմանք, որ ունին հերակտրութիւն և սև պարեգօտն և ընդունին հասոյթս եկեղեցիէն, սակայն ոչ մի կարգ չունին և ոչ ձեռնադրութիւն։ Եթէ այսչափը համարինք Ատտիկոսի եկղեսիաստիկոս ձեռնադրութիւնն, մեծ բան մը չէր և չ'արժէր պարծենալ և գրել առ Ս. Սահակ, իբրև մի մեծ վարձատրութիւն մը արած այն մարդուն՝ որոյ ձեռամբ «Ամենակալն բղիսեաց զշնորհս Հոգւոյն»։ Այլ յօժարեալ եմք կարծել որ Մեսրոփը առանձին տնօրինմամբ ընդունած է հոգևոր ձեռնադրութիւն։ Առանձին տնօրինումն ասեմ, վասն զի երանելի Վարդան կամ Վրիկն, վերը ասացինք՝ հարճորդի էր Պապայ և Հայր Մեսրոփի. արդ եկեղեցական կանոնք կ'արգելուին ոչ միայն պոռնկութենէ այլ նաև երկրորդ և մուսուլթենէ ծնածներն չձեռնադրել։ Այս կանոնն ընդունած է նաև Ս. Սահակ «Յաղագս քրեպիսկոպոսաց» զլիտոյն մէջ։ Կանոն Ը. այսպէս է. «Իսկ զպոռնկորդիս և որ յերկրորդաց են հաւասար մինչև յերրորդ ծնունդն, ըստ առաջին կանոնաց հետի կացցեն ի կարգէն և ի շնորհացն»։ Թէպէտ Մեսրոփը «պարկեշտ և սուրբ լինի, զարդարուն ճշմարիտ հաւատովը և գործովը առաքինութեանց, ցանկալի ամենեցուն և պատուական, որպէս վայել է պաշտօնէից Աստուծոյ» (անդ) սակայն ոչ Ներսէս և ոչ Սահակ արքեպիսկոպոսունք Հայոց, պիտի կարենան ձեռք ղնել իրենց ազգականի վերայ և կոչել քահանայական պաշտօնի։ Եթէ ծնունդեան թերութիւնն չլինէր, ուրիշ ինչ պատճառ կարող էր արգելը լինել Մեսրոփի ձեռնադրութեանն։ Թերևս պիտի ասէք, որ ինքն չէ ուզած, առ խոնարհութեան հրաժարել է։ Բայց թող մի անգամ մտածէ թէ Ս. Ներսէս ինչ հանգամանքներու մէջ ձեռնադրուեցաւ և բռնադա-

1. Ս. Մեսրոփոյ փոքր վարուց մէջ ասուած է «Սրովբէատիսն անուն»։  
 2. Խոր. գիրք Գ. ԳԼ. Կ.  
 3. Սոփեբը. Կան. Ս. Սահակայ.

տեցաւ մտնելու յեկեղեցական վիճակ<sup>1</sup>, նոյն բարուց մարդիկ, նոյնպէս պիտի վարուէին Մեսրոփի հետ, բռնի ձեռնադրութիւն ընդունել պիտի տային այնոր որ «գերազանցել էր քան զամենքն որ այն ժամանակ առաքինիներ կային»։ Սակայն չարին այդ բանն Մեսրոփին, զի յայտնի էին ժողովոց կանոններն, որք ընդ նզովուք ձգէին ձեռնադրողը և ձեռնադրեալը։ Բայց երբ կը հասնին Կոստանդնուպոլիս, ամենքն աւանատես լինելով Մեսրոփոյ հրեշտակական վարուց, խոհական իմաստութեան, և հոգևորաց մեծ գիտութեան, քարոզութեանց, թարգմանութեանց, և այլ բազում վաստակոց՝ լուսաւորութեան երեք աշխարհքներուն, և նաև տոհմային ազնուականութեան<sup>2</sup>, և մանաւանդ շնորհք մը կամենալով անել Ս. Սահակայ և Հայոց, ինքնագլուխ պատրիարքն Ատտիկոս իւր իշխանական ճիսութիւնն ցոյց տալու համար, Մեսրոփին երկրորդ ծնունդն կը տնօրինէ և կը ձեռնադրէ գոնէ ի պաշտօն Սարկաւագապետութեան, եթէ չասենք ի քահանայութիւն։ Ես յօժարեալ եմ ղեռ աւելին յուսալու մի հայազգի ինքնագլուխ և Տիեզերական Պատրիարքէն. և Կորեան Եկղեսիաստիկոս բառին մէջ ուզում եմ նշմարել Քրեպիսկոպոսութեան աստիճանն և պաշտօնն առ որ կոչեց Ատտիկոս, յանձնելով նմա իւրակողման Հայոց ուսուցանելու դպրութիւն և նաև տեսչութիւն եկեղեցական բարեկարգութեան՝ իբրև զինքն ներկայացուցչի կամ տեղապահի։ Եւ ձեռնադրութեան շնորհիւն է որ նա կարող կը լինի Ս. Սահակի մահուանէն յետոյ, տեղապահութեան պաշտօնը վարել, որ բնականաբար յինքն կը պարունակէ սրբազան կարգն, գէթ աստիճան քրեպիսկոպոսութեան, զոր Վազար Փարպեցուն անգամ թըշնամիքն արժան չէին տեսած. իբրև արժանաւոր հոգևորականի մի եկեղեցական վարձատրութիւն առանց ներգործական ղերի նուիրապետական պաշտօնավարութեանց մէջ և որ կարելի էր ընդունել նաև աշխարհական իշխանութենէ<sup>3</sup>։

\* \* \*

Մեսրոփը, ինչպէս ասացինք, որոշ նպատակաւ ձեռք զարկաւ զրոց գիւտին. յետ այնորիկ իւր գաղափարը սերմանեց Հայոց, Վրաց ու Աղուանից մէջ, քարոզելով միութիւն քրիստոնեայ եղբայրութեան, համեմաշխ գործ ընդդէմ պարսկական ոտնձգութեանց՝ կապել մի դաշնակցութիւն սուրբ, պատարագմելու զինու զօրութեամբ արքայից արքայի դէմ, ինքնապաշտպանութեան, հայրենեաց և ազգի Եկեղեցւոյ ազատութեան,

1. Եւ հրամայէր զնա կապիլ զիւրով զառաջեալ... հրաման տայր և բերին զհանդերձ կղերիկոսաց զգեցուցանէին նմա... և տայր ձեռնադրել զնա ի սարկաւագութիւն. (Բուզանդ Գա. Գ. ԳԼ. Գ.)  
 2. Հին Հռովմէական կայսերական օրէնք արգելուին հարուստ ժողովրդական, ճորտ կամ գերիներն ձեռնադրելու. պէտք է յազատաց լինէր, նախապատուութիւն տալով ազնուականութեան.  
 3. Քանզի յաղագս ասելոյ զիս, թերևս արդեօք և ըստ անարժանութեան, սուրբքը և աւարատք և յամենայն մեղաց ազատ ուսուցիչքը Հայոց, թո՛ղ ի մեծամեծան ձգտեցուցանել զիս յեպիսկոպոսութիւն և կամ ի նոցին յառաջին զգաստութիւն, և կամ յեկեղեցւոյ դատաւորութիւնս՝ այլ և քորեպիսկոպոսոս ք չարար, զոր Պարսիք և արք անարժանք գործերն և այսօր, (Վազար էջ 586):



քան բեղմնաւոր եղաւ թարգմանչաց աշխատութիւնն, որ այսօր յիրաւի զարմանք կ'ազդէ մեզ այն գրքերու գումարն, որ հասեր է ձեռքերնիս Ոսկի դարէն, առանց հաշուելու յետագայ դարերու մատենագրութիւնն, որով Հայն յետ Յոյն և Հռոմէական գրականութեան, հին ազգերու ցանկի մէջ երրորդ տեղն կրնայ գրաւել: Եւ թագմանչաց գործը միայն Հայոց փառքն չի կազմեր, այլ համաշխարհի բնոյթ ունի, օգտակար ծառայութիւն մատուցանելով մարդկութեան և գիտութեան, ազատելով իսպառ եզմանէ հեղինակներ, որոց կորուստն պիտի ողբար մեր գրական դարն:

\*  
\* \*

Գեղեցիկ և ազնուական արուեստն որուն նուիրեցին զիրենք Ս. Սահակ և Ս. Մեսրոպը, երկար էր և բազմաբեղուն. իսկ իրենց թանկ կազին կեանքն սուղ. բայց այս սակաւուն մէջն իսկ երկար դարերու կեանք թողին. բնութեան հարկն պէտք էր վճարել, օրօրանէն ի քնարան մահու հիւանդութիւնն կոչեց զՍ. Սահակ. փակուեցաւ այդ գեղեցիկ օրն: Խորենացու այս հակիրճ խօսքերու մէջ ամփոփուած է ամբողջական դամբանական մը պերճախօս և վսեմ. «Որ մահականացու ծնեալ, անմահ զիրն եթող յիշատակ և այլն»:

Վեց ամիս յետոյ կը հանդիպի և փոխումն աշխարհէս Ս. Մեսրոպայ: Տեսիլ սքանչելի խաչանման, լուսաւոր շողածև ապարանքի վրայ կ'երևի յաւանդման հոգոյն, և նոյն լոյս յառաջախաղաց գնալով կ'առաջնորդէ մինչև Օշական, ուր կը հանգուցանեն պատուով Սրբոյն մարմինն: Խաչանման լոյսն ամփոփուեցաւ գերեզմանի մէջ, իբրև վկայ անբարբառ Մեսրոպայ հաւատոյ և սրբութեան. «գերազանցեալ քան զամենայն, որք զայնու ժամանակաւ էին առաքինիք»:

Սրբամարտը մարմնոյ շուրջն բարեպաշտից մրցութիւնն նախանձելի եղած է. կէսն՝ թերևս մերձաւոր ազգականք՝ կամեցած են տանել ի բնագաւառն իւր Տարօն, յԱշտից գիւղն (Հացեաց զրախան) ուր վեց ամիս առաջ հանգուցեր էին զՍ. Սահակ. իբրև առ իւր ընտանի և ազգական, որք էին ըստ բանից Նարեկացւոյն «իբրև զմի մարմին բանական ի յերկուց առ մի կերպարան լինելոյ գիմաց կենցաղավարելով... միաշունչք միակրօնք, զուգահաւանք, ի քառից աչաց առ մի և նոյն շաւիղ խորհրդոյ տեսեալք»<sup>1</sup>: Ոմանք ի նախաշակերտած Գողթն, իւր դաստակերտն, սոքա եղած են Սիւնեաց տան իշխանագունք, երախտաւորեալք սուրբ վարդապետէն: Այլք վաղարշապատ քաղաքի մէջ, սրբոց գերեզմաններու կամ դամբարաններու մէջ, ասոնք եղած են գլխաւորապէս իւր ձեռասուն աշակերտներն, ժողովուրդն և Նախարարներէն ոմանք: Բայց այդ տարածայնութեանց մէջ օգուտ քաղողն եղած է Վահան Ամատունին, որ անշուշտ Սրբոյն հանգչելու ժամանակ ներ-

1. Խոր. գիրք Գ. ԳԼ. ԿԷ.  
2. Խոր. գիրք Գ. ԳԼ. ԿԷ.  
3. Նարեկացի. «Յիշատակարան մատենագրութեան» էջ 267. Վեհափիկ 1840.

կայ գտնուել է Հմայեակ Մամիկոնէի հետ: Արդեօք ներքի չէ՞ ենթադրել որ Ս. Մեսրոպը փափաք յայտնած լինի Օշական թաղուելու, երեք տեսակէտով: Աշտիշատ կամեցած չէ, վասն զի հրաժարած էր իւր տէրութենէն և մարմնաւոր պատուէն, իբր «մոռա զժողովուրդ քո և զտուն հօր քո». — Վաղարշապատ չէ կամեցած, նախ բարեպաշտութեան համար զգուշանալով, «ի դիրս սրբոց» դրուելու, իբր անարժան. և կամ ապագային երկիւղ կրելով վրէժինդրութեան, քաղաքական ձախող ելքի մը Հայոց և Պարսից կողմի մէջ: Իսկ Օշականը Արագածու ստորոտն, Քասաղ (?) գետի ափին զուարթ բլրան մը վրայ շինուած բերդ և դաստակերտ մ'էր Ամատունի տան, առանձնականի սեփականութիւն: Հոն ուզեց հանգչիլ, ուր կը լսէր Հայաստանի մրմունջն ձորէն անցնող գետակէն, Արագածէն փչած զեփիւռն հովէր սրտի տապը, և աչքերն սևեռած յեկեղեցին կաթողիկէ, մշտամունջ աղօթէր անոր հաստատութեան համար: Եթէ այդպիսի մի պատուէրի գոյութիւնն տարակոյսի մէջ մնայ, զժուարին կը լինի հասկանալ ըստ բոյր յայնորեան իմաստի կորեան գրածն թէ Վահան և Հմայեակ միայն էին «արք պատուականք և երկիւղածք նրաւանկատարք վարդապետական (վարդապետին) հրամանաց»<sup>1</sup>: Այս հրամանը, որուն երկիւղած կատարողք են Վահան և Հմայեակ, կը վերաբերէր յատկապէս իւր թաղմանը և տեղւոյն, որով Վահան յանձն առած է հոգալ յուղարկաւորութեան ծախսն և վրան «Խորան սքանչելի կանգնել տաշածոյ վիմօք քանդակելով»<sup>2</sup>:

Իսկ Խորենացի մի այլ պատճառ կամի տալ Վահանի ազդեցութեան թէ «էր զօրաւոր հաւատովը և ճոխութեամբ մարմնաւորաւ» և Հայոց աշխարհի հազարապետութեան պաշտօն կը վարէր այն ժամանակ, որով կարողացաւ բոլոր կուսակցութիւնները լռեցնել: Սակայն բաւական պատճառ մը չէ միայնակ համոզելու միւս երկու կուսակցութիւնն որ կը բաղկանար ամբողջ ժողովրդենէ և եկեղեցական դասէն, որք գրեթէ ամբողջովին իւր ձեռասուն աշակերտքն էին<sup>3</sup>, և որոց մէջ կային Ամատունիին հաւասար և աւելի բարձր բարձով և ճոխութեամբ Նախարարներ և իշխաններ. եթէ սոքա տեղիք կու տան Վահանին, կը նշանակէ որ քան զմարմնաւոր ճոխութիւնն աւելի բան մը կար, որով նախապատուութիւն և իրաւունք Ամատունի իշխանին կը տրուի: Նախասացինք որ մի հրաման եղած է Ս. Մեսրոպայ կողմէն Օշական թաղուելու, երկրորդ Ամատունիին աներկբայապէս ազգակից եղած լինելու է Ս. Մեսրոպայ, միտ դնելով մի քանի պատմական դէպքերու որոց մէջ Ամատունի տան կատարած դերը եզակի նշանակութիւն կը ստանայ նկատմամբ Արշակունի թագաւորական և Լուսաւորչի տան:

Արտաշէս Բի՛ օրով սոքա Պարսկաստանէ գաղթին ի Հայս. թէպէտ Խորենացին իր սովորութեան համեմատ զասոնք հրէութենէ եկած համարի և Սամսոնի ցեղէն (?) և իբր Արշակ Պարթև տարած է յԱրևելք, որով երկուքն ևս ֆետուրայ ծնունդ են կամ Աբրահամու: Իսկ որով-

1. Կորիւն էջ 27.  
2. Կորիւն էջ 27.  
3. Այդ ժամանակ Հայոց բանակն Արտաշատ էր (վաղարշապատ կամ Նոր Քաղաքը) իսկ զօրավարն Վարդան, որին ոչ մի յանձնարարութիւն չի կայ...

հետև մի և նոյն կարծիքն կամ աւանդութիւնն կար Հայոց Արշակունեաց մէջ թէ նորա ևս ցեղակից են Արշակայ Մեծի, հետևապէս զԱմատունիս կ'ընդունին իբրև ազգակիցս, զիւրեր և դաստակերտներ կ'ընծայեն հանգերձ տանուտէրական պատուով, որով Ամատունեաց Տէր կոչուին: Սակայն մտածելով որ Արտաշէս Բ. Մերատայ ձեռամբ կ'ազատի Էրուանդի կոտորածէն և Պարսկաստան կ'ապաւինի, բազմաթիւ ճանօթ իշխաններու թիւի մէջ պէտք է համարել նաև զԱմատունիս, որք հիւրասիրութիւն և պաշտպանութիւն ցոյց տուած լինին մանկանն Արտաշիսի և Մերատայ. և Մանուկեան կոչումն, հարկ չի դնէր մեր վրայ ընդունել որ նա հրէութենէ ծագած է, այլ ընդհակառակն կը յօժարինք Արգարու որդոյ Մանուկայ Ստորին Հայոց և Ատորոց թագաւորական զարմէն համարել, որոնք կը թագաւորէին Եղեւիս: Որով երբ Արտաշէս թագաւորութեան կը հասնի, կը հրաւիրէ իւր բարերարներուց թագաւորազարմ մի իշխան (վահան<sup>1</sup> անուն?), կը վարձատրէ գիւղերով և դաստակերտներով: Գարձեալ խոսքով Ա.ի տան կոտորածի ժամանակ, Արտաւազդ և Օտայ Ամատունիք կը յաջողին ազատել զՏրդատը և խոսրովիդուխար և կը պահեն զԱ.ի Արշակունեաց Ոստանն և գերեզմաննոցն. մինչդեռ միւս նախարարներ գնացին առ Արտաշիւրն և ընդունեցան անոր տէրութիւնն: խոսքով Գ.ի գերութեան ժամանակ դարձեալ Պարզե Ամատունին և Շաւարշ կամսարականը փորձ կ'անեն ազատելու զթագաւորն: խոսքով կամսարականի ազգակիցն էր, և սակաւ ժամանակ անցեր էր որ Շաւարշի եղբայրն Գազաւոն<sup>2</sup> թող վաղնջուց ազգականութիւնն՝ արշակունի անուամբ խոսքովէն պատուել էր<sup>3</sup>: Իսկ Պարզե Ամատունին և իւր որդին Մանուէլ ինչ կը ստիպէր զիրենք թէ իրենց կեանքը և թէ բոլոր տոհմն մահուան վտանգին ենթարկել, զիտեմալով որ այդպիսի գործոյ մը պատիժն մահ է և ջնջումն ազգատոհմին: Առ այսպիսի գործ անձնանուէր և քաջայանդուզն՝ միայն ազգականութեան և արենակցութեան զգացմունքն կրնար զրդել: Այնպէս որ եթէ Պարզե Ամատունին մերձաւոր ազգական չլինէր խոսքովայ, Արտաշիւր չէր հրամայեր մի կերպ տիկտեսակ հանել և դնել խոսքովի աչքի առաջ, որպէս զի սաստկացնէ անոր կսկիծն և գերութեան տանջանքն<sup>5</sup>: Մանաւանդ աւելի իմն հաւաստիք Ամատունեաց ազգակից լինելուն Արշակունեաց հետ, կ'ուզեմ յիշել նաև խոսքով Բ.ի վերաբերմունքն առ վահան Ամատունին որ Մասքթաց յարձակումն քաջապէս վանելէն զկնի, խոսքով Օշական գիւղն կը պարզե Ամատունուոյն, ուր կը հաստատէ զիւր բնակութիւն: Արդ Այրարատեան աշխարհն յերկ սեփականութիւն էր Արշա-

1. Այս անուն յատուկ և սիրելի է Ամատունի տան. խոսքով Բ.ի ժամանակ վահան Ամատունին կը յաղթէ Մազքթաց: Ս. Մեքսիմի ժամանակ վահան Ամատունին է Հազարապետ. վարդանանց պատերազմի մէջ, դարձեալ վահան Ամատունին է Տանուտէրն և այլն: Գրեթէ է որ վահան և Արտաւազդ անուններն յաճախ Մամիկոնեան Տան մէջ գործածական են, անուններ որ տոհմական էին Հայոց ազնուականութեան մէջ. և սակայն Մամիկոնեանք, ազատ են հրէայ լինելու զազգաբարէն:

2. Եւ զրեզ, Գազաւոն, արին իմ և հարազատութիւն, ոչ բոտ վաղնջուց ազգականութեան, այլ բոտ արդեանս՝ որ ի մօրէ բումմէ Արշակունեայ արշակունեայ, հանեալ զրեզ ի հայրենեաց քոց կամսարականաց և ի մայրենիս քո յիմս առեալ ազգ, արշակունի անուամբ պատուեցից. (խոր. գիրք Գ. զԼ. Խը):

3. Իսկ Պարզե ի կալանս բմբնեալ, աճաւ առաջի Արտաշիւր, և տիկտեսակ գործեալ ուսուցմամբ, հրամայեաց դնել յանդիման խոսքովայ հանապազ. (խոր. գիրք Գ. զԼ. Ծ):

կունեաց, հազիւ թէ խոսքով օտարի մը տար այդ գիւղը, գեղեցիկներուց մէկն, եթէ Ամատունիք ազգակից չլինէին Արշակունեաց: Ինչպէս Տրդատ ևս պարզեց Շիրակն և Արշարունիքն իւր ազգակից կամսարականաց: Գեռ աւելին կայ. Ամատունիք ազգականութիւն ունեցած են նաև Լուսաւորչայ տանը հետ, զի Օտայ կեսարիայէն կը ճանաչէր զԳրիգոր, երբ նա իւր օտարական(?) և անձանօթ Տրդատայ ծառայութեան մէջ կը մտնէ: Յետոյ Արտաւազդ (անշուշտ Ամատունի) Փեսայ Օտայի կը մատնէ զԳրիգոր Անակի որդին լինել: մինչ Օտայ Չենոր Գլակայ մէջ, Գրիգորի աներոջ քեռի կը կոչուի: Այս խնամութիւնն օտարութեան մէջ, արենակցական կապերով միացուցեր էր այս երկու տներն. անոր համար զուցէ Մեսրոփը, աւելի հակեալ էր առ Ամատունիս, որոնք ինչպէս յիշեցինք անձնանուէր եղած են առ Արշակունիս և առ Տունն Գրիգորի, որով իբրև առ առաւել ընտանի՝ կը յայտնէ իւր փափաքն թաղուելու յՕշական:

\*  
\*  
\*

Մեսրոփը մեռաւ այնպիսի ժամանակի մէջ, երբ արդէն գործը հաստատուն հիմունքներ լըրայ դրուած էր, և երկիւղ չկար այլ ևս մնասուելու ժամանակի հարուածներէն: Հոգին լուսաւոր նշանի շողի հետ չուելով յերկինս, սրովբէատես աչօք Մասեաց սրբամարութեան գազաթէն դիտեց իւր քառասնամեայ երկար տընութեանց, արտասուաց և հեծեծանաց բեղմնաւոր արդիւնքն. աչեց Հայաստանի դաւարագեղ հասկներն և բանաւոր անդատաններն, մեղուաջան մշակներն, զննեց մտքի տիրապետութեան յաղթանակն. զգաց որ իւր կանգնած ամբարտակն ոչ բռնութիւն, ոչ ժամանակն չպիտի կարենան կործանել, այլ զուգահաւասար իւր նուիրական Մասեաց, վսեմ և խրոխտ զուխն և կերպարանքն ցոյց պիտի տայ գալիք ազգերու. դա Հայի կեանքն է որ անոր հետ պիտի ապրի: Եկեղեցւոյ սաղմոսաց մրմունջն պիտի խառնուի դրախտի գետերու մունչինի հետ, արբուցանելու Հայոց հոգին. որով միշտ նորոգուի և վերածնանի ժամանակի հնութեան մէջ: Գիրք և գրականութիւն եղաւ մարմնացումն հայութեան, ազգային կեանքն խոտացաւ մագաղաթներու ծալքերու մէջ. քարեր պիտի մաշին, պարիսպներ կործանին, քաղաքներ հետախաղաղ պիտի ծածկուին հողի տակ, սակայն մեր նախնեաց մատենագրութիւնն պիտի մնայ կոթող մը անցեալ հայութեան, յոյս մը ապագայ սերնդեան, միջոց մը իրեն գոյութիւնն պաշտպանելու և ոյժ մը վերանորոգութեան և վերածնութեան: Միայն Մեսրոփը անունն ասելն, կը բովանդակէ յինքեան քառասուն դարուց պատկերն, որոյ առջև դարեր յարգանքով կը խոնարհեցնեն իրենց զուխը:

Փե.դ զարաշըջանի կատարումն՝ համօրէն գրական աշխարհի յարգանաց տրիտուրն էր որ Մեսրոփայ անմահ ճակատին լուսասփիւռ մը կ'աւելցնէ: Մենք ալ առաջիկայ գրութեամբ կամեցանք մեր նաքարակիտն ձգել հայրենի գանձանակին մէջ, ուզելով պատուել անոր ծագումն և ծնունդն, ջանացինք ցուցանել որ թագաւորական և Հայրասպետական տներու պատուաստէն բողբոջած եզական ընձիւղ մ'էր, և

անով կարողացաւ գործել և ի կատար ածել գերմարդկային գործը, գրոց գիւտն Հայոց, Վրաց և Աղուանից, և Հայկական Մատենագրութեան սկզբնաւորութիւնն և յառաջադիմութիւնն, անով յառաջ եկած խմորումն երեք դրացի քրիստոնեայ ազգերու, և այն ևս այնքան սուղ ժամանակի մէջ:

Արդարև ապշեցուցիչ է մտածելն անգամ թէ՛ մի մարդ որ երեսուն և հինգ տարիներ հանդիսացաւ իբրև համաշխարհի ախոյեան, մի գերբնական էակ, մի ստեղծագործական ոյժ, ապրեցաւ և գործեց և կերպարանափոխեց ներկայ և գալիք ժամանակները, վերածնանելով մի ողջոյն ազգ բարբարոսութեան խաւարէն, լուսոյ, յառաջադիմութեան, քաղաքակրթութեան շաւիղի մէջ դնելով, տպաւորելով մի այնպիսի անջնջելի կնիք իւր ժամանակին, որ Հայն Ոսկի դար պիտի կոչէր, հազիւ գիտենք թէ Հացեաց գիւղէն էր և երանելի Վարդանի որդին: Մեսրոպի գրական և քարոզչական աշխարհակալութեան առջև չեմ ասեր ժողովուրդ, շինականք և քաղաքացիք, համակրողների կամ աշակերտների մի խումբ, այլ Հայաստանի և օտար աշխարհաց ամենաբարձր ազնուականութիւնն, ազատք, իշխանագունք<sup>1</sup>, թագաւորք<sup>2</sup> և կայսերք<sup>3</sup>, Եպիսկոպոսոնք և Հայրապետք<sup>4</sup> ելևելս առնեն իրենց յարգանաց և պատուասիրութեանց ցոյցերու մէջ, մանաւանդ Բիւզանդիոնի գոռոզ արքունիքում. վերջապէս այն սերտ, համերաշխ և անբաժան զուգակցութիւնն, գործակցութիւնն, աննախանձ փառաբանութիւնն առ անձն Մեսրոպայ ի կողմանէ Ս. Սահակայ և Վառձապուն թագաւորին ապացոյց մ'են նորա բարձր և ազնուական ծագումին. բաւական են փարատելու ամեն տարակոյս և հաւաստելու գրեթէ անվրէպ կերպով, Մեսրոպայ մեծ նախարարական Վահունեաց ցեղէն սիրելուն, Արշակունի թագաւորական տան ազգակցութեան և Ս. Գրիգորի ազգի հետ արենակցութեան: Այլազգ այդ մեծ մարդու կեանքն որ մինչև ցարդ իբրև մի առեղծուած հասեր է մեզի դարուց ի դարս, անհասանելի և անբացատրելի կը մնայ թէ ինչպէս «մի համեստ գիւղացի» հակառակ դարու ոգւոյն, քաղաքական զուտ ազնուապետական դասակարգին՝ վարած լինի մեծամեծ և պատուաւոր պաշտօններ թագաւորաց արքունիքում, զինուորական արուեստով սիրելի եղած իւր զինուորաց<sup>5</sup>, յետոյ մերկացած «գիշխանակիր ցանկութիւնս», այսինքն իշխանական մարմնական պատիւն որ էր Տանուտէրականն. և ուր որ կը ներկայանայ թէ՛ Հայոց աշխարհի մէջ և թէ՛ օտար արքունիքներում իբրև ծանօթ, իբրև համահաւասար պատուով և աստիճանով թագաւորավայել ընդունելութիւն կը գտնէ. ի նկատի առնելով որ եկեղեցական դասակարգի մէջ բարձր աստիճան չունէր, ոչ եպիսկոպոսական (և թերևս նաև քահանայականն), մինչդեռ ամենքն թագաւոր և Հայրապետ մեծագոյն պատիւներ կը շնայէին իբրև ազնուազգիի մը, իբրև առ Ուսուցող և Վարդապետ Հայոց

1. Կորին էջ 14:  
2. Կորին էջ 15:  
3. Կոր. էջ 17:  
4. Կոր. էջ 18:  
5. Սահայն այբուօճին Հայոց բովանդակ է ձեռն նախարարացմ առաջնորդէր ի պատե-  
րազմես (Եղեւէ էջ 11):

ազգին, Հայ դպրութեան: Մենք ինքնին կը կանխենք մեր ուսումնասիրութեան նորատի լինելը խոստովանելու, գուցէ և առանց խոր հիմունքներ ձգելու քննադատական հողի վրայ. սակայն ապագայի քննադատութիւնն և կամ մեղադրանքն չկասեցուց զմեզ՝ ինչպէս ասացինք, ամուլ քարեր իրար շփելու, յորմէ ելած աղօտ լոյսն գուցէ ծագէ նշոյլ մի հաւաստի Մեսրոպայ ծագման, ազգի և տոհմի վրայ և պատճառ տայ իմաստնագունից հասնելու լաւագոյն եզրակացութեանց<sup>1</sup>:

Երևելի աշխարհիս տիեզերական յօրինուածի մէջ, ուսումներ տեղի չեն ունեցած, բնութիւնն Աստուծոյ ձեռքէն ելած կանոնաւոր կերպով ընթացք է անկատարէն դէպ ի կատարեալն գնալով: Այսպէս նաև բանաւոր աշխարհի մէջ ուսումներ չեն տեսնուած, այլ քաղաքակրթութիւնն իւր զարգացման աստիճաններէն պէտք է անցնի կատարելութեան հասնելու համար. մեծ մարդ յանկարծ չի ծնանիր, այլ հարկ է որ մի ժողովրդեան և տոհմի երակներու մէջէն սողան քաղաքակրթութեան սերմունք դարերու ընթացքի մէջ և այն ատեն կարելի է սպասել մեծ ինչքի, տաղանդի և հանճարի տէր մարդկանց: Ոչ մի Սողոն, ոչ մի Նումա, ոչ մի Պերիկլէս, ոչ մի Օգոստոս կամ Նապոլէոն, Հօթենդոսներ կամ Զուլուներ չեն կարող ծնանել: Այսպէս մեր հինգերորդ դարն չէր կարող ծնանել մի Մեսրոպ, եթէ ասոր նախահայրերու երակներու մէջ խաղացած չլինէր դարերէ ի վեր քաղաքակրթութեան աւիշն: Մեսրոպ եղաւ լուսափայլ աստղ մի պերճապայծառ համաստեղութեանն որ դարերու ընթացքի մէջ իւր անշէջ վառարանէն սփռեր է Ասքանագեան ազգին և Հայաստան աշխարհի վրայ կրօնքի և գիտութեան ճառագայթներն: Կրօնք և գիտութիւն թէ՛ հեթանոս և թէ՛ քրիստոնեայ դարաշրջաններու մէջ, ապրել, սնել և աճել են քաջատոհմիկ Վահունեաց ազգի մէջ, որ յանյիշատակ դարերէ ի վեր Աշտիշատու հրաշագեղ սարաւանդակի վրայից և ակնապարար Հացեաց դրախտի ձորակից և հովասուն պուրակից ջերմացուցել, լուսաւորել և ապրեցուցել է Հայաստանի սիրտն. պահել, պաշտպանել և ծաղկեցուցել են կրօնքն, սիրել և մշակել և ուսուցել են գիտութիւնն, որոց փառագագաթն կը հանդիսանայ իրենց անզուգական զաւակն Մեսրոպ, որ իրաւամբ կրնայ կոչուիլ Փրկիչ<sup>2</sup> և բարերար Հայ ազգի:

1. Feci quod potui, faciant meliora potentes. Աբարի որչափ կարացի, թող առնեն  
լաւագոյն որք կարողն են:  
2. Կարգեալ այնուհետև Փրկչին առաջնորդութեամբ զգիր գրենոյն հայերէնի և հելլենացի  
ուղղեալ յօրինուածս: (Ղազ. էջ 42):





